Աշոտ Գալստյան
Թամարա Թովմասյան

Մայրենի

5

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 5

Երևան
2023

Խմբագիր՝ Գայանե Խալաթյան
Նկարիչ՝ Քարոլին Ռոստամի

Գալստյան Աշոտ, Թովմասյան Թամարա
Մայրենի, 5-րդ դասարանի դասագիրք / Ա. Գալստյան, Թ. Թովմասյան, Էդիթ Պրինտ, 2023, 176 էջ:

© Ա. Գալստյան, Թ. Թովմասյան
© Էդիթ Պրինտ



Սիրելի՛ բարեկամ

Տարրական դասարաններից քեզ ծանոթ է «Մայրենին»՝ իբրև հայոց (մայրենի) լեզվի և գրականության միասնացված առարկա, որի ընթացքում ուսումնասիրել ես գրական և ոչ գրական տեքստեր, յուրացրել ես լեզվական և գրական տարրական գիտելիքներ՝ ձեռք բերելով հաղորդակցական կարողություններ:

Դու արդեն մեծացել ես մեկ տարով: Այս տարի քայլելու ես մայրենիի առավել հետաքրքրական աշխարհում՝ ինքնուրույն ձեռք բերելով շատ արժեքներ: Դասագրքի նյութերն ուսումնասիրելով՝ քեզ մոտ ձևավորվելու է որոշակի վերաբերմունք աշխարհի, մարդկանց ու բնության հանդեպ, զարգանալու է քո ստեղծարար կարողությունը:

«Մայրենի 5» դասագիրքը բաղկացած է 4 թեմատիկ խմբից՝ «Լինում է, չի լինում», «Առակդ ի՞նչ կցուցանե», «Ականջ դնենք հետաքրքիր պատմությունների», «Եվ այսպես հյուսվում է իմ երգը», բացատրական բառարանից, առարկայացանկից և անվանացանկից:

Ողջ տարվա ընթացքում դու կուսումնասիրես հայ դասական և ժամանակակից գրողների բնագրեր, ինչպես նաև տարբեր ժողովուրդների ստեղծագործության նմուշներ: Յուրաքնչյուր դասանյութի կցված են «Բառային աշխատանք» և «Տեքստային աշխատանք» բաժինները: Դրանց հաջորդում են լեզվական նյութերը՝ համապատասխան առաջադրանքներով, որոնք կուսումնասիրես և կամրապնդես բնագրի շուրջ տարվող աշխատանքներում: Կգտնես բնագրի բանալի բառերն ու նախադասությունները: Տարբեր գծակարգերի միջոցով կխմբավորես ստացած գիտելիքներդ:

Առաջադրանքներում բանավոր և գրավոր կշարադրես մտքերդ, հանդես կգաս ընկերներիդ առջև, կվիճես ու կհաղթես, կլուծես խաչբառեր ու գլուխկոտրուկներ:

Այս ամենի արդյունքում ձեռք կբերես բազմաթիվ կարողություններ:

Դու կօգտվես դասագրքի բառարանից՝ գտնելու տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունները, կսովորես ճիշտ գրելու և ճիշտ խոսելու կանոնները:

QR ծածկագրի միջոցով կուսումնասիրես լրացուցիչ նյութեր, գրողների կենսագրություններ, կդիտես մուլտֆիլմեր, կլսես բնագրերի համար գրված մեղեդիներ, որոնք քեզ շատ դուր կգան: Կլուծես էլեկտրոնային վարժություններ, և ինքդ էլ կստուգես պատասխանը:

Դասագիրքդ ունի խորհրդանիշներ:

Ընթերցանության նյութ

Լեզվական նյութ

Բառային աշխատանք

Տեքստային աշխատանք

Առաջադրանքներ

QR ծածկագիր

Ամո՛ւր քայլիր «Մայրենիի» զարմանահրաշ աշխարհում և ինքնուրո՛ւյն ձեռք բեր անհրաժեշտ գիտելիքներ, զարգացրո՛ւ կարողություններդ ու հմտություններդ, ձևավորի՛ր արժեքային համակարգ, ինչպես նաև կայուն դիքորոշո՛ւմ դրսևորիր:



Հավատա՛ քո ուժերին: Բարի՛ երթ:

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ



Եվ տքնեց հույսով նա գիշերուզօր
Եդեսիա, Ամիդ, հեռու Սամոսատ.
Եվ երեսունվեց երկաթե զինվոր
Իր ձեռքով հղկեց ու շարեց հատ–հատ:

Սուրեն Մուրադյան

Այս օտար աշխարհի ցրտերում
Եկ սիրենք մեր լեզուն ջերմորեն,
Եկ վառենք ու վառվենք
Հայերեն:

Խաչիկ Դաշտենց



Հայոց աշխարհ, հայոց երկիր, հայոց հող,
Լայն աշխարհում քո գրկի մեջ ապրեմ թող:

Միլվա Կապուտիկյան

Հայաստա՛ն անուն,
Դու ութ հնչյուն,
Ութ եղբայրների համաստեղություն:

Էդվարդ Միլիտոնյան

Ի՞նչ են քեզ համար Հայաստանը և մայրենի լեզուն:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՌԵՐԻ ԾՆՈՒՆԴԸ



Հայկական գիրը հին է աշխարհում և ունի տասնվեց դարի պատմություն: Հայաստան աշխարհի համար մեր թվարկության չորրորդ դարը բուռն տեղաշարժերով լի ժամանակաշրջան էր: Չնայած հարյուր տարի էր անցել քրիստոնեության ընդունումից, սակայն այն դեռևս տիրապետող կրոն չէր դարձել: Եկեղեցական արարողությունները կատարվում էին հունարեն կամ ասորերեն: Ժամանակը, սակայն, ծնեց մի հզոր անհատի, որն իր հանճարի ուժով կանխատեսեց իր ժողովրդի ճակատագիրը:

Այդ անձը Մեսրոպ Մաշտոցն էր:

Նա ծնվել է 362 թվականին Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Մաշտոցը ստացել է իր ժամանակի համար լավ կրթություն նախ ծննդավայրում, ապա՝ Այրարատ գավառում: Իբրև դպիր ծառայում է հայոց Խոսրով թագավորի արքունիքում, ստանում զինվորական կոչում, ապա զբաղվում քարոզչությամբ:

Երկար մտածումներից հետո Մաշտոցը գիտակցում է, որ անհրաժեշտ է սեփական գիր ու գրականություն ստեղծել: Նա այդ մասին հայտնում է Սահակ Պարթև կաթողիկոսին, որը, ջերմորեն պաշտպանելով նրա գաղափարը, դառնում է Մեսրոպի աջակիցն ու հովանավորը: Իր պատրաստակամությունն է հայտնում նաև Վռամշապուհ արքան: Նա տեղեկացնում է, որ Դանիել անունով ասորի մի եպիսկոպոսի մոտ կան հայկական նշանագրեր: Բերում են այդ գրերը և սկսում ուսուցանել դրանցով: Որոշ ժամանակ հետո Մաշտոցը պարզում է, որ դանիելյան նշանագրերը չեն համապատասխանում հայոց լեզվի հնչյունական համակարգին, և որոշում է ստեղծել հայերեն գրեր:

Իր հետ վերցնելով մի խումբ աշակերտների՝ Մաշտոցը մեկնում է արտասահման, լինում ժամանակի մշակույթի կենտրոններում՝

Ամիդում և Եդեսիայում: Աշակերտների մի մասին տալիս է ասորական, մյուս մասին՝ հունական կրթության: Մաշտոցը ծանոթանում է ժամանակի հայտնի այբուբեններին ու գրերին, որոշում հայերենի հնչյունական համակարգը: Եդեսիայում էլ 405 թ. ստեղծում է հայերեն տառերը:

Այնուհետև Մաշտոցը մեկնում է Սամոսատ քաղաք, որտեղ հույն քերական և գեղագիր Հռոփանոսի օգնությամբ համակարգում է հայոց տառերը: Ձեռնարկում է Աստվածաշնչի «Սողոմոնի առակները» գրքի թարգմանությունը: Մաշտոցի կենսագիր Կորյունի վկայությամբ՝ հայերեն գրված առաջին նախադասությունն է՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (աշխարհաբար՝ Ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը):

Հայրենիքում Մաշտոցին և իր աշակերտներին դիմավորում են մեծ ոգևորությամբ: Մի քանի օր շարունակ տոնախմբություններ են կատարվում, որից հետո սկսվում է կրթական-թարգմանչական աշխատանքը: Մաշտոցը Ամարասի վանքում բացում է առաջին դպրոցը:

Մեսրոպ Մաշտոցը մահացել է 440 թ. և թաղված է Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՌԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԹՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Ա – այբ – 1	**Ժ** – ժե – 10	**Ճ** – ճե – 100	**Ռ** – ռա – 1000
Բ – բեն – 2	**Ի** – ինի – 20	**Մ** – մեն – 200	**Ս** – սե – 2000
Գ – գիմ – 3	**Լ** – լյուն – 30	**Յ** – հի – 300	**Վ** – վեվ – 3000
Դ – դա – 4	**Խ** – խե – 40	**Ն** – նու – 400	**Տ** – տյուն – 4000
Ե – եչ – 5	**Ծ** – ծա – 50	**Շ** – շա – 500	**Ր** – րե – 5000
Զ – զա – 6	**Կ** – կեն – 60	**Ո** – ո – 600	**Ց** – ցո – 6000
Է – է – 7	**Հ** – հո – 70	**Չ** – չա – 700	**Ւ** – վյուն – 7000
Ը – ըթ – 8	**Ձ** – ձա – 80	**Պ** – պե – 800	**Փ** – փյուր – 8000
Թ – թո – 9	**Ղ** – ղատ – 90	**Ջ** – ջե – 900	**Ք** – քե – 9000

Մեսրոպյան այբուբենի մեջ կատարվել են հետևյալ փոփոխություններ. ու տառը ստեղծվել է V դարում որպես ո և ւ տառերի կապակցություն: XII դարում հայերենի այբուբենի մեջ մտան օ, ֆ տառերը: 1922 թ. արևելահայերենի այբուբենից հանվեց ւ տառը:

Առաջադրանքներ

1. Մեսրոպ Մաշտոցին կոչել են հայերենի առաջին ուսուցիչ: Մեկնաբանի՛ր այս բնութագրումը:

2. 5-րդ դարի պատմիչ Մովսես Խորենացուն կոչել են Քերթողահայր: Դասագրքի բառարանում գտի՛ր բառի բացատրությունը և մեկնաբանի՛ր:

3. Կարդա՛ և նշի՛ր՝ որ նախադասության մեջ կա թվային արժեքի սխալ գրություն:

ա) Մեսրոպ Մաշտոցը ծնվել է ՅԿԲ թվականին:

բ) Մենք ապրում ենք ԲԱ դարում:

գ) Ե դարը կոչվել է Ոսկեդար:

4. Գրի՛ր բառեր հայոց այբուբենի տառերով:

Նմուշ՝ այբբենարան:

5. Տրված բառերը դասավորի՛ր այբբենական կարգով:

Երեք, կարի, աղջիկ, դիվահար, հեշտ, դեղ, գլուխ, առջև, յոթ, կարաս, ոսկի, մարդ, ջրհոր, չար, բարի, լսել, խոսակցություն, ճանապարհորդ, հանել, հոր, թագավոր:

6. Շախմատի ձիու քայլերով կարդա՛ ծածկագիրը:

Կ	Հ	Ա	Շ
Օ	Ա	Ի	Ս
Ու	Վ	Տ	Ր
Մ	Գ	Լ	Յ
	Ո	Ք	Ե

«☐☐☐☐ ☐☐☐☐☐☐☐»

(Կորյունի մատյանի անվանումը)

Կենսագրություն

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

(1919–2006)

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Այս գարնան հետ, այս ծաղկունքի,
Այս թռչնակի, այս առվակի,
Հետն այս երգի ու զարթոնքի
Բացվեց լեզո՛ւն իմ մանկիկի:
Ու թոթովեց բառ մի անգին
Հայկյան լեզվից մեր սրբազան,
Ասես մասունք հաղորդության
Դիպավ մանկանս շրթունքին...
– Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես
Սիրող քո մոր խո՛սքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզո՛ւն հազարագանձ:
Կտրել է նա հանց աստղալույս
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի,
Ու Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել երթը մեր անաղարտ...
Նրանով է մրմնջացել
Հայ պանդուխտը վերքն իր սրտի,
Նրանով է որորտացել
Կռվի երգն իմ ժողովրդի,
Նրանով է մայրս ջահել
Ինձ օրորոց դրել մի օր,
Հիմա եկել, քեզ է հասել
Նրա կարկաչը դարավոր...
Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, իմ սիրասո՛ւն,
Թող մանկանա քո շուրթերին
Մեր ալեհեր հայոց լեզուն...
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ
Արարատի սուրբ ձյունի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ
Քո պապերի աճյունի պես,
Ու ոսոխի զարկիցը սև
Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,
Ինչպես մո՛ր կպաշտպանես,
Թե սո՛ւր քաշեն մորդ վրա,
Ու տե՛ս, որդի՛ս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս:

Բառային աշխատանք

1. Բացատրի՛ր՝ ինչով են նման *թռչնակ*, *առվակ*, *մանկիկ* բառերը:
2. Ինչո՞ւ է բանաստեղծուհին *հանձարը* և *ձյունը* սուրբ անվանել: Էլ ո՞ւմ կամ ի՞նչն ես սուրբ համարում:
3. Կարդա՛ և բանաստեղծությունից դո՛ւրս գրիր հայոց լեզուն բնութագրող բառեր:
4. *Հազարագանձ* և *ապրղալույս* բառերի արմատներով նոր բառեր կազմիր:
5. *Գարուն*, *զարթոնք*, *ծաղկունք* բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:
6. *Հազարագանձ*, *ապրղալույս*, *խռովահույզ* բառերը բաժանի՛ր բաղադրիչների:
7. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը. տրված բառերով շարադրա՛նք կազմիր:

Տեքստային աշխատանք

1. Մեկնաբանի՛ր՝ ինչ է քեզ համար խոսքը: Մտածի՛ր՝ ինչու է բանաստեղծությունը վերնագրվել «Խոսք իմ որդուն»:
2. Գտի՛ր բանաստեղծության հիմնական միտքն արտահայտող բառը կամ բառերը: Հիմնավորի՛ր:
3. Պարզի՛ր՝ հեղինակի պատգամի նպատակը որդուն: Գտի՛ր և մեկնաբանելով կարդա՛ այդ տողերը:
4. Բացատրի՛ր՝ ինչու է մեր լեզուն հայկյան: Էլ ի՞նչը կարող է լինել հայկյան:
5. Բանաստեղծությունը բաժանի՛ր քառատողերի և յուրաքանչյուրը վերնագրի՛ր բովանդակությանը համապատասխան:
6. Գրավոր կամ բանավոր շարադրի՛ր, թե ծնողներդ երբևէ ինչ կարևոր բան են հանձնարարել քեզ:
7. Հաղորդո՛ւմ պատրաստեք Մեսրոպ Մաշտոցի մասին (խմբային աշխատանք):
8. Այցելե՛ք Ս. Կապուտիկյանի տուն-թանգարան և հաղորդո՛ւմ պատրաստեք (խմբային աշխատանք):

ԼԻՆՈՒՄ Է, ՉԻ ԼԻՆՈՒՄ

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Միրելի՛ բարեկամ, դասագրքի «Լինում է, չի լինում» բաժնում ուսումնասիրվող թեմաները կնպաստեն քո՝ ընթերցելու, հեքիաթի տեքստը հասկանալու, հիմնական գաղափարը մատնանշելու, հեքիաթին բնորոշ առանձնահատկությունները և խորհրդանիշները ըմբռնելու կարողություններ ձևավորելուն: Միաժամանակ կնպաստեն քո բառապաշարը հարստացնելուն, կապակցված խոսք կազմելու կարողությունները զարգացնելուն, որոշակի վերաբերմունք և արժեքային համակարգ ձևավորելուն, ինչպես նաև կխթանեն քո հաղորդակցական կարողությունների զարգացումը և ստեղծարարությունը:

ԻՆՉ Է ՀԵՔԻԱԹԸ

Հեքիաթը բանահյուսության ժանրերից է: Հեքիաթի հեղինակը ժողովուրդն է, դրա համար էլ այն կոչվում է **ժողովրդական**: Ժողովրդական հեքիաթները կարող են մշակվել առանձին հեղինակների կողմից: Ոմանք նաև ինքնուրույն հեքիաթներ են գրում: Այդ տեսակի հեքիաթները կոչվում են **հեղինակային**:

Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունը, բարբառային բառերը և իմաստալից խոսքերը: Նրանցում հաճախ իրար են խառնված **իրականն** ու **երևակայականը**:

Հեքիաթները հիմնականում արձակ տեքստեր են: Պատահում են նաև չափածո հեքիաթներ:

Դրանց մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը, ինչպես՝ «Լինում է, չի լինում», «Կար-չկար», «Ժուկով-ժամանակով», «Ժամանակով», «Չգիտեմ՝ ո՛ր երկրում, ո՛ր թագավորության մեջ»:

Վերջաբանի համար էլ հատուկ արտահայտություններ կան, ինչպես՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին»:

Հեքիաթները բաժանվում են երեք մեծ խմբի՝ **հրաշապատում** կամ **կախարդական**, **կենդանական** և **իրապատում**:

ՈՍԿԻ ԱՐՏ

(հայկական ժողովրդական հեքիաթ)

Էս հեքիաթը ես մեր մեծերից եմ լսել, սրանք էլ իրենց պապերից, պապերն էլ, հայտնի բան է, իրենց մեծերից:

Պռոշ թագավորի օրոք երկու հարևան են լինում: Նրանցից մեկը մյուսի արտը փոխ է վերցնում, գարնանը եզները լծում է, գնում՝ արտը հերկելու: Նրա արորի խոփը մի պղնձե կաթսայի է դեմ առնում: Հանում է, տեսնում՝ մեջը լիքը ոսկի: Մարդը, եզները թողած, վազում է հարևանի մոտ:

– Աչքդ լո՛ւյս լինի, մի պղինձ ոսկի դուրս եկավ հողի տակից, արի՛ վերցրու:

– Չէ՛,– ասում է հարևանը,– արտը քեզ փոխ եմ տվել, քո խոփն է հանել, քո ղսմաթն է:

Հարևանների միջև լեզվակռիվ է սկսվում, ելք չեն գտնում, գնում են թագավորի մոտ: Թագավորն էդ օրը շատ տխուր է լինում: Դրանց տեսնում է, գլուխը բարձրացնում, հարցնում է.

– Ի՞նչ կա:

– Ի՞նչ պիտի լինի, թագավո՛րն ապրած կենա,– ասում է ոսկին հանողը,– ես էս մարդու արտը փոխ եմ առել: Գարուն է, ելա հերկելու, իմ արորի խոփը դրա արտից մի պղինձ ոսկի հանեց, ասում եմ՝ արի՛, քո ոսկին վերցրո՛ւ, ասում է՝ չէ՛. արտը փոխ եմ տվել, քո խոփն է հանել, քո ղսմաթն է: Մնացել եմ շիվար. վեճուկռվի մեջ ենք ընկել, ճար չկա: Մեզ խե՛լք սովորեցրու:

– Քանի՞ տարով ես արտը փոխ վերցրել,– հարցնում է թագավորը:

– Մեկ տարով,– ասում է ոսկին հանողը:

Թագավորը դառնում է մյուս հարևանին.

– Դու ինչո՞ւ ոսկին չես ուզում:

– Թագավո՛րն ապրած կենա, ողորմի՞ քո անցավորներին, ասեմ, թե ինչու չեմ վերցնում ոսկին: Իմ հերը մեռնելիս ինձ կանչեց, պատվիրեց. «Տե՛ս, մեռնում եմ, ժամանակ կգա՝ դու էլ կմեռնես: Ի՞նչ կանես, չես անի՝ չգիտեմ, բայց մի բան կա, որ ասածիս պես կանես. աչք չտնկես ուրիշի ունեցվածքին: Լա՛ռ, մի բուռ հող, մի կտոր տախտակ, մի չափ

էլ կտավ. էս է մարդու բաժինը: Բարի անունն ավելի երկար է ապրում, քան չար անունը»:

Էնպես որ, թագավո՛րն ապրած կենա, ճիշտ է, հողն իմն է, բայց աշխատանքն իմ հարևանինն է: Էդ պատճառով էլ չեմ վերցնում ոսկին: Իմ հոր պատվիրանը ես չեմ մոռանա:

Թագավորը մի պահ ընկնում է մտքի մեջ, հետո ասում է.

– Ոսկի՛ գտնող, դու էլ ես ճիշտ, էն էլ է ճիշտ: Իմ կարծ խելքով էնպես պիտի անենք, որ ո՛չ դու դժգոհ մնաս, ո՛չ քո հարևանը: Դու ի՞նչ ժառանգ ունես:

– Մինուճար մի տղա, թագավո՛րն ապրած կենա,– ասում է ոսկին հանողը:

– Դո՞ւ, արդա՛ր դրկից:

– Ես էլ մի աղջիկ:



– Աստված որ ձեզ օգնեց, թագավորն ո՞վ է: Քանի որ եկել եք իմ ոտքը, ես ոչ թե իմ, այլ Աստծո վճիռը կասեմ. կռիվը մի կո՛ղմ թողեք, գնացեք ձեր զավակներին իրար հետ պսակե՛ք, ոսկին էլ տվե՛ք նրանց, թող գնան, իրենց քեֆին ապրեն, ձեզ էլ օրհնանք ու ողորմի տան: Թող ոտքները քարին չդիպչի: Հը՞, ի՞նչ կասեք:

– Ես համաձայն եմ,– ասում է ոսկին հանողը:

– Ես էլ,– ասում է մյուս հարևանը:

Թագավորը կանչում է իր մարդկանց, հարևանների պատմությունը պատմում, բոլորն էլ նրա հետ ծիծաղում, ուրախանում են, դրկիցներին առոք-փառոք ճանապարհում: Հարևանները հետ են դառնում, իրենց զավակներին պսակում, երեք օր, երեք գիշեր հարսանիք են անում: Թե մինչև էդ իրար հարևան էին, դառնում են եղբայր, արտի անունն էլ դնում են Ոսկի արտ:

Բառային աշխատանք

1. Տեքստից դուրս գրիր բարբառային բառերը և փորձիր գրել դրանց գրական տարբերակները:
2. Գտիր *պատվիրան* բառի բացատրությունը: Մանուկների Աստվածաշնչից սովորիր Աստծու պատվիրանները:
3. Տեքստում գտիր *հարևան*, *ամուսնացնել*, *խնջույք* բառերի հոմանիշները:
4. Հեքիաթից դուրս գրիր *կոիվ* արմատով երկու բառ: Այդ բառերի արմատներով 2-ական նոր բառ կազմիր:
5. Դուրս գրիր հեքիաթում տեղ գտած օրհնանքները: Ինչ օրհնանքներ ես լսել մեծերից: Թվարկիր մի քանիսը:
6. Գտիր հեքիաթում գործածված դիմելաձևը և բացատրիր կիրառությունը:
7. Բառարանում գտիր կարմիր գրված բառերի բացատրությունը:

Տեքստային աշխատանք

1. Կազմիր տեքստի պլանը պատմողական կամ հարցական նախադասություններով: Վերաշարադրիր հեքիաթի բովանդակությունը:
2. Գրավոր վերաշարադրիր հեքիաթը հերոսների անունից:
3. Գտիր տեքստի բանալի բառերը, նախադասությունները. բացատրիր ընտրությունդ:
4. Մեկնաբանիր հայկական ժողովրդական հեքիաթին բնորոշ բառերի, արտահայտությունների կիրառությունը:
5. Գրավոր բնութագրիր քեզ դուր եկած կերպարը (կերպարները):
6. Հեքիաթի ո՞ր հերոսի բացատրությունն ես ճիշտ համարում:
7. Մեկնաբանիր հարևանի խոսքը: Համաձա՞յն ես նրա հետ:
8. Ուրիշ ինչ ավարտ կմտածեիր հեքիաթի համար:
9. Միմյանց պատմեք ձեր ընտանիքների կամ հարևանների մասին: Համեմատեք այդ պատմությունները հեքիաթի բովանդակության հետ (խմբային աշխատանք):
10. Գտիր հեքիաթի բովանդակությանը համապատասխան մեղեդի, նկարազարդումներ արա, ծեփիր:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Լեզվական շփումը տեղի է ունենում երկու կամ ավելի մարդկանց միջև, որոնք հաղորդակցվում են նախադասություններով: **Նախադասությունը բառ է կամ բառերի խումբ, որն իմաստ է արտահայտում և ունի հնչերանգ:** Խոսքի իրավիճակից և հաղորդակցական բնույթից ելնելով՝ նախադասությունները ըստ կազմության կարող են լինել ինչպես պարզ, այնպես էլ բարդ, օրինակ՝ Արևը ծագեց (պարզ): Արևը ծագեց, ու թռչուններն ուրախ ծլվլացին (բարդ):

Առաջադրանքներ

1. Բառերը (բառաձևերը) ճի՛շտ դասավորիր և վերականգնի՛ր նախադասությունները:

ա) չտնկես ունեցվածքին Ուրիշի աչք:
բ) ես հոր չեմ մոռանա Իմ պատվիրանը:
գ) ձեր հետ պսակե՛ք Գնացեք զավակներին իրար:
դ) արտի էլ դնում են Ոսկի արտ անունն:

2. Տրված մասերը միացնելով՝ ամբողջացրո՛ւ նախադասությունները:

ա) Աչքդ լույս լինի,	ա) ելք չեն գտնում:
բ) Հարևանների միջև լեզվակռիվ է սկսվում,	բ) մի պղինձ ոսկի դուրս եկավ:
գ) Բարի անունն ավելի երկար է ապրում,	գ) հարսանիք են անում:
դ) Երեք օր, երեք գիշեր	դ) քան չար անունը:

3. *Թագավոր*, *ոսկի*, *հարևան* բառերով նախադասությունն՝ կազմիր:

4. Հետևյալ օրհնանքներից ո՞րն է համապատասխանում հեքիաթի բովանդակությանը:

Կյանքդ ջրի նման երկարի:
Ուր գնաս, կանաչ բուսնի:
Թող բարի անունդ երկար հիշվի:

5. Ներկայացրու և հիմնավորիր զգացածդ հեքիաթի վերաբերյալ:

1. Ինչ զգացում ապրեցիր հեքիաթն ընթերցելիս: ա) բ) գ)	3. Ինչ գույնի է հեքիաթը: ա) բ) գ)
2. Ինչ մեղեդի հիշեցիր ընթերցելիս: ա) բ) գ)	4. Ինչը կփոխեիր հեքիաթում: ա) բ) գ)



6. Ստեղծիր հերոսների բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:

Հերոս	Հերոսի բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ

7. Պատրաստիր հաղորդում՝ «Բարի գործ» վերնագրով, և քննարկիր ընկերներիդ հետ:

8. «Ոսկի արտ» հեքիաթի բեմագիր (սցենար) կազմիր և ընկերներիդ հետ բեմադրիր:

9. Նկարագրիր հերոսներին քո բառերով:

Հերոս	Հերոսի արտաքին նկարագրություն	Ներկայացրու հերոսի երկու վարքագիծ:	Տեքստից ելնելով՝ բացատրիր, թե նա ինչու այդպես վարվեց:

ՀԱՅՐԸ ԵՎ ՋԱՎԱԿՆԵՐԸ

(խորվաթական ժողովրդական հեքիաթ)

Ա

Լինում է, չի լինում, մի ծեր վաճառական է լինում, անունը՝ Երկո: Մի անգամ նա ասում է կնոջը.

– Ծերացել ենք արդեն, այ կին, երկար չենք ձգի, իսկ մենք հարուստ ենք: Արի մեր ունեցած-չունեցածը բաժանենք մեր երկու աղջիկներին: Չէ՞ որ, մեկ է, ժառանգությունս նրանց է անցնելու: Իսկ մենք մեր կյանքը, ոնց էլ լինի, անհոգ կապրենք: Մի օր մի փեսայի տանը կուտենք-կխմենք, մյուս օրը՝ մյուս: Այդպես խաղաղ ու հանգիստ կավարտենք մեր կյանքը, իսկ երբ մեռնենք, մեր զավակները վիճելու, դատարանում հարցեր պարզելու պատճառ չեն ունենա: Ի՞նչ կասես:

– Եթե իմանամ, որ մեր փեսաները կընդունեն այդ որոշումը, ես էլ կհամաձայնեմ: Վախենում եմ միայն, որ հանկարծ այս ասացվածքը ճիշտ դուրս գա. «Փող ունես՝ գլխիս վրա տեղ ունես, փող չունես՝ շեմիցս ներս չմտնես»: Հնարավոր է՝ սկզբում հոգ տանեն մեր մասին, բայց հետո ձանձրանան: Ո՞ւր պիտի գնանք այդ ժամանակ: Կամ մեկ էլ տեսար՝ ես քեզնից երկար ապրեմ, ի՞նչ կլինի այդ դեպքում: Զուր չեն ասում. «Զոքանչի համար փեսայի տված խորտիկն ուտելը ծանր է»: Վարվի՛ր, ինչպես կամենում ես, բայց, խնդրում եմ, բոլոր փողերդ մի՛ բաժանիր, որ օր ծերության դռնեդուռ չընկնենք, գլխներիս չտանք: Չէ՞ որ մենք չգիտենք, թե մեր մահը երբ է գալու: Վատ խաղաղությունը լավ կռվից լավ է:

Ծեր վաճառականը պատվիրեց, որ կինն ընտիր ճաշ պատրաստի, և կանչեց փեսաներին, դուստրերին ու թոռներին: Երբ բոլորն արդեն կշտացել էին, նա հայտնեց իր որոշման մասին: Փեսաներն ու դուստրերը ուրախությամբ ընդունեցին հոր որոշումը, երդվեցին մինչև կյանքի վերջը խնամել ծեր ծնողներին, հոգ տանել նրանց մասին: Հայրն իր ունեցվածքը բաժանեց զավակների միջև այնպես, ինչպես մահից առաջ կաներ: Բայց կնոջ ասածն էլ արեց. սև օրվա համար մի քիչ փող պահեց: Այդպես յունակն է զենք թաքցնում՝ փորձանքի դեպքում պաշտպանվելու համար:

Վաճառականը շատ թոռներ ուներ: Ամեն օր նրանց նվերներ էր

բերում: Բայց շուտով տեսավ, որ իր պահած փողից բան չի մնացել, դադարեցրեց նվերներ տալը: Դուստրերն ու փեսաները սկզբում շատ զարմացան, հետո սկսեցին հոնքերը կիտել: Ծերունին դա նկատեց, շատ տխրեց: Մի անգամ նա տխուր, գլուխը կախ նստած էր իր դատարկված տան առաջ՝ վշտացած, որ սխալվել է սեփական երեխաների հարցում: Հարևանը՝ նրա նախկին գործընկերն ու կաթնեղբայրը, պատուհանից տեսավ, որ նա տխուր նստած է, վերցրեց լայնեզր գլխարկը, ձեռնափայտը և գնաց ընկերոջ մոտ:

– Աստվա՛ծ օգնական, եղբա՛յրս,– ողջունեց նա,– ինչո՞ւ ես այդպես մտամոլոր: Ի՞նչ հոգս է հոգիդ կրծում: Ես գիտեմ, որ դու և՛ ունեցվածք ես կուտակել, և՛ փող: Դու առողջ ես, դեռ շատ ձիգ ու պինդ, ոչ մի բանի կարիք չունես:

– Էհ, եղբա՛յր,– հոգոց հանեց վաճառականը,– մի՛ հարցրու: Օգնել, մեկ է, չես կարողանա: Ինքս եմ մեղավոր: Իմ խելքից եղավ ամեն ինչ, դրա համար եմ գլխիս տալիս եմ, բայց ուշ է: Այն ամենը, ինչ աշխատել, կուտակել էի, ջուրն ընկավ, մոխիր դարձավ:

– Ինչո՞ւ,– զարմացավ գործընկերը:

– Ամեն ինչ տվեցի իմ անշնորհակալ զավակներին,– ասաց վաճառականն ու պատմեց ամեն ինչ:

– Ճիշտ չես արել, եղբա՛յր,– ասաց ընկերը,– ինչո՞ւ ես քո կենդանության օրոք ունեցած-չունեցածդ բաժանել: Փեսաներն օտար արյուն են: Ասում են, չէ՞. «Աներ, փեսայի վրա հույս չդնես»: Ահա թե քեզ ինչ կասեմ: Ես քեզ փորձանքից կազատեմ, բայց հիմարություն չանես. ինչ ասեմ, կանես: Ապագայիդ համար մի՛ անհանգստացիր, ամեն ինչ լավ կլինի, բայց կխրատվես: Ինչպես առածն է ասում, կաթից լեզուն այրողը ջրին էլ կփչի: Ահա թե ինչ կանենք,– ավելացրեց նա:– Դու իմ հաշվին մի լավ հյուրընկալություն կազմակերպի՛ր,

հրավիրի՛ր փեսաներիդ, աղջիկներիդ, թոռներիդ: Ես վերջինը կգամ և ինձ հետ ինչ-որ բան կբերեմ: Դու կնայես իմ բերածին, բայց չես զարմանա: Կասես. «Մի՞թե հենց հիմա պիտի դա բերեիր, ասես՝ էլ փող չունեմ»: Մենք նրանց գլխին մի լավ խաղ կխաղանք, որ իմանան՝ պարտքը վճարել է պետք:

Ծեր վաճառականը լսեց ընկերոջը: Մեծ հյուրընկալություն կազմակերպեց, կանչեց փեսաներին, աղջիկներին, թոռներին, իր սանիկներին ու հարևաններին:

Բառային աշխատանք

1. Կազմի՛ր *խորտիկ*, *հարևան*, *բարեհաճ*, *մտրամոլոր* բառերի հոմանիշների և հականիշների շարքեր՝ օգտվելով բառարանից:
2. Կարդա՛ կապույտ գրված նախադասությունները: Դրանք իմաստալից խոսքեր են: Ո՞ր նախադասությունն է հեքիաթի գլխավոր միտքն արտահայտում:
3. Տեքստում ցո՛ւյց տուր ազգակցական կապ արտահայտող բառեր՝ աներ... Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:
4. Բնագրում գտի՛ր օրվա մեջ սնվելու երեք պահերն արտահայտող բառերը: Թվարկի՛ր տարբեր մթերքների անուններ՝ հարստացնելով բառապաշարդ:
5. Հեքիաթից դո՛ւրս գրիր նախադասություններ, որոնցում իմաստով մոտ բառեր կան:
6. Առանձնացրո՛ւ նախադասություն, որում իմաստով հակառակ բառեր կան, և կազմի՛ր դրանց հոմանիշները:
7. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը. տրված բառերը գործածի՛ր շարադրանքում:

Տեքստային աշխատանք

1. Առոգանությամբ կարդա՛ և պատմի՛ր՝ պահպանելով բնագրային բառապաշարը:
2. Հետևի՛ր հեքիաթի Ա հատվածի բովանդակությանը և հաջորդականորեն հաղորդի՛ր իրողություններն ու փաստերը:

3. Ստեղծագործության մեջ պատկերած պատմության և մարդկանց մասին դատիր քեզ հետաքրքրող տեսանկյունից:
4. Հիշիր նման իրավիճակներ իրական կյանքից և ներկայացրու ընկերներիդ:
5. Արտահայտիր քո զգացողությունները, ապրումները և փորձիր բացատրել դրանք (զարմացա, որովհետև..., զայրացա, քանի որ ...):
6. Բնութագրիր ծեր վաճառականին և նրա կնոջը: Արդարացնում ես նրանց արարքները:
7. Բնութագրիր հարևանին: Դու ինչ հնար կգտնեիր ծեր վաճառականին օգնելու համար:
8. Տեքստից դուրս գրիր ասացվածքները և գրիր դրանց իմաստին համապատասխան երեք ժողովրդական ասացվածք:
9. Բնագրում գտիր այն նախադասությունը, որում գործածված է *երդվել* բառը: Քննարկիր՝ երբ և ինչու են երդվում: Ինչ կանեիր, եթե ընկերդ երդումը չպահեր:

Կարող ես բացատրել հաղորդակցում բառը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ, ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հաղորդակցումը տեղեկության փոխանցման գործընթաց է, որը կատարվում է խոսքով և ժեստերով: Այն կարող է տեղի ունենալ դեմառդեմ, ինչպես նաև կապի տարբեր միջոցներով՝ հեռախոսով, էլեկտրոնային փոստով և այլն: Հաղորդակցումը լինում է **խոսքային** և **ոչ խոսքային**:

Հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքայինն է, որի մեջ երկխոսությունն ունի մեծ դեր: Երկխոսությունը, որի պարզ ձևը զրույցն է, կայանում է, եթե նրան մասնակցում են երկու կամ ավելի մարդիկ:

Ոչ խոսքային հաղորդակցումը տեղի է ունենում զանազան ժեստերի և դիմախաղի միջոցով, որոնք կոչվում են շարժումների լեզու: Ժեստը նույնպես տեղեկատվություն է և հաղորդակցական գործառույթ ունի: Տարբերակվում են գլխի և ձեռքի ժեստեր:

Առաջադրանքներ

1. Հեքիաթը կրկին կարդալով՝ դուրս գրիր խոսքային հաղորդակցման (երկխոսության) օրինակներ:
2. Երկխոսություններում գտիր դիմելաձևեր և քննարկիր ընկերներիդ հետ:
3. Դիմախաղով ցույց տուր այս նախադասության ժեստերը. «Դուստրերն ու փեսաները սկզբում շատ զարմացան, հետո սկսեցին հոնքերը կիտել»:
4. Կարդա՛ տեղեկույթը և քո կյանքից հիշիր ոչ խոսքային հաղորդակցման նման իրավիճակ. ««Թագավորը Նյու Յորքում» ֆիլմում Չարլի Չապլինը հիանալի օգտագործել է իր ձեռքերի հնարավորությունները: Հերոսը ռեստորանում է և ընթրիք է պատվիրում, սակայն նվագախմբի բարձր երաժշտությունը թույլ չի տալիս, որ մատուցողը լսի այցելուին: Դերասանական հնարամտության շնորհիվ ֆիլմի հերոսին հաջողվում է պատվիրել ձկնկիթ, ապուր և այլ ուտեստներ»:

Քո կարծիքով ինչո՞վ են տարբերվում բանավոր և գրավոր խոսքերը:

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Լեզվի բանավոր կամ գրավոր ամեն մի դրսևորում կոչվում է խոսք: Խոսքն առաջացել է լեզվի ծագման շրջանից: Համատեղ ապրելու, աշխատելու ընթացքում առաջ է եկել միմյանց ինչ-որ բան ասելու պահանջ:

Բանավոր խոսքն առաջանում է հնչյուններ արտաբերելով՝ ի տարբերություն գրավոր խոսքի: Գրավոր խոսքն ավելի մշակված է և կանոնարկված: Բանավոր և գրավոր խոսքերն ունեն հստակ հատկանիշներ:

Խոսքն ունի բանալի բառեր: Դրանք խոսքի հիմնական միտքն արտահայտող բառային միավորներ են:

Բ

Դուռը բացվեց, և ներս մտավ ընկերը: Նա դժվար էր շնչում, որովհետև մեջքին ծանր պարկ կար: Մտավ, ողջունեց բոլորին և տանտիրոջն ասաց.

– Երկո՛, եղբա՛յրս, ների՛ր, որ անհանգստացնում եմ քեզ ոչ հարմար պահի, բայց ես ամոթից կմեռնեի, եթե հյուր գայի հին պարտքս չմարած: Քանի անգամ եմ քեզ ասել, որ փողն ինձանից վերցնես, հաշվետվությունն էլ հետը: Բայց դու այնքան ձգձգեցիր, որ հասավ մինչև այս օրը: Բերել եմ քո փողը, հաշվել եմ, ինչպես հարկն է, սա էլ հաշվետվությունը: Հետո կստուգես: Օ՜ֆ, ինչ լավ է, ասես մի սար ընկավ ուսերիցս:

– Եթե իմ մյուս պարտապաններն էլ քեզ նման ազնիվ լինեին ու ժամանակին վերադարձնեին պարտքը, ես հիմա ինքս ինձ չէի մեղադրի իմ առատաձեռնության համար:

Փեսաները, աղջիկները և բոլոր հյուրերը լսեցին, թե ինչ են խոսում ծերունիները: Մի փեսան փսփսաց մյուսի ականջին.

– Տեսնո՞ւմ ես, ա՛յ քեզ աներ... Զևացնում էր, թե ինչ կա-չկա մեզ է տվել, հոգեպահուստ գրոշ էլ չունի, բայց դեռ որքա՜ն փող ունի: Եվ դեռ որքա՜ն էլ պիտի վերադարձնեն:

Աղջիկներն էլ նույնը փսփսացին: Հետո նրանցից մեկը թեքվեց ամուսնու կողմը:

– Ասում եմ՝ հորս ու մորս դարձյալ չկանչե՞նք մեր տուն ճաշելու, ընթրելու:

– Ճիշտ ես ասում,– ասաց ամուսինը,– պետք է կրկին հոգանք նրանց կարիքները, աչքի լույսի պես պահենք ծերուկներին:

Այսպես աղջիկներն ամուսինների հետ համաձայնության եկան ծնողների հոգսը հոգալու հարցում. ավելի շատ փողի հույս ունեին:

Ծեր վաճառականն ու իր կինը լավ ապրեցին իրենց կյանքի վերջին տարիներին: Զավակներն ասես մրցում էին իրար հետ, թե ով ավելի լավ կկերակրի ու կխնամի ծնողներին: Ծեր Երկոն մտքում հաճախ էր շնորհակալ լինում ընկերոջը, որն իրեն ազատեց ծանր մտքերից ու հոգսից:

Ժամանակ անցավ: Մահացավ Երկոյի կինը, մի քանի տարուց ինքն էլ ավանդեց հոգին: Նրա կտակում գրված էր. «Սիրելի՛ զավակներս, ինձ կթաղեք պատվով, հետո կբացեք մեծ սնդուկն ու այնտեղ կգտնեք այն, ինչ թողնում եմ ձեզ»:

Զավակներն այդպես էլ արեցին: Բացեցին մեծ սնդուկը: Այն դատարկ էր...Միայն մի նամակ գտան այնտեղ. «Սիրելի՛ զավակներս, նոր ժառանգության հույս մի՛ փայփայեք: Պարզապես Աստծուն աղոթելով՝ աշխատե՛ք, խնայե՛ք ձեր ունեցածն ու հարուստ կլինե՛ք: Ձեր հայր Երկո»:

Բառային աշխատանք

1. Ի՞նչ է նշանակում *հանգիստ խղճով* արտահայտությունը: Ե՞րբ է այն կիրառվում:
2. Հատվածում գտի՛ր *բարևել*, *դուստր*, *մեռնել*, *նորից*, *ունևոր* բառերի հոմանիշները:
3. Հատվածում գտի՛ր *նոր*, *երիտասարդ*, *փակել*, *փոքր*, *լիքը* բառերի հականիշները:
4. Բացատրի՛ր կապույտ գրված արտահայտությունները:
5. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը:

Տեքստային աշխատանք

1. Կարդա՛ հասկանալով և կազմի՛ր հեքիաթում պատմվող դեպքերի պլանը:
2. Վերաշարադրի՛ր հեքիաթի բովանդակությունն ըստ պլանի:
3. Տեքստից առանձնացրո՛ւ հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը և բացատրի՛ր իմաստը:
4. Արդյոք ճի՞շտ վարվեց հայրը, երբ ունեցած-չունեցածը բաժանեց երկու աղջիկներին: Ո՞րն է քո մոտեցումը:
5. Բնութագրի՛ր ծեր վաճառականին ու նրա աղջիկներին:

Հերոս	Արարք	Դրդապատճառ
Վաճառական		
Աղջիկներ		

6. Գնահատի՛ր հարևանի վարմունքը քո տեսանկյունից:
7. Բնութագրի՛ր փեսաներին և աղջիկներին: Նշի՛ր քո տեսակետը վատ զավակների մասին:

8. Ո՞րն է ծնողասեր և շնորհակալ զավակի քո պատկերացումը:

9. Ընկերներիդ հետ քննարկի՛ր *«Աչքի լույսի պես պահենք ծնողներին»* նախադասության կարևորությունը:

10. Հեքիաթում ցո՛ւյց տուր իրականի և երևակայականի սահմանները:

11. Կարդա՛ տեքստը, տարբերակի՛ր ուղղակի և անուղղակի խոսքերը, դրանք կիրառի՛ր ըստ նշանակության:

12. Նշի՛ր հեքիաթի դաստիարակչական արժեքը և գնահատի՛ր:

13. Ներկայացրո՛ւ հերոսների վարքագիծը և արտահայտի՛ր քո վերաբերմունքը:

14. Տեքստն ուսումնասիրելիս ի՞նչ արժեքներ ձեռք բերեցիր: Ինչո՞ւ են պետք դրանք:

15. Մասնակցի՛ր հեքիաթի բեմադրման աշխատանքներին և ընտրի՛ր համապատասխան դեր՝ պատճառաբանելով քո ընտրությունը:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆՉԵՐԱՆԳԻ

Խոսքը կազմված է նախադասություններից, որոնց մեջ առկա է խոսողի վերաբերմունքն իր հաղորդած նյութի նկատմամբ: Խոսքային հաղորդակցության ընթացքում մենք կարող ենք սովորական դատողություն անել որևէ իրողության վերաբերյալ, հաստատել կամ ժխտել այն: Մի այլ դեպքում խոսողը կարող է հարցում արտահայտել դեպքերի և երևույթների մասին, մի երրորդ դեպքում՝ հուզարտահայտչական վերաբերմունք դրսևորել կամ էլ մտքերն արտահայտել հրամանով և կարգադրությամբ: Այս ամենը խոսողը կատարում է ձայնային ելևէջների և առոգանության միջոցով, որն էլ կոչվում է **հնչերանգ**:

Ըստ բառային ու քերականական միջոցների և հնչերանգի բազմազանության՝ ժամանակակից հայերենի նախադասությունները լինում են չորս տեսակի՝ **պատմողական**, **հարցական**, **հրամայական**, **բացականչական**: Օրինակ՝ Ծովը ծփում է: Սովորե՞լ ես պատվիրանները: Խոսի՛ր հայերեն: Ի՜նչ գեղեցիկ է առավոտը:

ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Յակոբ Գրիմ (1785–1863)

Վիլհելմ Գրիմ (1786–1859)

Կենսագրություն

ԱՆՏԱՌԻ ՏՆԱԿԸ

(Հովհաննես Թումանյանի թարգմանությամբ)

Ա

Մի խոր անտառի բերանում մի խրճիթ է լինում: Էն խրճիթում կնոջ ու երեք աղջիկների հետ ապրում էր մի աղքատ փայտահատ:

Մի առավոտ՝ գործի գնալիս, փայտահատը կնոջն ասում է.

– Ա՛յ կին, այսօր գործս մինչև կեսօր չեմ վերջացնի. մեր մեծ աղջկա հետ ինձ համար ճաշ կուղարկես անտառ: Ես էլ հետս մի տոպրակ կորեկ կվերցնեմ, շաղ տալով կգնամ, որ այդ նշանով աղջիկս գա ու ճամփեն չկորցնի:

Օրը ճաշ է դառնում թե չէ, մեծ աղջիկը կերակուրն առնում է, ճամփա ընկնում: Բայց ծտերը, արտույտները, սարեկներն ու դեղձանիկները շաղ տված կորեկն արդեն կերած են լինում, ու աղջիկը չի կարողանում հոր հետքը գտնել: Գնում է, գնում, մինչ արևը մեր է մտնում, ու անտառում մութը վրա է հասնում: Ծառերը շրշում են խավարում, բուերը կանչում, կոնչում, ու աղջիկը սկսում է վախենալ: Մին էլ տեսնում է՝ հեռվում՝ ծառերի արանքից, մի կրակ է փայլփլում: «Այնտեղ երևի մարդիկ են ապրում. գնամ, նրանց մոտ մնամ էս գիշեր»,– մտածում է աղջիկն ու գնում էն կրակի վրա:

Գնում է հասնում մի տնակի, դուռը ծեծում:

– Ո՞վ ես, ներս արի,– կանչում է ներսից մի ձայն: Աղջիկը ներս

է մտնում, տեսնում է՝ նստած մի ալևոր մարդու, իսկ մյուս կողմում՝ մի չալ կով, մի հավ ու մի աքլոր:

Աղջիկը պատմում է ծերին, թե ինչպես է ինքը մոլորվել անտառում, ու խնդրում է, որ տեղ տա գիշերը մնալու:

Ծերունին դիմում է իր կենդանիներին.

– Սիրո՛ւն հավիկ, իմ լավի՛կ,
Չա՛լ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլո՛ր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

Կենդանիները միասին պատասխանում են.

– Լա՛վ:

Էդ ժամանակ ծերունին աղջկան ասում է.

– Համեցեք, մեր աչքի վրա, սիրո՛ւն աղջիկ, մեր դուռը բաց է, տունը՝ լիքը: Համեցի՛ր, մոտեցի՛ր օջախին, կերակո՛ւր շինի:

Աղջիկը մտնում է խոհանոց և, ճիշտ որ, ամեն բան գտնում է առատ-առատ: Մի լավ ընթրիք է պատրաստում, բերում է, ծերունու առաջ լիքը սեղան է բաց անում, ինքն էլ նրա հետ նստում, ուտում, խմում, կշտանում: Որ կշտանում-պրծնում է, ասում է.

– Բա ես հոգնած եմ. հիմի որտե՞ղ քնեմ:

Էստեղ կովը, հավն ու աքլորը պատասխանում են.

– Ողջ դրա հետ դու կերար
Ու խմեցիր ինչ-որ կար,
Մնիկ չարիր իսկի մեզ,
Գնա՛, քնի՛, ուր կուզես:

Էն ժամանակ ծերունին ասում է.

– Բարձրացի՛ր. սանդուղքի գլխին մի սենյակ կա: Էն սենյակում երկու անկողին կա. անկողինները պատրաստի՛ր, ես էլ կգամ, կքնենք:

Աղջիկը վերև է բարձրանում, անկողինները գցում է ու ծերունուն չի սպասում. ինքը պառկում է, քնում: Մի քիչ հետո ծերունին գալիս է, մոմի լույսով նայում է աղջկան ու գլուխը թափ տալիս: Գիշերվա մի ժամանակ երբ տեսնում է՝ խորը քնած է, մահճակալի տակին մի գաղտնի դուռ է լինում, բաց է անում, աղջկան թողնում ցած ու կրկին փակում:

Բառային աշխատանք

1. Գրի՛ր հետևյալ բառերի հոմանիշնե՛րը և հականիշները:

   Խրճիթ, *աղջիկ*, *աղքատ*, *ծերունի*:

2. Ա հատվածից գտի՛ր՝ ինչ ձայն է հանում բուն: Ի՞նչ բառերով են արտահայտվում կովի, ոչխարի, ագռավի, արագիլի ձայները:

3. Արտագրի՛ր տրված հատվածը, ընդգծված բառերը փոխարինի՛ր համապատասխան հոմանիշներով:

   Մի *խոր* անտառի բերանում մի *խրճիթ* է լինում: Էն խրճիթում կնոջ ու երեք *աղջիկների* հետ ապրում էր մի *աղքատ* փայտահատ: Մի առավոտ՝ գործի գնալիս, նա կնոջն ասում է.

   – Ա՛յ կին, այսօր գործս մինչև *կեսօր* չեմ վերջացնի, մեր *մեծ* աղջկա հետ ինձ համար *ճաշ* կուղարկես անտառը: Ես էլ հետս մի *փոքրիկ* կորեկ կվերցնեմ, շաղ տալով կգնամ, որ այդ նշանով գա ու ճամփեն չկորցնի:

4. Նշված հատվածը ընդարձակի՛ր՝ համալրելով հերոսների երկխոսություններով:

5. Մնջախաղով, ժեստերի լեզվով հաղորդի՛ր նշված հատվածի բովանդակությունը:

Տեքստային աշխատանք

1. Արտահայտիչ և վա՛րժ կարդա հեքիաթը, վերարտադրի՛ր դեպքերի հաջորդական ընթացքը՝ պահպանելով նրա հիմնական բովանդակությունը:

2. Թվարկի՛ր հատվածի գործող հերոսներին:

3. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր անտառի նկարագրությունը ներկայացնող նախադասությունը: Սովորաբար ինչպիսի՞ն է լինում անտառը:

4. Կարդա՛ տեքստը, գտի՛ր աղջկա բնավորությունը բնութագրող հատվածները, արարքների դրդապատճառները բացահայտող խոսքային միջոցները, հիմնվելով դրանց վրա՝ վերլուծի՛ր նրա կերպարը:

5. Բնութագրիր ծերունուն՝ ելնելով նրա արարքների դրդապատճառներից:

6. Մեկնաբանիր կենդանիների մասնակցությունը դեպքերի զարգացման ընթացքում և արտահայտիր քո վերաբերմունքը նրանց նկատմամբ:

7. Բացատրիր ծերունու հարցադրման նպատակը կենդանիներին՝ անտառում մոլորված աղջկան ապաստան տալու համար:

8. Իրավացի՞ է կենդանիների դժգոհությունը աղջկանից: Ինչո՞ւ: Հիմնավորումդ գտիր տեքստում:

9. Ճի՞շտ վարվեց ծերունին՝ աղջկան նկուղը գցելով: Դու ինչպե՞ս կվարվեիր:

10. Դիտիր Ա հատվածի նկարը և գրիր նկարագրական շարադրություն:

11. Հեքիաթը կարդալիս կանխատեսիր դեպքերի զարգացման ընթացքը, տեքստից ընտրած փաստերով հիմնավորիր քո կանխատեսումը՝ լրացնելով «Կանխատեսման ուղեցույց» գծակարգում:

1. Ի՞նչ է լինելու հետո: ա) բ) գ)	**2. Ինչո՞ւ ես այդպես կարծում:**
3. Ի՞նչ եղավ: ա) բ) գ)	**4. Նոր վերնագի՞ր դիր հատվածին:**



12. Նկարագրիր այն կենդանուն, որին դու պահում ես կամ խնամում: Հիմնավորիր՝ ինչ դեր ունեն կենդանիները մարդու կյանքում:

13. Տարբերիր և արժևորիր մայրենի բարբառը, խոսվածքը՝ որպես հայոց լեզվի հարստացման միջոց: Դո՛ւրս գրիր բարբառային բառեր՝ գրելով դրանց գրական համարժեքները:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ: ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՀԱՄԱՌՈՏ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կառուցվածքային տեսակետից նախադասությունները տարբեր են լինում. մի դեպքում մեկ միտք են արտահայտում, մյուս դեպքում՝ մեկից ավելի, մի դեպքում իրենց կազմում ունենում են միայն գլխավոր անդամներ, մյուս դեպքում՝ դրանց լրացնող անդամներ:

Եթե նախադասությունը մեկ միտք է արտահայտում, ապա պարզ է:

Օրինակ՝ Արծիվը կտուցով փրկել էր իր ձագերից միայն մեկին:

Անուշ լեզուն մեղրից քաղցր է:

Պարզ նախադասությունները լինում են համառոտ և ընդարձակ: Համառոտ նախադասությունը կազմված է գլխավոր անդամներից՝ ենթակայից և ստորոգյալից:

Օրինակ՝ Արևը ժպտաց: Ձնծաղիկը երկնագույն է:

Ընդարձակ նախադասությունը կազմված է գլխավոր անդամներից և լրացումներից:

Օրինակ՝ Արևը ջերմ ժպտաց: Սարի ձնծաղիկը երկնագույն է:

Եթե նախադասությունը մեկից ավելի մտքեր է արտահայտում, ապա բարդ է:

Օրինակ՝ Քո լեռները ժպտադեմ
Արևին գիրկն են առել,
Աղբյուրներդ արծաթե
Ձնգուն լարեր են դառել: ***(Վ. Խանոյան)***

Այս բարդ նախադասությունը բաղկացած է երկու առանձին մտքերից:

Առաջադրանքներ

1. Բառերի զույգերից կազմի՛ր համառոտ նախադասություններ:

Դավիթ-մարզվել, *Նարե-զբոսնել*, *արփի-ժպտալ*, *շոկոլադ-հալվել*, *ես-հերոս*, *դու-ճիշտ*:

Նմուշ՝ Նա բարի է:

2. Ընդարձակի՛ր համառոտ նախադասությունները:

ա) Նավը լողում է:
բ) Ճնճղուկը կտցահարում է:
գ) Զանգակածաղիկը կապույտ է:
դ) Ընկերները հաշտ են:

3. Տրված բառերով կազմի՛ր ընդարձակ նախադասություններ:

ա) Վրաստան, մայրաքաղաք, Թբիլիսի:
բ) խոտ, իջնել, արտույտ, վրա, կանաչ:
գ) ճանաչել, փորձանք, լավ, մեջ, ընկեր:

4. Պարզ նախադասությունները միավորի՛ր և դարձրո՛ւ բարդ:

ա) Լույսը բացվեց:
բ) Ես ուզում եմ:
գ) Կարենը սահում է չմուշկներով:
դ) Մասրենու վրայի ձյունը հալվում է:

ա) Խաղաղությունը գոտևորի մոլորակը:
բ) Արևը փայլեց երկնքում:
գ) Հուլունք դարձած կաթկթում է հողին:
դ) Կարողանում է սպորտային պար պարել:

5. Տրված մասերը միացնելով՝ ամբողջացրո՛ւ առած-ասացվածքները:

ա) Եղբայրը կարող է ընկեր չլինել,
բ) Աղվեսի բերանը խաղողին չի հասնում,
գ) Անձրևից փախան,
դ) Մի՛ վախենա վարար գետից,
ե) Մի գիժ քար գցեց հորը,
զ) Հասկացողին մին ասա,

ա) ասում է՝ խակ է:
բ) բայց ընկերը միշտ եղբայր է:
գ) վախեցի՛ր մարմանդ գետից:
դ) կարկուտի տակ ընկան:
ե) չհասկացողին՝ հազար ու մին:
զ) քառասուն իմաստուն չկարողացան հանել:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ–ԲԱՌ–ՀՆՉՅՈՒՆ

Ինչպես տեսնում ենք, հեքիաթների հերոսներն իրենց մտքերն արտահայտում են տարբեր հնչերանգի նախադասությունների միջոցով: Այդ նախադասությունները կազմված են բառերից: Բառը հնչյուն է կամ հնչյունախումբ, որն իմաստ է արտահայտում, և ունի ինքնուրույն գործածություն: Ամենակարճ բառերը բնականաբար արտահայտվում են մեկ հնչյունով: Ժամանակակից գրական հայերենում միայն ձայնավորները կարող են միայնակ հանդես գալ որպես բառ:

Օրինակ՝ Օ՜, ինչ փափուկ խոտ է, ինչ գեղեցիկ ծաղիկ է:

(Հ. Ք. Անդերսեն)

Է՜, հոգնել եմ, ես այսպես ինձ երիտասարդ եմ զգում,– հոգոց էր հանում ծեր շոգենավը: ***(Սաթենիկ Ղազարյան)***

Սակայն հնչյունը և բառն ունեն տարբերություններ: Հնչյունը արտասանական միավոր է և իմաստ չունի: Բառը նույնպես արտասանական միավոր է, բայց իմաստ ունի և հնչյունից տարբերվում է հենց դրանով, օրինակ՝ ա, ր, դ, մ հնչյուններ են, իսկ ճիշտ դասավորության դեպքում ստանում ենք մարդ բառը, որն իմաստ է արտահայտում:

Առաջադրանքներ

1. Տեքստի մասերը խառնված են: Կարդա՛ և դասավորի՛ր ըստ հերթականության:

1997 թվականից ի վեր Ֆիլիպիններում տեղի է ունենում ազգային լեզվի մեկամսյա տոնակատարություն: Իրականում կարառկեն հորինվել է Ֆիլիպիններում:

Ֆիլիպինները պետություն է հարավարևելյան Ասիայում՝ Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում: Գտնվում է Ֆիլիպինյան մեծ ու փոքր կղզիների վրա: Նա իր անվանումը ստացել է ի պատիվ Իսպանիայի թագավոր Ֆիլիպ Երկրորդի: Նախկինում եղել է Իսպանիայի գաղութը, այնուհետև անցել է ԱՄՆ-ին: Տարածքի շուրջ կեսը ծածկված է անտառներով: Ընդերքը հարուստ է պղնձի, սնդիկի, երկաթի, ման-

գանի պաշարներով: Կան նաև ածխի և բնական գազի հանքավայրեր:

Բնակչությունը կազմված է ավելի քան 90 ազգությունից: Բնակվում են նաև չինացիներ: Տիրապետող կրոնը քրիստոնեությունն է: Մայրաքաղաքն է Մանիլան: Քաղաքն իր անունը ստացել է ի պատիվ Maynilad կոչվող սպիտակ ծառի: Պետական լեզուներն են ֆիլիպինները, անգլերենը: Տարածված է նաև իսպաներենը:

2. Տեքստը հարստացրու այլ տեղեկություններով՝ օգտվելով հանրագիտարանից կամ այլ աղբյուրներից:

3. Լուծիր խաչբառը:



Ուղղահայաց

1. Լեզվի իմաստակիր միավոր: **2.** Հաղորդակցության հիմնական ձևը: **4.** Տեղեկության փոխանցման գործընթաց: **5.** Երբ ...ն ընկում է, հեռվից տեսնում է անտառի տնակի լույսը («Անտառի տնակը»): **7.** Ո՛չ մանուկ, ո՛չ երիտասարդ:

Հորիզոնական

3. Խոսքի տեսակ: **6.** Վատ .....ը լավ կռվից լավ է («Հայրը և զավակները»): **7.** Նախադասության տեսակներից մեկը: **8.** Հեքիաթին բնորոշ միրգը: **9.** Հայ հեքիաթագիր: **10.** Նա դժվար էր շնչում, որովհետև մեջքին ծանր ... կար («Հայրը և զավակները»): **11.** Լուն ... շինել:

Բ

Փայտահատը իրիկունը տուն է գալի, բարկանում է կնկա վրա, որ իրեն ամբողջ օրը սոված է թողել:

– Ես ի՞նչ անեմ,– պատասխանում է կինը,– ճաշը տվել եմ մեր մեծ աղջկան, ղրկել: Ինչպես երևում է, ճամփեն կորցրել է, չի գտել, ինքն էլ հետ չի եկել դեռ:

Փայտահատը մյուս օրն էլ առավոտյան վաղ վեր է կենում, գնում անտառը: Պատվիրում է, որ էս անգամ միջնեկ աղջիկը տանի ճաշը:

– Այսօր հետս ոսպ կվերցնեմ,– ասում է,– որ ճամփին շաղ տամ:

Ոսպը կորեկից խոշոր է, աղջիկս հեշտ կտեսնի ու ճամփեն չի կորցնի:

Կեսօրին միջնեկ աղջիկը ճաշն առնում է, ճամփա ընկնում: Գնում է, գնում, ոչ մի տեղ ոսպ չի գտնում: Դու մի ասիլ, դարձյալ թռչունները կերել են, մի հատ էլ չեն թողել:

Աղջիկն անտառում թափառում է, թափառում, գիշերն ընկնում էլի նույն ծերունու մոտ, հաց ու քնելու տեղ է խնդրում: Ծերունին դիմում է կովին, հավին ու աքլորին.

– Սիրո՛ւն հավիկ, իմ լավի՛կ,
Չա՛լ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլո՛ր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

– Լա՛վ,– պատասխանում են կենդանիները:

Միջնեկ քույրն էլ մեծ քրոջ նման ընթրիք է պատրաստում, ծերի հետ ուտում, խմում, կշտանում, կենդանիների վրա ուշք էլ չի դարձնում: Երբ հարցնում է, թե՝ ես որտե՞ղ պիտի քնեմ, կենդանիները պատասխանում են.

– Ողջ դրա հետ դու կերար
Ու խմեցիր ինչ–որ կար,
Մնիկ չարիր իսկի մեզ,
Գնա՛, քնի՛, ուր կուզես:

Հենց նա գնում է, հետևից գնում է ծերունին, գլուխը թափահարում ու դարձյալ թողնում է ներքև:

Բառային աշխատանք

1. Հատվածից դո՛ւրս գրիր կենդանիներին բնութագրող բառերը և դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:
2. Գործածելով առարկա, գործողություն ցույց տվող բառերը՝ կազմի՛ր նախադասություններ:
   Փայտահատ, *մայր*, *աղջիկ*, *ճաշ*, *անտառ*, *տնակ*, *ծերունի*, *զայրանալ*, *լաց լինել*, *մոլորվել*, *գտնել*, *հյուրընկալել*, *պատժել*:
3. Կազմած նախադասությունները դասավորի՛ր ու գրավոր շարադրի՛ր այնպիսի հաջորդականությամբ, որ ստացվի մի պատմություն:

4. Գրի՛ր՝ ինչ ես անում տանը, դպրոցում: Սկսի՛ր այսպես:

Օրս սկսում եմ առավոտյան վարժանքով, ..., ..., ..., ..., ..., ...:

Դպրոցում սովորում եմ....., ..., ..., ..., ..., ...:

Շարադրելիս գործածի՛ր փակագծում տրված բառերը:

(*հարդարել*, *սրբել*, *արդուկել*, *մաքրել*, *երգել*, *մարզվել*, *նկարել*, *խաղալ*, *աշխատել*, *կարդալ*, *նախագծել*, *պատմել*)

5. Գրի՛ր շարադրություն՝ «Երեխաները անտառում» վերնագրով, և գործածի՛ր տրված բառերը:

Բացատ, *թավուտ*, *դայլայլ*, *արահետ*, *սաղարթախիտ*, *խարույկ*, *ոլորան*, *մթնշաղ*:

Պլան

ա. Ամառ է:
բ. Երեխաները անտառում:
գ. Դասղեկի հանձնարարությունը:
դ. Ճամբարային առօրյան:
ե. Հրաժեշտի երեկո:

Տեքստային աշխատանք

1. Քո պատկերացմամբ նկարագրի՛ր հոր, միջնեկ աղջկա, ծերունու արտաքինը:

2. Արտագրի՛ր հեքիաթի Բ հատվածի հերոսներին բնութագրող արարքների դրդապատճառները բացահայտող նախադասությունները:

3. Վերլուծի՛ր ծերունու արարքների դրդապատճառները (ինչո՞ւ..., որովհետև...): Ճի՞շտ վարվեց ծերունին:

4. Վերլուծի՛ր միջնեկ աղջկա արարքները: Մեկնաբանի՛ր քո տեսանկյունից:

5. Կազմի՛ր համեմատության աղյուսակներ (Վենի գծակարգ, քառաբաժան, երկյուն աղյուսակ), ցո՛ւյց տուր հեքիաթում առկա երևույթների, առարկաների, կենդանիների, մարդկանց ընդհանրությունները և տարբերությունները:

6. Կարդացած հեքիաթի համար ընտրիր նմանատիպ մուլտֆիլմից հատվածներ և բացատրիր ընտրությանդ շարժառիթը:
7. Հեքիաթի բովանդակությանը համապատասխան նկարազարդումներ արեք (ծեփեք և ձեռքի այլ աշխատանքներ արեք) (խմբային աշխատանք):
8. Դերային խաղով ներկայացրեք հեքիաթի երկրորդ մասի բովանդակությունը՝ նախապես բեմագիր կազմելով (խմբային աշխատանք):

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ

Հնչյունաբանությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է լեզվի հնչյունական կազմը, հնչյունական համակարգը: Հնչյունաբանությունը զբաղվում է նաև խոսքային ավելի մեծ միավորների՝ վանկի, շեշտի, հնչերանգի ուսումնասիրությամբ: **Հնչյունը լեզվի ձայնային նվազագույն արտասանական միավորն է:** Հնչյուններով կազմված են բառեր, բառերով՝ խոսք: Հնչյունական համակարգում որպես հնչյունաբանական միավոր առանձնանում են նաև երկհնչյունները, կրկնակ բաղաձայնները և այլն:



ՀՆՉՅՈՒՆ ԵՎ ՏԱՌ

Մեր խոսքը կազմված է բառերից, իսկ բառերը կազմված են հնչյուններից: **Հնչյունը լեզվական միավոր է, որն արտասանվում և լսվում է:**

Օրինակ՝ գ ի ր ք–գիրք:

Տառը հնչյունի գրային նշանն է, որը գրվում է և կարդացվում: Յուրաքանչյուր տառ նշում է որևէ հնչյուն: Է հնչյունի համար ունենք երկու տառ՝ է և ե: Օ հնչյունի համար նույնպես ունենք երկու տառ՝ օ և ո:

Կան տառեր, որոնք երկու կամ ավելի հնչյուններով են արտաբերվում: Ո տառը բառասկզբում և բառամիջում՝ ձայնավորից հետո, լսվում է երկու հնչյունների միասնությամբ:

Օրինակ՝ ոզնի (վօզնի), ոտք (վօտք), ամենաորակյալ (ամենավօրակյալ):

Նույնը և ե տառը բառասկզբում և բառամիջում՝ ձայնավորից հետո, արտաբերվում է երկու հնչյունով:

Օրինակ՝ երգ (յէրգ), եղնիկ (յէղնիկ), ամենաերջանիկ (ամենայէրջանիկ):

Առանձին գործածվելիս և կցագիր տառանշանը հնչում է երեք հնչյունով՝ յէվ, իսկ բառամիջում կամ բառավերջում երկու կամ երեք հնչյուն՝ էվ (արևահամ–արէվահամ, բարև–բարէվ, նաև–նայէվ, Եվա–Յէվա):

Որոշ բառերում ը հնչյունը լսվում է, բայց չի գրվում:

Օրինակ՝ մ(ը)կրատ, դուստ(ը)ր:

Այդ է պատճառը, որ որոշ բառերում հնչյունների և տառերի քանակը չի համապատասխանում:

Առաջադրանքներ

1. Հեքիաթի Բ հատվածից դուրս գրիր չորս բառ, որոնց տառերի և հնչյունների քանակը հավասար է:
2. Հեքիաթի Բ հատվածից դուրս գրիր չորս բառ, որոնց տառերի և հնչյունների քանակը հավասար չէ: Մեկնաբանիր: Ինչու:
3. Քանի՞ ձայնավոր հնչյուն կա *եղնիկ*, *ոսպ*, *գլուխ* բառերում:
4. Բառարանից դուրս գրիր բառեր, որոնք սկսվում են *ե* և *ո* տառերով:
5. Որոշիր և գրիր տրված բառերի հնչյունների և տառերի քանակը:

Որակ _____ երեխա _____

որևէ _____ եվրոպացի _____

օղակ _____ արև _____

Գ

Երրորդ առավոտը փայտահատը կնկան ասում է.

– Էսօր մեր կրտսեր աղջկա ձեռքով դրկի ճաշը: Նա բարի է ու ականջով: Նա ճամփեն կգտնի, իր քույրերի նման չի, որ դեսուդեն ընկնի:

Մայրը չի ուզում երրորդ աղջկանն էլ անտառ ուղարկի: Լաց է լինում, ասում է.

– Աչքիս սև ու սպիտակը սա է մնացել, ինչո՞ւ ես ուզում՝ սրան էլ կորցնես մեծերի նման:



– Դու հանգի՛ստ կաց,– ասում է փայտահատը,– սա կորչիլ չի, սա էնպես խելոք է, որ... ես էլ էսօր հետս սիսեռ կտանեմ՝ ճամփին շաղ տալու: Սիսեռը ոսպ հո չի՞, նրանով անպատճառ ճամփեն կգտնի:

Բայց երբ աղջիկը, ճաշն առած, անտառն է մտնում, թռչուններն արդեն սիսեռը կերած են լինում: Աղջիկը մնում է տարակուսած, չի իմանում՝ որ կողմը գնա: Մտածում է, դարդ է անում, թե հիմի հայրը կսվի, մայրը լաց կլինի...

Ման է գալի, ման, հորը չի գտնում: Երբ մութն ընկնում է, հեռվից տեսնում է անտառի տնակի լույսն ու գնում է էն լույսի վրա: Մտնում է ներս, տեղ է խնդրում, ու ալեհեր ծերունին դարձյալ դիմում է իր կենդանիներին.

– Սիրո՛ւն հավիկ, իմ լավի՛կ,
Չա՛լ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլո՛ր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

– Լա՜վ...– պատասխանում են կենդանիները: Էն ժամանակ աղջիկը մոտենում է, գուրգուրում հավին ու աքլորին: Ծերի պատվերով ընթրիք է պատրաստում, դնում սեղանին ու ասում.

– Ինչո՞ւ ես պետք է ուտեմ, էս բարի կենդանիները քաղցած նայեն:

Գնում է, կուտ բերում, ածում հավի ու աքլորի առջև, կովի համար էլ մի խորոմ խոտ:

– Կերե՛ք,– ասում է,– իմ սիրելի՛ք, այ հիմի ջուր էլ կբերեմ:

Գնում է, մի դույլ ջուր էլ բերում, դնում առաջները:

Ամենքին կշտացնում է, նոր ինքն է նստում ուտում, ինչ որ թողել էր ծերունին: Իսկ երբ քնելու ժամանակը գալիս է, ասում է.

– Ժամանակը չի՞ արդյոք, որ ամենքս էլ հանգստանանք...

Սիրո՛ւն հավիկ, իմ լավի՛կ,
Չա՛լ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլո՛ր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

– Լա՛վ,– պատասխանում են կենդանիները:

– Մեզ հետ կերար միասին
Ու հոգացիր մեր մասին,
Բարի գիշեր քեզ բարի,
Մուրազդ Աստվա՛ծ կատարի:

Էստեղ աղջիկը բարձրանում է վերև, անկողինները պատրաստում: Ծերունին գալիս է քնում: Ինքն էլ մյուս մահճակալին է պառկում ու հանգիստ քուն մտնում:

Գիշերվա մի ժամանակ տունը հանկարծ դղրդում է. կարծես քանդ-վում ու տակնուվրա է լինում: Աղջիկը վախեցած զարթնում է, բայց աղմուկն անցնում է, ինքն էլ քնում է նորից:

Առավոտը աչքը բաց է անում և ի՞նչ է տեսնում: Տեսնում է՝ պառկած է մի մեծ, շքեղ զարդարած ու կահավորած դահլիճում, շուրջը՝ թավիշ ու ոսկի, հարավային փարթամ բույսեր ու ծաղիկներ այրվում-վառվում են առավոտյան արևի ճառագայթների տակ: Տեսնում է, բայց աչքերին չի հավատում: Ասում է. «Երազի մեջ եմ երևի»: Էսպես մտածելիս ներս են մտնում երեք ճոխ հագնված ծառաներ, խոնարհ գլուխ են տալիս ու հարցնում.

– Ի՞նչ կհրամայեք, տիրուհի՛:

– Լա՛վ, լա՛վ, գնացե՛ք,– պատասխանում է քնաթաթախ աղջիկը,– հիմի վեր կկենամ, ծերունու համար կերակուր կպատրաստեմ, կովի, հավի ու աքլորի մասին կհոգամ:

Կարծում է, թե ծերունին էլ արդեն վեր է կացել: Նայում է նրա անկողնին, տեսնում է՝ ծերունին չկա, տեղը պառկած է մի օտար ջահել ու գեղեցիկ երիտասարդ...

Եվ ահա երիտասարդը աչքերը բաց է անում ու էսպես խոսում զարմացած աղջկա հետ.

– Լսի՛ր, սիրո՛ւն աղջիկ: Ես էս երկրի թագավորի որդին եմ: Չար վհուկը կախարդել էր ինձ ու դատապարտել, որ ես ծերի կերպարանքով ապրեի անտառում, ոչ ոք էլ չլիներ ինձ հետ՝ բացի իմ երեք ծառաներից, նրանք էլ կովի, հավի ու աքլորի կերպարանքով: Եվ էդպես պետք է մնայինք, մինչև հայտնվեր էն բարի աղջիկը, էն քնքուշ սիրտը, որ ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին լիներ սիրող ու կարեկից... Էն աղջիկը դու եղար: Քո շնորհիվ էս գիշեր՝ կեսգիշերին, մենք ամենքս ազատվեցինք կախարդանքից, ու իմ պալատը, որ դարձել էր անտառի մի հին տնակ, նորից դարձավ առաջվա պալատը:

Ու կանչում է թագավորազնը իր ծառաներին, որ գնան, աղջկա ծնողներին բերեն հարսանիքին:

– Բայց որտեղ են իմ քույրերը,– հարցնում է աղջիկը:

– Նրանց ես փակել եմ ներքնահարկում,– պատասխանում է երիտասարդը:– Էգուց կուղարկեմ անտառ, էնտեղ ածխարարի մոտ ծառայեն ու էնքան մնան, մինչև որ դառնան ավելի բարի ու սովորեն մտածել կենդանիների մասին:

Բառային աշխատանք

1. Տեքստում գտի՛ր *այգ*, *արփի*, *աքաղաղ*, *ճանապարհ* բառերի հոմանիշները:

2. *Փայտահատ* և *կեսգիշեր* բառերի արմատներով ուրիշ բառե՛ր կազմիր:

3. Բառերը ճի՛շտ դասավորիր և վերականգնի՛ր արքայազնի խոսքերը.

ա) պիտի մնայինք այդպես Եվ, աղջիկը մինչև բարի հայտնվեր:

բ) որդին եմ երկրի Ես թագավորի այս:

գ) Իմ պալատը դարձել էր անտառի մի հին տնակ:

4. Առաջին երեխան կոչվում է առաջնեկ, երկրորդը՝ միջնեկ: Ինչպե՞ս կկոչվի վերջին երեխան:

5. Նշի՛ր՝ բառաշարքում որ բառը նշվածների իմաստին չի համապատասխանում՝ *բարի*, *կարեկից*, *անպարբեր*, *հոգացող*:
6. Գրավոր բնութագրի՛ր երրորդ քրոջը: Վերնագրի՛ր:
7. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը: Դրանք գործածի՛ր տեքստը պատմելիս:

Տեքստային աշխատանք

1. Վերաշարադրի՛ր հեքիաթի բովանդակությունը բանավոր:
2. Գրավոր բնութագրի՛ր քո սիրած հերոսին:
3. Բնութագրի՛ր երեք քույրերին՝ ըստ նրանց արարքների: Նշի՛ր նրանց տարբերությունները և ընդհանրությունները (վենի գծակարգ):
4. Բացահայտի՛ր ծերունու արարքների դրդապատճառները՝ հիմնավորելով տեքստից բերված հատվածներով:
5. Հեքիաթի տեքստը համեմատի՛ր թեմայի նկարազարդումներին: Ներկայացրո՛ւ կարծիքդ:
6. Գտի՛ր հեքիաթի բանալի բառերը. բացատրի՛ր ընտրությունդ:
7. Տեքստից առանձնացրո՛ւ հեքիաթի հիմնական միտքն արտահայտող նախադասությունը:
8. Ցո՛ւյց տուր հեքիաթի իրականի և երևակայականի սահմանները: Հիմնավորի՛ր:
9. Հեքիաթին նոր վերնագի՛ր դիր:
10. Ավարտի՛ր հեքիաթը քո նախընտրած վերջաբանով:
11. Լրացրո՛ւ աղյուսակը, գրի՛ր հերոսներին բնութագրող հատկանիշներ:

Հերոս	Էական հատկանիշներ	Ոչ էական հատկանիշներ	Քո կարծիքով ո՞րն է անընդունելի նրանց վարքագծում:

12. Տեքստից դո՛ւրս գրիր հեքիաթի ժանրին բնորոշ բառեր, արտահայտություններ: Բացատրի՛ր դրանց կիրառման նպատակը:

ՁԱՅՆԱՎՈՐ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

Հնչյունները լեզվի ձայնային նվազագույն միավորներն են, որոնք միատեսակ չեն արտասանվում: Օրինակ, ա, ի, օ հնչյուն-ների արտասանության ժամանակ ձայնն ազատ դուրս է գալիս բերանի խոռոչից: Դրանք ձայնավոր հնչյուններն են: Հայերենի ձայնավոր հնչյունները վեցն են՝ ա, է(ե), ը, ի, օ(ո), ու, որոնք գրվում են ութ տառով: Օրինակ, էլեկտրոնային բառի մեջ երկու է հնչյուն կա, որոնցից առաջինը գրվում է է տառով, իսկ երկրորդը՝ ե-ով: Որոր բառի մեջ երկու օ հնչյուն կա, որոնք գրվում են տարբեր տառերով. առաջինը՝ օ, երկրորդը՝ ո: Առանց ձայնավորի հնարավոր չէ բառ կազմել:

Ձայնավորները շեշտակիր են և ունեն վանկակազմիչ դեր: Օրինակ՝ հայրենի՛ք-հայ-րե-նի՛ք, Հայաստա՛ն-Հա-յաս-տան:

Ձայնավորներ

ա էյ (ե) ի օ (ո) ու ը

ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

(ծնվ. 1990)

Կենսագրություն

ՏԱՌԻ, ՀԵՌԱԽՈՍԻ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ՎԵՃԸ

Լինում է, չի լինում մի մոլորակ է լինում: Այս կլոր, կես կապուտակ, կես կանաչ գունավորված մոլորակում սիրով ու համերաշխ ապրում էին մարդիկ: Մարդկանց կողքին ապրում էին նաև կենդանիներ՝ մեծ ու փոքր, վայրի և ընտանի: Սկզբում մարդիկ ու կենդանիները շատ սիրով ու համերաշխ էին ապրում, սիրում էին պահել ընտանի կեն-դանիներ, նրանց հետ խաղալ: Շատ էին սիրում նաև ազատ օրերին ընտանիքի անդամներով դուրս գալ զբոսնելու, քայլելու, խաղալու:

Բայց... մի օր էլ երկրագունդ եկան հեռախոսն ու համակարգիչը, ու ամեն ինչ փոխվեց:

Մարդիկ էլ չէին սիրում կենդանիներին, չէին սիրում քայլել, զբոսնել, իսկ ամենավատն այն էր, որ երեխաներն էլ դուրս չէին գալիս խաղալու, փողոցներում էլ չէին լսվում մարդկանց ու երեխաների ուրախ ձայները: Ամեն մեկը զբաղված էր իր գործով. կամ հեռախոսի մեջ էր, կա՛մ՝ համակարգչի, իսկ շատերը՝ միաժամանակ և՛ համակարգչի, և՛ հեռախոսի: Հեռախոսն ու համակարգիչն այնքան կարևորվեցին, որ սկսեցին վերևից նայել նույնիսկ իրենց՝ մարդկանց. չէ՞ որ ամեն օր մարդիկ հեռախոս ավելի շատ էին օգտագործում, քան գիրք կարդում, ավելի շատ էին հեռախոսով խաղեր խաղում, քան իրենց հարազատների հետ զրուցում: Համակարգիչն սկսեց իրեն թագավոր կարծել. իրենով էին կառավարում ամեն ինչ, իրենով էին դժվար թվացող հաշվարկներն անում ու էլի՛, էլի՛ շատ բաներ: Հեռախոսին ու համակարգչին թվում էր, թե առանց իրենց մարդիկ կձանձրանան, չեն կարողանա ապրել... Նրանք մոռացել էին, որ մինչև իրենց մոլորակ գալը մարդիկ ապրում էին շատ ուրախ ու հետաքրքիր կյանքով. նամակներ էին գրում իրար, իրար էին այցելում, խաղում էին իրար հետ ու էլի նման շատ տարբեր բաներ էին անում:



Օրերից մի օր հասարակ մի մարդու տանը մի դեպք պատահեց. տառը, հեռախոսն ու համակարգիչը վեճի բռնվեցին, թե իրենցից ո՞վ է ամենակարևորը մարդու կյանքում: Ամեն մեկը դիմացինին համոզում էր, որ մարդու համար ինքն է ամենաանհրաժեշտն ու ամենաօգտակարը: Նրանց վեճն այնքան ուժեղ էր, որ հարևան տների հեռախոսներն ու համակարգիչները ևս ուշադիր լսում էին նրանց խոսքերը. դե, իհարկե, հեռախոսները պաշտպանում էին հեռախոսին, իսկ հարևան տների համակարգիչները՝ իրենց ընկեր համակարգչին: Իսկ խեղճ տառը մնացել էր մենակ. հարևան տներում չկային ո՛չ գիրք, ո՛չ տետր, ո՛չ էլ որևէ մեկը, ով կկարողանար գրել տառերը թղթի վրա: Բայց տառը չէր հանձնվում:

– Գիտե՞ք, եթե ես չլինեմ,– ասում էր տառը,– մարդիկ չեն իմանա, թե ինչպես գրեն գրքեր, ինչպես արտահայտեն իրենց մտքերը: Եթե մարդիկ չիմանան գրել, չիմանան տառերն ու գիրն ընդհանրա–

պես, ապա չեն կարողանա նույնիսկ խոսել, չեն կարողանա անվանել առարկաներն իրենց անուններով: Նույնիսկ ձեր երկուսի անուններն իմ միջոցով եք ստացել: Հետո մարդիկ չեն կարողանա իրար նամակներ գրել, կդադարեն օգտագործել քեզ, հեռախո՛ս, ու նույնիսկ քեզ, համակարգի՛չ. դուք երկուսդ կդադարեք գոյություն ունենալուց: Ամեն ինչ ինձանից է սկսվում. ես չլինեմ՝ դուք էլ չեք լինի:

Համակարգիչը գոռոզ հայացքով չափեց տառին և հեռախոսին, ապա խրոխտ ձայնով ասաց.

– Տա՛ռ, հիմա մարդը իմ կարիքն ավելի շատ ունի, քան քո և հեռախոսի: Մարդը հիմա կախված է միայն ու միայն ինձանից. ինչքան կարևոր տեղեկություն կա աշխարհի մասին, բոլորն իմ մեջ է: Եթե ես ցանկանամ, մեկ վայրկյանում կարող եմ վերացնել այս մոլորակը և ստեղծել նորը: Հիմա ամեն ինչ կախված է ինձնից. մարդը չի կարող աշխատել առանց ինձ, իսկ եթե չաշխատի, ապա սոված կմնա, եթե չուտի, ապա կմահանա: Դրա համար էլ ես ամենակարևորն եմ մարդու կյանքում:

– Այդ ինչո՞ւ,– զարմացավ հեռախոսը,– երբ հարյուր հիսուն տարի առաջ դու չկայիր, մարդիկ չէի՞ն կարողանում ապրել: Առանց քեզ էլ կարող են շատ լավ ապրել: Մարդը շատ աշխատասեր է. քեզ էլ է ինքն այս մոլորակ բերել: Բայց ա՛յ առանց ինձ մարդը լիարժեք չի կարող ապրել: Ամենակարևորը ես եմ, նույնիսկ դու ես առաջացել ինձնից: Ես քո կարիքը չունեմ, բայց մարդիկ իմ կարիքը շատ ունեն: Եթե ես չլինեմ, մարդիկ չեն կարող խոսել իրենցից հեռու գտնվող ծնողների, բարեկամների և սիրելիների հետ: Իսկ եթե չխոսեն, ապա շատ կկարոտեն, իսկ եթե կարոտեն, ապա երջանիկ չեն լինի:

Ու հեռախոսը երկա՛ր-երկար խոսեց՝ չնկատելով, որ տառն ու համակարգիչը վաղուց չէին լսում իրեն:



Իրականում տառը, հեռախոսը և համակարգիչը չէին ուզում լսել իրար. ամեն մեկն իր խոսքն էր առաջ տանում, ամեն մեկը թվարկում էր միայն իր լավ կողմերը, բայց ոչ մեկը չէր տեսնում այն վնասը, որ տալիս էր մարդուն: Միայն տառն էր, որ ամենահամեստն էր նրանցից. միգուցե նա գիտեր, թե իր համար որքա՞ն շատ ծառեր են կտրվել ու հիմա էլ կտրվում են:

Նրանք այդպես դեռ երկար կշարունակեին վիճել, եթե տանտերը հանկարծ չմտներ սենյակ:

Սեղանի վրա կողք կողքի դրված հեռախոսը, համակարգիչը և թղթե տառերը շունչները պահած սպասեցին, թե ինչ է անելու գիրուկ տղամարդը: Տանտերը շատ զայրացած էր, այնքան զայրացած, որ կլոր դեմքը կարմիր էր կտրել, իսկ ձեռքերը դողում էին: Նա մոտեցավ սեղանին, վերցրեց հեռախոսն ու այնքան ուժեղ զարկեց հատակին, որ այն մաս-մաս եղավ: Վախեցած համակարգիչը նայեց տառին՝ կարծես օգնություն հայցելով: Նա հասկացավ, որ հերթն իրենն է. միայն թե ինքն էլ հեռախոսի բախտին չարժանանա: Տանտերը, սակայն, համակարգչի նկատմամբ ավելի մեղմ գտնվեց. պահարանից հանելով արկղը՝ համակարգիչը կոպտորեն գցեց մեջը և փակեց դրեց մութ պահարանում:

– Դե մնա այդտեղ՝ աչքիցս հեռու,– փնթփնթաց տանտերը.– հիմա ոչ ոք չի անհանգստացնի ինձ. ո՛չ հեռախոս ունեմ, ո՛չ համակարգիչ: Ժամանակն է վայելելու իմ կյանքն ընտանիքիս գրկում, ոչ թե ձեր:

Տառերը շունչները պահեցին. հերթն իրենց էր հասնում: Տառերը չէին հասկանում, թե ինչու տանտերն այդպես վարվեց, բայց շատ խղճացին հեռախոսին, մի քիչ էլ՝ համակարգչին:

– Իսկ ձեզ ես կտամ իմ փոքրիկ զարմիկին. նրա գրել-կարդալ սովորելու ժամանակն է,– նայելով սեղանի վրա դրված թղթե տառերին՝ ինքն իրեն ասաց տանտերը:– Դուք դեռ մեզ շա՛տ-շատ եք պետք գալու, քանի որ դեռ շատ սերունդներ ունեք կրթելու:

Տանտերը վերցրեց թղթե տառերն ու դրեց պայուսակի մեջ: Հետո ինքնագոհ նայեց ամեն ինչից ազատ իր սեղանին ու դուրս եկավ սենյակից:

Հարևան տների հեռախոսներն ու համակարգիչները, տեսնելով իրենց ընկերների վերջաբանը, բնավ չտխրեցին, մտածեցին՝ իրենք այնքան շատ են, որ մեկի կորուստը ոչինչ չի կարող փոխել: Ամեն մեկն անցավ իր գործին՝ այդ ամենից դաս քաղելով միայն մեկ բան. պետք չէ վիճել մի բանի շուրջ, որն առանց այդ էլ պարզ է. իրենք միշտ էլ կարևոր են լինելու մարդու կյանքում:

Այս վեճից հետո անցավ շատ ժամանակ: Ճիշտ է՝ շատ վայրերում մարդիկ դեռ անբաժան էին հեռախոսից ու համակարգչից, բայց աստիճանաբար նրանք սկսեցին գիտակցել, թե ինչ են բաց թողնում իրենց կյանքում հեռախոսի ու համակարգչի պատճառով: Ու կամաց-կամաց այդ տանտիրոջ նման մարդիկ սկսեցին մի կողմ դնել հե-

ռախոսներն ու համակարգիչները և զբաղվել իրենց կյանքով, իրենց երեխաներով ու սիրելիներով:

Ու այսպես տառի, հեռախոսի ու համակարգչի վեճն ավարտվեց: Նրանք մոռացել էին կարևոր մի բան. աշխարհում միայն մարդն է որոշում՝ ինչն է իր համար ամենակարևորը, նաև միայն մարդն է որոշում, թե իրեն որքան օգուտ և վնաս կարող են տալ հեռախոսն ու համակարգիչը:

Իսկ մենք միշտ պետք է հիշենք՝ ամեն ինչ ունի իր օգտակարության ու վնասի չափը: Դե, իսկ տառերն ու գրերը երբեք չեն կորցնում իրենց կարևորությունը:

Իսկ դուք համամի՞տ եք տանտիրոջ հետ:

Բառային աշխատանք

1. Հեքիաթից ձայնավորով սկսվող և ավարտվող վեց բա՛ռ դուրս գրիր:
2. Հեքիաթից բաղաձայնով սկսվող և ավարտվող վեց բա՛ռ դուրս գրիր:
3. Հեռախոս բառի հնչյուններից յուրաքանչյուրով սկսվող բառե՛ր գրիր:
4. Հեքիաթից դո՛ւրս գրիր բառեր, որ
   ա) *ի* ձայնավորը լինի երկու բաղաձայնների միջև,
   բ) *ու* ձայնավորը լինի երկու բաղաձայնների միջև:
5. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված արտահայտությունների բացատրությունը և գործածի՛ր շարադրանքում:

Տեքստային աշխատանք

1. Ներկայացրո՛ւ հեռախոսի և համակարգչի կարևորությունը մարդկության համար:
2. Նշի՛ր՝ ինչ կարևոր դեր ունի հեռախոսը քո կյանքում:
3. Նշի՛ր՝ ինչ ճանաչողական գիտելիքներ ես ստանում համակարգչից:
4. Բացատրի՛ր՝ որը կնախընտրես՝ հեռախո՞սը, թե՞ համակարգիչը: Ինչո՞ւ:
5. Տանտիրոջ փոխարեն ինչպե՞ս կվճռեիր հարցը:
6. Տանտիրոջ վարքագիծը ընդունելի՞ է քո կողմից:
7. Գտի՛ր հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը:

8. Բնութագրիր հեքիաթի հերոսներին: Կարևորիր նրանց դերը: Արտահայտիր կարծիքդ:

9. Համեմատիր տարբեր հեքիաթների տեքստեր, հերոսներին, նշիր նրանց տարբերությունները, նմանությունները, ձևակերպիր եզրակացություն:

10. Հեքիաթը մնջախաղով ներկայացրու՝ նախապես բեմագիր կազմելով: Ո՞ր հերոսի դերը կուզես ստանձնել. ինչու (խմբային աշխատանք):

ԲԱՂԱՁԱՅՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

Բաղաձայն հնչյունների արտաբերման ժամանակ բերանի խոռոչում արգելքներ են ստեղծվում: Բաղաձայնները միմյանցից տարբերվում են ըստ արտաբերման տեղի, ըստ արտաբերման եղանակի, ըստ ձայնի և աղմուկի հարաբերության, ըստ կազմության:

Մի դեպքում բաղաձայնների արտաբերման ժամանակ մասնակցում են ձայնալարերը (բ, գ, դ...), որոշ բաղաձայններ արտաբերվում են միայն աղմուկի միջոցով՝ առանց ձայնալարերի մասնակցության (պ, կ, տ...), մի մասն էլ արտաբերվում է ուժեղ շնչով (փ, ք, թ...): Հայերենի բաղաձայնները նման հատկանիշներով խմբավորելիս այսպիսի աղյուսակ կարելի է կազմել:

Եռաշարք բաղաձայններ		
բ	պ	փ
գ	կ	ք
դ	տ	թ
ձ	ծ	ց
ջ	ճ	չ

Երկշարք բաղաձայններ	
ղ	խ
զ	ս
ժ	շ
վ	ֆ
–	հ

Միաշարք բաղաձայններ
լ
մ
ն
ր
ռ
յ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

(1869–1923)

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Կենսագրություն

Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում:

Հուսահատված՝ մի օր նա վեր կացավ, թե՝ պետք է գնամ գտնեմ Աստծուն, տեսնեմ՝ ես երբ պետք է պրծնեմ այս աղքատությունից ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին պատահական հանդիպեց մի գայլի.

– Առա՛ջ բարի, մա՛րդ ախպեր, ո՞ւր ես գնում,– հարցրեց գայլը:

– Գնում եմ Աստծու մոտ,– պատասխանեց աղքատը.– դարդ ունեմ պատմելու:

– Դե որ գնաս Աստծու մոտ,– խնդրեց գայլը,– ասա՛՝ մի սոված գայլ կա, գիշեր–ցերեկ ման է գալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա՛՝ մինչև երբ պետք է սոված մնա. որ ստեղծել ես, ինչո՞ւ չես կերակուր հասցնում:

– Լա՛վ,– ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը: Շատ գնաց թե քիչ, պատահեց մի սիրուն աղջկա:

– Ո՞ւր ես գնում, ախպե՛ր,– հարցրեց աղջիկը:

– Գնում եմ Աստծու մոտ:

– Երբ որ Աստծուն տեսնես,– աղաչեց սիրուն աղջիկը,– ասա՛՝ այսպիսի մի աղջիկ կա՝ ջահել, առողջ, հարուստ, բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրեն. ի՞նչ պիտի լինի նրա ճարը:

– Կասեմ,– խոստացավ ճամփորդն ու գնաց, պատահեց մի ծառի, որ թեև ջրափին էր կանգնած, բայց չոր էր:

– Ո՞ւր ես գնում, ա՛յ ճամփորդ,– հարցրեց չոր ծառը:

– Գնում եմ Աստծու մոտ:

– Դե կանգնի՛ր, մի երկու խոսք էլ ես ապսպրեմ,– խնդրեց չոր ծառը.– Աստծուն կասես՝ այս ինչ բան է, բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ–ձմեռ չոր եմ մնում. ե՞րբ պետք է ես էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:

Այնքան գնաց, մինչև գտավ Աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մեջքը ժայռին դեմ տված, ալևոր մարդու կերպարանքով նստած էր Աստվածը:

– Բարի՛ օր,– ասաց աղքատն ու կանգնեց Աստծու առջև:

– Բարո՛վ եկար,– պատասխանեց Աստված,– ի՞նչ ես ուզում:

– Էն եմ ուզում, որ ամեն մարդու էլ հավասար աչքով մտիկ անես. մեկին ավար չանես, մյուսին՝ խավար. ես էնքան եմ տանջվում, աշխատում եմ, մեկ է, չեմ կարողանում՝ կուշտ փորով հաց ուտեմ, իսկ շատերը, որ իմ կեսի չափ էլ չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:

– Դե գնա՛, հիմի կհարստանաս. քո բախտը տվեցի, գնա՛ վայելիր,– ասաց Աստված:

– Էլի բան ունեմ ասելու, Տե՛ր,– ասաց աղքատն ու հայտնեց սոված գայլի, սիրուն աղջկա ու չոր ծառի ապսպրանքը:

Աստված բոլորի պատասխանը տվեց, և աղքատը շնորհակալություն ասաց ու հեռացավ:

Վերադարձին պատահեց չոր ծառին:

– Ինձ համար ի՞նչ ասաց Աստված,– հարցրեց չոր ծառը:

– Ասաց՝ քո տակին ոսկի կա. մինչև այդ ոսկին չհանեն, որ արմատներդ հողին հասնի, դու չես կանաչի,– պատմեց մարդը:

– Էլ ո՞ւր ես գնում, արի՛, ոսկին հանի՛ր, էլի՛, հա՛մ քեզ օգուտ կլինի, հա՛մ ինձ. դու կհարստանաս, ես էլ կկանաչեմ:

– Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ,– պատասխանեց աղքատը.– Աստված ինձ բախտ տվեց. ես շուտով պետք է գնամ, իմ բախտը գտնեմ, վայելեմ,– ասաց ու գնաց:

Հետո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կտրեց.

– Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

– Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, էն ժամանակ էլ տխուր չես լինի, ուրախ ու երջանիկ կլինես:

– Դե որ այդպես է, արի դու եղի՛ր իմ կյանքի մտերիմ ընկերը,– թախանձեց աղջիկը ճամփորդին:

– Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ. Աստված ինձ

բախտ է տվել, պետք է գնամ, իմ բախտը գտնեմ, վայելեմ,– ասաց աղքատն ու հեռացավ:

Ճանապարհին սպասում էր սոված գայլը: Հեռվից հենց որ տեսավ ճամփորդին, վազեց, առաջը կտրեց:

– Հը՛, Աստված ի՞նչ ասաց:

– Ախպե՛ր, Աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին, աղջիկն ապսպրեց, որ Աստծուն հարցնեմ, թե ինչու ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թե՝ ինչու է գարուն-ամառ ինքը չոր: Աստծուն պատմեցի, ասաց՝ աղջկան ասա՝ իր համար մի կյանքի ընկեր գտնի, կբախտավորվի, ծառին էլ ասա՝ քո տակը ոսկի կա, պետք է էդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչես: Եկա իրենց պատմեցի Աստծու ասածները: Ծառն ասաց՝ դե արի՛ հանի՛ր ոսկին, տա՛ր, աղջիկն էլ թե՝ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի՝ չէ՛, ախպե՛ր, չեմ կարող. Աստված ինձ բախտ է տվել. պետք է գնամ, իմ բախտը գտնեմ, վայելեմ:

– Իսկ ինձ համար ի՞նչ ասաց Աստված,– հարցրեց սոված գայլը:

– Քեզ համար էլ ասաց՝ էնքան սոված ման կգաս, մինչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:

– Էլ քեզանից անխելք մարդ որտեղի՞ց գտնեմ, որ ուտեմ,– ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին:

Բառային աշխատանք

1. Հեքիաթից դո՛ւրս գրիր հինգ բառ: Գրի՛ր դրանց հականիշները:

2. Հերոսների հաղորդակցության ընթացքում ո՞ր ինչերանգն է առավել գործածվում:

3. Կարդա՛ և հաշվի՛ր՝ քանի բառ կա հետևյալ նախադասության մեջ:

Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում:

4. Ընդգծի՛ր տրված բառազույգերն իրարից տարբերող տառերը և նշի՛ր նրանց առաջացրած իմաստային տարբերությունները:

կատար – կատակ	կարգ – կարթ
Դավիթ – գավիթ	բարկ – բարձ
հասակ – հատակ	դիմակ – դիտակ

5. Տրված բառերում մեկ ձայնավոր փոխելով՝ ստացի՛ր նոր բառ և ընդգծի՛ր փոխված ձայնավորը:

Արագ, *բերք*, *նուշ*, *կուպ*, *գնալ*, *շապ*, *գինդ*, *խանդ*, *ծուռ*, *հունդ*:

6. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի և արտահայտությունների բացատրությունը:

Տեքստային աշխատանք

1. Բնութագրի՛ր հեքիաթի հերոսներին:

Հ.	Հերոս	Բնութագիր
1.	Անխելք մարդ	
2.	Սոված գայլ	
3.	Սիրուն աղջիկ	
4.	Չոր ծառ	
5.	Աստված	

2. Արդարացրո՛ւ կամ մեղադրի՛ր հերոսներին: Ասածդ հիմնավորի՛ր:

3. Մեկնաբանի՛ր՝ որն է հեքիաթի բանալի բառը՝ խելքը, թե՞ բախտը: Ընտրելու դեպքում պատճառաբանի՛ր՝ ինչու:

4. Պարզի՛ր հեքիաթի վերնագրի ու բովանդակության կապը: Առաջարկի՛ր նոր վերնագիր:

5. Ինչո՞ւ է մարդը դժգոհում իր բախտից: Արդյոք մարդու անհաջողությունների պատճառը բա՞խտն է:

6. Դու քեզ բախտավոր համարո՞ւմ ես: Ինչո՞ւ:

7. Դու քեզ խելացի համարո՞ւմ ես: Ինչո՞ւ:

8. Հեքիաթին նոր ավա՛րտ հորինի՛ր:

9. Նկարի՛ր քո նախընտրած հերոսին:

10. Դիտի՛ր «Անխելք մարդը» մուլտֆիլմը և համեմատի՛ր հեքիաթի հետ: Գտի՛ր նմանություններ և տարբերություններ, լրացրո՛ւ Վենի գծակարգում (խմբային աշխատանք):

Մուլտֆիլմ



Լրացուցիչ նյութ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրո՛ւ հայկական ժողովրդական և հեղինակային հեքիաթներին բնորոշ առանձնահատկությունները:
2. Բացատրի՛ր հեքիաթի խորհրդանիշների իմաստը. ցո՛ւյց տուր իրականի և երևակայականի սահմանները, բարու և չարի պայքարը:
3. Ցո՛ւյց տուր հեքիաթում հանդիպող ազգային կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների, վարքուբարքի նկարագրությունները:
4. Համեմատի՛ր տարբեր ժողովուրդների հեքիաթներ, գտի՛ր և բացատրի՛ր տարբերություններն ու նմանությունները:
5. Համեմատի՛ր դրա հիման վրա նկարահանված կինոնկարի կամ թատերական ներկայացման հետ:
6. Հարստացրո՛ւ բառապաշարդ հեքիաթից սովորած նոր բառերով:
7. Կազմի՛ր գովազդի կամ հաղորդագրության տեքստ՝ ըստ որևէ հեքիաթի:
8. Արժևորի՛ր հեքիաթը՝ որպես անձի դաստիարակության միջոց:

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բաժնի ուսումնասիրությունն ավարտելուց հետո դու կկարողանաս հասկանալով կարդալ և կազմել հեքիաթում պատմվող դեպքերի պլան, տեքստից կառանձնացնես հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը, ցույց կտաս իրականի և երևակայականի սահմանները:

Ուսումնասիրության արդյունքում կկարողանաս վերաշարադրել հեքիաթի բովանդակությունն ըստ պլանի և ստեղծագործաբար կբնութագրես հեքիաթի հերոսներին՝ ըստ նրանց արարքների, կհամեմատես տարբեր հեքիաթների տեքստերը, հերոսներին, կնշես նրանց տարբերությունները, նմանությունները, կձևակերպես եզրակացությունը, կմատնանշես նախադասության տեսակներն ըստ հնչերանգի, ճիշտ կկետադրես նախադասությունները:



ԱՌԱԿՍ ԻՆՉ ԿՅՈՒՅԱՆԵ

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սիրելի՛ բարեկամ, «Առակս ի՞նչ կցուցանե» բաժնում ուսումնասիրվող թեմաները կնպաստեն հասկանալով ընթերցելու, առակի ժանրին բնորոշ առանձնահատկությունները ընկալելու, այլաբանությունը, առակի խրատական-դաստիարակիչ դերն ըմբռնելու, առակը վերլուծելու, սեփական դիրքորոշում ձևավորելու, բարոյական դասեր քաղելու կարողություններ ձևավորելուն, միաժամանակ կհարստացնեա քո բառապաշարը՝ ձևավորելով որոշակի վերաբերմունք առակի այլաբանական հիմքի շուրջ:

Բաժնի լեզվաբերականական նյութերը կնպաստեն կապակցված խոսքի մեջ դրանք կիրառելու քո կարողությունները զարգացնելուն:

ԻՆՉ Է ԱՌԱԿԸ

Առակը փոքրածավալ չափածո կամ արձակ բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որում ներկայացվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները, և խրախուսվում են բնավորության լավ գծերը: Այն բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից՝ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունից:

Առակները նախ առաջացել են ժողովրդական բանահյուսության մեջ, հետո գրվել կամ մշակվել են առակագիրների կողմից:

Առակներում որպես հերոսներ հանդես են գալիս կենդանիները և բույսերը, ինչպես նաև մարդիկ:

Մեզ հայտնի առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է: Աշխարհում հայտնի են նաև ռուս Ի. Կռիլովի, ֆրանսիացի Ժ. Լաֆոնտենի, գերմանացի Գ. Լեսինգի առակները:

Հայ գրականության մեջ առակագրությունն սկզբնավորվել է թարգմանությունների միջոցով (5-7-րդ դդ.): 12-13-րդ դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը: Հայ միջնադարյան լավագույն առակագիրներն են Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին:

Նոր ժամանակներում առակներ են գրել Խ. Աբովյանը, Ա. Իսահակյանը, Ա. Խնկոյանը, Մ. Կորյունը, Հ. Շիրազը և ուրիշներ:

Կենսագրություն

ԵԶՈՊՈՍ

(մոտ Ք.ծ.ա. 620–546)

ԵՂՋԵՐՈՒՆ ԵՎ ԽԱՂՈՂԸ

Եղջերուն, որսորդներից փախչելով, թաքնվեց խաղողի այգում: Որսորդներն անցան նրա կողքով, բայց չնկատեցին: Եղջերուն մտածեց, որ այլևս չեն տեսնի իրեն, ու սկսեց ուտել խաղողի տերևները: Բայց որսորդներից մեկը շուռ եկավ ու նկատեց նրան: Իր մոտ եղած տեգով նշան բռնեց և վիրավորեց եղջերուին: Ձգալով մոտալուտ մահը՝ եղջերուն հառաչելով ինքն իրեն ասաց.

– Տեղն է ինձ, խաղողի վազն ինձ փրկեց, իսկ ես ոչնչացրի այն:

Առակը վերագրվում է այն մարդկանց, որոնք նեղացնում են իրենց բարերարներին և պատժվում են:



Բառային աշխատանք

1. Ձայնավո՞ր, թե՞ բաղաձայն հնչյունով է սկսվում *եղջերու* բառը:

2. Ձայնավո՞ր, թե՞ բաղաձայն հնչյունով է սկսվում *որսորդ* բառը:

3. Առակում գտի՛ր *խորհել*, *ազատել*, *վերացնել* բառերի հոմանիշները:

4. ա) Ընդգծի՛ր այն բառերը, որոնք սկսվում են բաղաձայն հնչյունով:
Եղջերու, այգի, եղնիկ, էժանագին, ոզնի, երամ, ուղտ, որսորդ, փերև:

բ) Թվարկի՛ր հայերենի բաղաձայն հնչյունները:

5. Գրի՛ր տրված բառերի հնչյունների և տառերի քանակը: Նշի՛ր այն բառերը, որոնցում հնչյունների և տառերի քանակը հավասար չէ:

ա) առակ _____ դ) եղնիկ _____

բ) եղջերու _____ ե) իրենց _____

գ) ոչնչացնել _____ զ) որսորդ _____

6. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը և կազմի՛ր դրանց հոմանշային շարքերը՝ օգտվելով բառարանից:

Տեքստային աշխատանք

1. Բացատրի՛ր՝ ինչ է առակը և ինչով է տարբերվում հեքիաթից:
2. Թվարկի՛ր առակի բնորոշ հատկանիշները:
3. Մեկնաբանի՛ր եղջերուի խոսքը:
4. Արտահայտի՛ր սեփական տեսակետ առակի բովանդակության շուրջ:
5. Փոփոխի՛ր տրված տեքստը՝ նոր հերոսներ ավելացնելով:
6. Փորձի՛ր առակը նոր ձևով սկսել. շարունակի՛ր և ավարտի՛ր այն:
7. Առակի դիպաշարը (սյուժեն) ներկայացրո՛ւ ծաղրանկարով:
8. Նյութի բովանդակությանը համապատասխան նկարազարդումներ արա (ծեփի՛ր կամ ձեռքի այլ աշխատանքներ կատարիր):
9. Մնջախաղով, ժեստերի լեզվով հաղորդի՛ր նյութի բովանդակությունը:
10. Հայազգի ո՞ր բարերարի անունն է քեզ հայտնի: Պատմի՛ր նրա մասին:
11. Առակը վերաշարադրե՛ք նոր և հետաքրքիր պատումով, ելո՛ւյթ ունեցեք դասարանի առջև՝ ներկայացնելով ձեր մշակումը (խմբային աշխատանք):
12. Կարդա՛ եզոպոսյան լեզվի մասին տեղեկությունը և քննարկի՛ր: Համակարգչից և հանրագիտարանից օգտվելով՝ տեքստը հարստացրո՛ւ լրացուցիչ փաստերով:

ԵԶՈՊՈՍՅԱՆ ԼԵԶՈՒ (Եզոպոսի անունից)



Գրավոր կամ բանավոր խոսք, որտեղ հեղինակի մտքերն արտահայտվում են քողարկված ձևով, այսպես կոչված «կեղծ միջոցներով». այդ դեպքում մարդ իր մտքերն արտահայտում է այլաբանորեն, թափանցիկ ակնարկներով, փոխաբերական արտահայտություններով, շրջասությամբ:

13. Կարդա՛ և քննարկի՛ր ընկերներիդ հետ:

ԶՐՈՒՅՑ ԵԶՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Մի օր Քսանթոսը, ցանկանալով ճաշկերույթ տալ՝ ի պատիվ աշակերտների, Եզոպոսին կարգադրեց, որ գնա, աշխարհի ամենից լավ բանը գնի շուկայից և համեղ ճաշ պատրաստի:

– Շատ լավ, տե՛ր,– ասաց Եզոպոսը և գնաց:

Ճաշի ժամին յուրաքանչյուր աշակերտի առջև մի ման լեզու էր դրած:

– Ի՞նչ է սա,– հարցրեց Քսանթոսը զարմացած:

– Լեզու, տե՛ր իմ:

– Մի՞թե սա է աշխարհի ամենալավ բանը, հիմա՛ր,– գոռաց Քսանթոսը:

– Ասացե՛ք, տե՛ր իմ,– պատասխանեց Եզոպոսը,– ի՞նչ կա աշխարհում ավելի լավ, քան լեզուն. լեզուն է հասարակական կյանքի շաղկապը, ճշմարտության և իմաստության գործիքը, գիտությունների բանալին: Առանց լեզվի ինչպե՞ս կզարգանար ուսումն ու գիտությունը, առանց լեզվի ինչպե՞ս մարդիկ միմյանց պիտի հայտնեին իրենց ուրախությունը կամ վիշտը, իրենց հուզող մտքերը:

Բոլոր աշակերտները, նրանց հետ նաև Քսանթոսը հավանություն տվեցին Եզոպոսի բացատրությանը:

Մի ուրիշ անգամ Քսանթոսն ասաց Եզոպոսին.

– Եզոպո՛ս, գնա՛ շուկա և այս անգամ աշխարհի ամենավատ բա՛նը բեր մեզ համար:

Եզոպոսը գնաց շուկա և դարձյալ լեզու բերեց: Քսանթոսը բարկությունից իրեն կորցրել էր:

– Հանդարտվե՛ք, տե՛ր իմ,– ասաց Եզոպոսը,– ի՞նչ կա աշխարհում ավելի վատ, քան լեզուն. դրանով են կործանվում բոլոր պետությունները, դրանով են կատարվում բոլոր ստերը, կեղծիքներն ու բամբասանքները, դրանով են մարդիկ վիրավորական խոսքեր ասում միմյանց և դրանով են վերջապես թագավորներն արձակում իրենց անարդար հրամանները: Լեզուն, տե՛ր իմ, աշխարհի ամենալավ և ամենավատ բանն է, նայած թե ում բերանի մեջ է գտնվում այն, նայած թե ով է լեզվի տերը:

– Դու հաղթեցիր, Եզոպո՛ս,– ասաց Քսանթոսը՝ զայրույթը զսպելով:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻ

(12-րդ դարի վերջ-13-րդ դարի սկիզբ)

Կենսագրություն

ԲԱՐԻՆ ՈՒ ՉԱՐԸ

Մի մարդ կար՝ անունը Բարի: Նա ուներ մի կացին, մի թի և մի փարչ: Եվ սրա գործն այն էր, որ ճանապարհներ էր պատրաստում, որի դիմաց հաց էին տալիս, որ ուտեր, ապրեր:

Մի ուրիշ մարդ՝ անունը Չար, եկավ Բարու մոտ և ասաց.

– Ապրենք միասին:

– Դու գիտես, եղբայր,–պատասխանեց Բարին:

Սա մի քանի օր մնաց Բարու մոտ: Մի օր Չարը գողացավ թին ու կացինը, իսկ ջրամանը կոտրեց: Երբ ծարավեցին, գնացին ջրհոր՝ ջուր խմելու, Չարը Բարուն նետեց ջրհորը, ու ինքը հեռացավ:

Եկան երկու քաջք, նստեցին հորի բերանն ու սկսեցին խոսել.

– Երեք տարի է, ինչ թագավորի աղջիկը դի-վահար է եղել: Մի հեշտ դեղ կա, որ ոչ ոք չգիտե: Եթե մեկը երեք մազ պոկի իր գլխից և թագավորի աղջկա առջև ծխացնի, նա կլավանա:

– Յոթ կարաս ոսկի կա այսինչ տեղը պահած,– ասում է մյուսը,– մարդ որ հանի, լավ կհարստանա:

Բարին լսեց այս խոսակցությունը և մտքում պահեց:

Եկան ճանապարհորդներ ու նրան հանեցին հորից:

Բարին նախ գնաց և լավացրեց թագավորի աղջկան: Թագավորը դստերը տվեց նրան կնության, և նա դարձավ թագավորի փեսա:

Ապա գնաց հանեց յոթ կարաս ոսկին:

Մի օր էլ՝ զբոսանքի ժամանակ, հանդիպեց Չարին:

– Ինչպե՞ս հասար այդ հաջողությանը,– հարցրեց Չարը:

– Հորն ընկնելով,– պատասխանեց Բարին:

Եվ գնաց Չարը, ընկավ ջրհորը:

Կրկին եկան այն երկու քաջքերը և նստեցին հորի վրա:

– Այն օրը, որ զրուցեցինք այստեղ, հորի մեջ մարդ է եղել, որը գնացել ու բուժել է թագավորի աղջկան և յոթ կարաս ոսկին էլ տարել:

Նրանք զայրացան ու ջրհորը քարով լցրին:

Այսպիսով, Չարը չարով կորավ, իսկ Բարին բարությամբ լցվեց: Ով ուրիշին հոր փորի, ինքը կընկնի մեջը:

Բառային աշխատանք

1. Տեքստում գտիր *վարս*, *աղջիկ*, *արքա*, *ամուսնացնել* բառերի հոմանիշները:

2. Համեմատիր *ջրհոր* և *ջրաման* բառերը: Բառերի արմատներով նոր բառեր կազմիր:

3. Բացատրիր *կացին* բառի իմաստը: Ինչ ստեղծագործություններ գիտես, որոնցում հանդիպել ես այդ բառին:

4. Բնագրում գտիր բառեր, որոնց տառերի և հնչյունների քանակը հավասար չէ:

5. Բնագրում գտիր բառեր, որոնց բոլոր ձայնավորները ա են:

Նմուշ՝ պատասխան:

6. Ինչ թվեր են գործածված առակում: Հիշիր առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, որոնցում գործածված են այդ թվերը:

Նմուշ՝ Յոթ որդով սեղան նստել:

7. Տրված բառերից յուրաքանչյուրում փոխիր մեկ ձայնավոր և նոր բառ ստացիր:

Հոգնել, *համբերել*, *վարք*, *բերք*, *արագ*:

Նմուշ՝ հորթ–հարթ:

8. Յուրաքանչյուր բառի երկու բաղաձանների արանքում տեղադրիր որևէ ձայնավոր և ստացիր նոր բառ:

Կարճ, *մարգ*, *արտ*, *կանչել*, *կարգ*, *քարտ*:

Նմուշ՝ կարճ–կարիճ:

9. Բառարանում գտիր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը և գործածիր նախադասությունների մեջ:

Տեքստային աշխատանք

1. Նոր վերնագիր առաջարկիր առակին՝ բովանդակությունից ելնելով:
2. Մեկնաբանիր առակի վերնագրի ու բովանդակության կապը:
3. Նշիր առակի հիմնական միտքն արտահայտող նախադասությունը:
4. Բնութագրիր առակի հերոսներին՝ նշելով նրանց արարքների դրդապատճառները:

Հերոս	Արտաքին նկարագիրը	Արարքի երկու վարքագիծ	Ինչու այդպես վարվեց:
Բարի			
Չար			
Քաջքեր			

5. Ուրիշ ավարտ հորինիր առակին:
6. Ըստ ձեզ՝ բարին միշտ հաղթում է չարին. հիմնավորեք պատասխանը (խմբային աշխատանք): Իրական կյանքում էլ է բարին հաղթում չարին:
7. Վ. Այգեկցուց ընտրիր առակ, որի գլխավոր հերոսը աղվեսն է: Առակից մի դրվագ արտահայտիր նկարով: Նշիր՝ ինչ է խորհրդանշում աղվեսը:
8. Տեքստից դուրս գրիր եզրակացությունն արտահայտող նախադասությունը:
9. Հիշիր հեքիաթ, որի բովանդակությունը շատ նման է սրան: Գտիր նմանություններ և տարբերություններ:

ԲԱՌ ԵՎ ՎԱՆԿ

Եկեք «Բարին և չարը» առակից դուրս գրենք բառեր, որոնք օդի մեկ մղումով են արտասանվում՝ գործ, յոթ, հոր և այլն: Այժմ դուրս գրենք բառեր, որոնք օդի երկու և ավելի մղումով են արտասանվում՝ բարի, կացին, թագավոր, ժամանակ և այլն:

Օդի մեկ մղումով արտասանվող ինչյունը կամ ինչյունախումբը կոչվում է վանկ:

Մեկ վանկից կազմված բառերը միավանկ են: Երկու և ավելի վանկերից կազմված բառերը բազմավանկ են: Առանց ձայնավորի վանկ չի կարող կազմվել: Վանկի ձայնավորը կոչվում է վանկարար հնչյուն, բաղաձայնը՝ ոչ վանկարար հնչյուն, օրինակ, բարի բառի վանկարար հնչյուններն են՝ ա, ի, ոչ վանկարար հնչյունները՝ բ, ր: Բառի մեջ որքան ձայնավոր կա, այդքան էլ վանկ կա: Բարի բառը երկվանկ է, քանի որ երկու ձայնավոր ունի՝ ա, ի:

Վանկը կարող է կազմվել նաև միայն մեկ ձայնավորով, օրինակ՝ ա-ռակ, ու-տել, օ-րի-նակ:

Ձայնավորով վերջացող կամ միայն ձայնավորով կազմված վանկը կոչվում է բաց վանկ, օրինակ, տա-րի, բա-րի, մա-տա-նի, ա-նա-լի բառերի վանկերը բաց են:

Բաղաձայնով ավարտվող վանկը կոչվում է փակ վանկ, օրինակ՝ Վար-դան, որ-սորդ, եղ-նիկ բառերի վանկերը փակ են:

Լսվող, բայց չգրվող ը հնչյուն ունեցող վանկը կոչվում է գաղտնավանկ: Ը-ն գրվում է վանկատման և տողադարձի ժամանակ, օրինակ՝ կը-թություն, ջը-րաման, դուս-տը:

Լինում են նաև մեկուկեսվանկանի բառեր: Դրանք այն բառերն են, որոնք կազմված են մեկ լիարժեք վանկից և գաղտնավանկից, օրինակ՝ արկ(ը)դ, տետ(ը)ր, մ(ը)կրատ, ն(ը)կար և այլն:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ
(1914–1984)

Կենսագրություն

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՎԵՃԸ

Աստղերը մի օր լուսնյակին ասին.
– Ինչո՞ւ են անվերջ խոսում քո մասին.
Բանաստեղծները՝ լուսնոտի նման,
Մեզ էլ են գովում, բայց քեզ՝ անսահման...
Մինչդեռ մի հատ ես, մենք՝ հազա՛ր մի հատ...
Եվ լուսինն ասաց.
– Միջյունն էլ է շատ,
Այնինչ առյուծը մի ձագ է ծնում,
Միջակն հազար է, հանճարը՝ մի հատ,
Աշխարհում լավը միշտ քիչ է լինում,
Ծաղկունքը քիչ են, խոտերը՝ անհամար,
Վարդը մի հատ է, տերևը՝ հազար:
Վա՛ր նայեք դուք ձեր գոռոզ բարձունքից,
Տեսե՛ք՝ աղբյուրն էլ աղի ծովի հետ
Ծնվում է մի մոր անմահ ակունքից,
Բայց նա է ցրում ծարավները հավետ,
Ոսկին էլ փոքր է, արևն էլ մի հատ,
Բայց նա է ցրում խավարն անընդհատ,
Այն, որ աստղերդ ցրել չեք կարող,
Անթիվ աստղերդ, այն էլ դարերով...
Ինչ որ մի հատիկ արևը կանի,
Չեն կարող անել աստղերն անհունի:

Բառային աշխատանք

1. Առակից դո՛ւրս գրիր միավանկ, երկվանկ, եռավանկ բառեր:

Միավանկ բառեր	Երկվանկ բառեր	Եռավանկ բառեր

2. Առակից դուրս գրիր 4-ական բաց, փակ, գաղտնավանկ ունեցող բազմավանկ բառեր և համապատասխանաբար տեղադրիր եռայուն աղյուսակում:

Բաց վանկ	Փակ վանկ	Գաղտնավանկ



3. Գտիր հանելուկի պատասխանը և նշիր այդ բառի վանկերի քանակն ու տեսակը:

Թափանցիկ է, ապակի չէ,
Տաքին մահանում, ցրտին ապրում է:

4. Արտագրիր հանելուկը և յուրաքանչյուր բառ վանկատիր: Նշիր վանկերի տեսակը:

Նմուշ՝ թա-փան-ցիկ, թա (բաց), փան (փակ), ցիկ (փակ):

5. Արտագրիր բառերն ու յուրաքանչյուրի դիմաց գրիր հնչյունների ու տառերի քանակը:

Սպիտակ, նկար, մկրատ, գրպան, գրիչ, գոհար, ընկեր, Երևան, երեկո, էակ, որմնադիր, ամենաառատակյալ, ողորկ, անհերևակայելի, անորոշ, Եվրոպա, ոսկի:

6. Բառարանում գտիր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը:

Տեքստային աշխատանք

1. Կարդա՛ առակը, ինքնուրույն ձևակերպիր մտքերդ և պատմիր առակից ստացած քո տպավորությունների մասին:

2. Տարբերիր և առանձնացրու գլխավոր միտքը (մտքերը) երկրորդականից, վերաշարադրիր համապատասխան տրամաբանական հերթականությամբ՝ ըստ մտադրության և նախօրոք կազմած պլանի:

3. Բնութագրիր աստղերին և լուսնյակին: Նշիր՝ նրանցից որն է մարդու կյանքում ավելի կարևոր: Ինչու:

4. Առակում ինչու են հակադրվում առյուծն ու մրջյունը, ծաղիկներն ու խոտերը, վարդն ու տերևը, աղբյուրն ու աղի ծովը, արևն ու խավարը: Բնութագրիր յուրաքանչյուրին՝ ասածդ հիմնավորելով:

5. Վերլուծի՛ր առակում հիշատակված իրանիշ հերոսների դերը բնության մեջ և մեր կյանքում (առյուծն ու մրջյունը, ծաղիկներն ու խոտերը, վարդն ու տերևը, աղբյուրն ու աղի ծովը, արևն ու խավարը)՝ փաստերով հիմնավորելով:

6. Մեկնաբանի՛ր հետևյալ տողը՝ «Աշխարհում լավը միշտ քիչ է լինում»: Դու երբևէ հանդիպե՞լ ես լավ մարդու: Պատմի՛ր նրա մասին: Ո՞վ է լավ մարդը քո պատկերացմամբ:

7. Հավերժական վեճը ինչո՞վ կարելի է ավարտել: Ո՞վ է հաղթում. չէ՞ որ աստղերն ու լուսինը անբաժան են: Բացատրի՛ր ընտրությանդ շարժառիթը:

ՇԵՇՏ

ԲԱՌԱՅԻՆ ՇԵՇՏ

Բառի որևէ ձայնավորի ուժգին արտասանությունը կոչվում է շեշտ: Դա բառային շեշտն է:

Հայերենում շեշտակիր վանկը կայուն դիրք ունի: Բազմավանկ բառերում այն վերջին վանկն է: Միավանկ բառերում շեշտվում է միակ ձայնավորը, բազմավանկ բառերում՝ վերջին վանկի ձայնավորը, օրինակ՝ վա՛րդ, ակո՛ւնք, բանաստե՛ղծ: Բառերի վերջում նոր արմատներ, վերջածանցներ կամ վերջավորություններ ավելանալիս շեշտը տեղափոխվում է նոր ավելացած մասի վերջին վանկի ձայնավորի վրա, օրինակ՝ վարդակակա՛չ, ակունքի՛ց, բանաստեղծակա՛ն: Այդ պատճառով հայերենում շեշտը կայուն-շարժական է:

Եթե բառի վերջին ձայնավորը ը-ն է, շեշտը նախավերջին վանկի ձայնավորի վրա է ընկնում, օրինակ՝ ծո՛վը, առյո՛ւծը, ա՛ստ(ը)ղ: Եթե բառի միակ ձայնավորը ը-ն է, շեշտը դրվում է այդ ձայնավորի վրա, օրինակ՝ թը՛խկ, շը՛խկ:

Եթե բառը և-ով է ավարտվում, շեշտը դրվում է նրա վրա, օրինակ՝ արև՛, Պարգև՛:

Վերջին վանկի շեշտադրման կանոնից կան շեղման դեպքեր.

1. Մի քանի բառերում շեշտվում է առաջին վանկը՝ մի՛թե, գո՛նե, գո՛ւցե, մա՛նավանդ, նո՛ւյնիսկ, նո՛ւյնքան, նո՛ւյնպես, ո՛րևէ, ի՛նչևէ և այլն:

2. – *երորդ* վերջնաբաղադրիչով բառերում այդ բաղադրիչը չի շեշտվում. շեշտվում է առաջին բաղադրիչը՝ որերորդ, քանիերորդ, քսաներորդ:

3. Շեշտվում է հարադրավոր բառերի առաջին բաղադրիչը՝ պար գալ, միտք անել, գլուխ բերել:

4. Օտար բառերը հայերենում ուղիղ ձևով գործածվելիս պահպանում են իրենց բնորոշ շեշտադրությունը՝ քիմիա, ռադիո, Իտալիա:

Գրավոր խոսքում այդ շեշտերը սովորաբար չեն դրվում:

Սակայն կան դեպքեր, երբ շեշտը գրավոր խոսքում միշտ դրվում է: Դրանք են

ա) հրաման արտահայտող բայական ձևերը՝ ասա՛, գրի՛ր, նկարի՛ր, մի՛ գրիր,

բ) հաստատում կամ ժխտում արտահայտող պատասխանական բառերը՝ այո՛, ո՛չ, չէ՛,

գ) կրկնվող շաղկապները՝ և՛..., և՛..., թե՛..., թե՛..., կա՛մ..., կա՛մ..., էլ..., էլ...:

Չեն շեշտվում հետևյալ բառերը՝ մերթ..., մերթ..., մեկ..., մեկ..., ոչ մի..., ոչ մի...:

դ) Այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե խոսքն ում է ուղղված, օրինակ՝ – Դու գիտես, *եղբայր*,– պատասխանեց Բարին:

Շեշտ

Կայուն – շարժական

Շեշտվում է բառի վերջին վանկի ձայնավորը:

Բացառություններ՝ **ուրեմն**, **երբեմն**, **միթե**, **նույնիսկ**, **երբևէ**, **երբևիցե**, **վեցերորդ**, **ծանր**, **քաղաքը**

Չեն շեշտվում՝ **ի** նշան, **ըստ** այդ, **ընդ** որում, քանի՛ **որ**, մինչև՛ **իսկ**, գլուխ **տալ**, պար **արի**, դուրս **գնա**, գրում **եմ**, բայց՝ **չեմ** գրում, երգում **եմ**, բայց՝ **չեմ** երգում:

Առաջադրանքներ

1. Գրի՛ր հետևյալ բառերը՝ բառային շեշտերը դնելով:

Առակագիր, *հայր*, *տղա*, *ոչ*, *ընտանիք*, *ծանր*, *երբեք*, *իհարկե*, *շուտ արի*, *ներիր*, *վերցրու*, *սիրտ անել*, *պառկել*, *որերորդ*, *բռնվել*, *փախչել*, *ոտք*, *բարև*, *մի փակիր*:

2. Բացատրի՛ր՝ ընդգծված բառերում շեշտադրման որ դեպքերն են կիրառված (շեշտերն ի՛նքդ դիր):

ա) Լսիր, որդիս, պատգամ որպես
Սիրող քո մոր խոսքը սրտանց...

բ) – Չէ,– ասում է հարևանը,– արտը քեզ փոխ եմ տվել:

գ) – Ո՞վ ես, ներս արի,– կանչում է մի ձայն:

դ) – Հեյ, Գուրմիկ, այդ ինչպե՞ս ես մարզվում, որ քեզնից ոչ մի կաթիլ չի պակասում:

3. Մեկական նախադասությո՛ւն կազմիր *և՛..., և՛...*, *թե՛..., թե՛...*, *մեկ..., մեկ...* կրկնվող բառերով:

4. Տրված առակում այլ հերոս (հերոսներ) ավելացրո՛ւ՝ գործողություններին նոր ընթացք հաղորդելով:

Արտույտը, վախենալով, որ երկինքը փուլ կգա, պառկեց մեջքի վրա, ոտքերը վեր տնկեց և աշխատեց դեմ տալ երկնքին: Տեսնողները ծիծաղեցին նրա վրա և ասացին.

– Ա՛յ խելքի ծով ճնճղուկ, դու ո՞նց կարող ես քո ծղոտե ծնկներով պահել երկինքը:

Թռչունը պատասխանեց.

– Ես իմ բաժին երկինքն եմ պահում:

ԲԱՌԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ: ՀՈԴԱԿԱՊ

Բառը խոսք կազմող լեզվական միավոր է, որն ունի իմաստ և ինքնուրույն գործածություն: Այն կազմված է հնչյուններից (հազվադեպ մեկ հնչյունից) և ունի բառային շեշտ, օրինակ՝ կրակ, աղավնի՛, հրացա՛ն:

Բառի հիմնական մասը արմատն է: Արմատից բացի բառի մեջ կարող են լինել նաև ածանցներ և վերջավորություններ: Բառերն ըստ կազմության կարող են լինել պարզ, բարդ և ածանցավոր: **Միայն մեկ արմատից կազմված բառերը կոչվում են պարզ բառեր,** օրինակ՝ ջուր, մարդ, առու, ու:

Պարզ բառերն ինքնուրույն գործածություն ունեցող արմատներն են:

Երկու և ավելի արմատներից կազմված բառերը կոչվում են բարդ բառեր, օրինակ՝ ջրհոր, տղամարդ, առվեզր:

Բարդ բառերի կազմությանը մասնակցում է նաև **հոդակապը**: Հոդակապը արմատների կամ ածանցի ու արմատի միջև գործածվող ա ձայնավորն է, օրինակ՝ արձակագիր, նկարազարդ, վերջաբան, պարագիծ:

Հոդակապը երբեմն կարող է «թաքնված» լինել՝ հնչյունափոխությամբ միացած լինելով նախորդ արմատի ի ձայնավորին (ի + ա = ե), օրինակ՝ բարի+ա+տես–բարետես, կղզի+ա +խումբ–կղզեխումբ:

Հոդակապն իմաստից զուրկ է: Սակայն երբեմն հանդիպում են միայն հոդակապի առկայությամբ և առանց հոդակապի տարբերվող բառազույգեր, օրինակ՝ արջորս–«արջ որսացող», արջաորս–«արջ որսալը», հրձիգ–«բորբոքող, հրահրիչ», հրաձիգ–«հրացանով կրակող մարդ»:

Բարդ և ածանցավոր բառերի կազմում ա և ո ձայնավորներից հետո կարող է հանդես գալ նաև յ ձայնակապը, օրինակ՝ արքայամայր, գոյապայքար, երեկոյան:

Իրենց կազմում ածանց կամ ածանցներ ունեցող բարդ բառերը կոչվում են բարդաածանցավոր բառեր, օրինակ՝ գրչատուփ, գրքասեր, միջնադար:

ԻՎԱՆ ԿՌԻԼՈՎ

(1769–1844)

Կենսագրություն

ՈՐՍՈՐԴ ԱՌՅՈՒԾԸ

Առյուծը՝ անտառի արքան,
Շանը, գայլին ու աղվեսին
Հարևան էր մոտիկ այնքան,
Որ մի անգամ,
Երբ որ նորից հանդիպեցին,
Նրանց ասաց.



– ...Եկեք չորսով դուրս գանք որսի
Ու մեր բռնածը բաժանենք չորսի:
– Եվ չգիտեմ՝ ինչպես, աչքովս չեմ տեսել,
Առաջինը աղվեսը մի եղնիկ ճանկեց,
Ընկերներին շտապ լուր ուղարկեց,
Որ գան ու որսը հավասար կիսեն.
Ինչ որս էր՝ ուղղակի անմահական:
Ու ընկերներն իսկույն եկան:

Առյուծն էլ ժամանեց.
Սուր ճիրանները դուրս հանեց,
Տաք մսի մեջ խրեց,
Ընկերներին մի կողմ հրեց,
Նայեց չորս կողմը գազազած,
Պատառոտեց եղնիկին ու ասաց.

– Ուրեմն այսպես. մենք չորսս ենք:
Հիմա եկեք կիսենք...
Այս մասն իմն է, տեսեք՝
Ըստ որոշած մեր պայմանի:

Այս մեկն էլ ինձ՝ որպես առյուծ արքա:
Սա էլ իմն է, թող փորձի մեկը ձայն հանի,
Իսկ այս մեկին ով թաթը տա,
Տեսնեմ կմնա՞ նա կենդանի:

Բառային աշխատանք

1. Տրված պարզ բառերը միացնելով՝ կազմի՛ր բարդ բառեր:

ա) *շուն* + *գայլ*, բ) *առյուծ* + *սիրտ*, գ) *չորս* + *կողմ*, դ) *ծուռ* + *թաթ*, ե) *արքա* + *նարինջ*, զ) *աղվես* + *սունկ*, է) *միս* + *ջուր*, ը) *ձուկ* + *որս*, թ) *հարևան* + *սեր*, ժ) *քսան* + *չորս*:

2. Խմբավորի՛ր բառերը:

Հոդակապով բարդ բառեր	Անհոդակապ բարդ բառեր

Արևահամ, *գարեհաց*, *բնաշխարհ*, *ցուցամատ*, *հացթուխ*, *աղաման*, *կատվառյուծ*, *թատերախումբ*, *ասպվածաշնորհ*, *փղոսկր*, *տեսանյութ*, *բարձրակատար*, *մեծբերան*, *գարեջուր*, *եղյամապատ*, *գլխացավ*, *եղ-բորորդի*, *ձկնկիթ*:

3. Հետևյալ բառերին արմատներ ավելացնելով՝ կազմի՛ր հոդակապով և անհոդակապ բարդ բառեր:

ա) *առյուծ*, բ) *գայլ*, գ) *չորս*, դ) *համ*, ե) *արքա*, զ) *թաթ*, է) *լուր*, ը) *ձայն*, թ) *կողմ*, ժ) *մաս*:

Նմուշ՝ որս–որսաշուն, ձկնորս:

4. Գրի՛ր հետևյալ բառերի հոմանիշները:

Արքա, *հարևան*, *ձիրան*, *եղնիկ*, *նորից*:

5. Ինչպե՞ս են կոչվում առյուծի, գայլի, արջի, շան ձագերը:

6. Առյուծն անտառի արքան է: Ի՞նչ են կոչում

ա) *թռչունների արքային*, բ) *ծառերի արքային*, գ) *ծաղիկների արքային*, դ) *ֆուտբոլի արքային*, ե) *ծիծաղի արքային*, զ) *օղակների արքային*:

Տեքստային աշխատանք

1. Թվարկի՛ր առակի հերոսներին:

2. Ինչո՞ւ է առակը վերնագրված «Որսորդ առյուծը»: Ներկայացրո՛ւ վերնագրի այլընտրանքային տարբերակ՝ ընտրությունդ հիմնավորելով:

3. Մեկ նախադասությամբ ներկայացրու՛ առակի հիմնական գաղափարը:
4. Առակը հաղորդի՛ր արձակ շարադրանքով՝ պահպանելով հեղինակային բառապաշարը:
5. Հաղորդի՛ր առակի բովանդակությունը սեփական բառերով և արտահայտի՛ր վերաբերմունքդ:
6. Ինչո՞ւ առյուծն այդպես վարվեց: Մեղադրի՛ր կամ արդարացրու՛ առյուծին:
7. Առակն ընդարձակի՛ր երկխոսություններով՝ գործողությունները ներկայացնելով աղվեսի դիրքերից:
8. Ներկայացրու՛ առակի գործող հերոսների փոխհարաբերությունները (ով ում է օգնում, խաբում, սիրում, ատում, պատժում ...). բե՛ր ասածդ հիմնավորող փաստեր:
9. Ներկայացրու՛՝ ինչ արժեք և վերաբերմունք ձևավորվեց քո մեջ առակն ուսումնասիրելիս:
10. Համեմատի՛ր առակի հերոսների արարքները, առանձնացո՛ւ լավն ու վատը, մերժելին և ընդունելին:
11. Բացատրի՛ր՝ ինչու է ագահությունը հաճախ ծնում չարիք, ավերածություն:

ԱԾԱՆՑ: ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ: ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ ԵՎ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

Արմատներին լրացուցիչ իմաստներ տվող և նոր բառեր կազմող բաղադրիչները կոչվում են **ածանցներ**:

Հայերենում ածանցները կարող են ավելանալ արմատի կամ բառի սկզբից և վերջից:

Արմատին կամ բառին սկզբից ավելացող ածանցը կոչվում է **նախածանց**, օրինակ՝ ան + տուն, առ + ողջ, գեր + մարդ, ց + այգ:

Արմատին կամ բառին վերջից ավելացող ածանցը կոչվում է **վերջածանց**, օրինակ՝ տն+ակ, ամառ + ային, պոչ + ատ, հայ + երեն:

Մեկ արմատից և մեկ կամ ավելի ածանցից կազմված բառերը կոչվում են ածանցավոր:

Ըստ ածանցի դիրքի՝ լինում են **նախածանցավոր** և **վերջածանցավոր** բառեր: Դրանց կազմում կարող է լինել նաև հոդակապ կամ բառակազմական այլ մասնիկ, օրինակ՝ անաղմուկ, տկար, դատավոր, կաթնային:

Նախածանցավոր բառերը կազմվում են նախածանցից կամ նախածանցներից և արմատից, օրինակ՝ նախագահ, համարձակ, մակերես, անստորագիր:

Վերջածանցավոր բառերը կազմվում են մեկ արմատից և մեկ կամ ավելի վեջածանցից, օրինակ՝ թևավոր, խայթոց, հաղթանակ, դասարանային:

Առանձնանում են նաև **համածանցավոր** բառերը, որոնց կազմում կան նախածանց, արմատ և վերջածանց, օրինակ՝ ստորջրյա, առողջական, անմահական:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՎԵԼ ԳՈՐԾՈՒՆ ԱԾԱՆՑՆԵՐԸ

Նախածանցներ

ամենա– (ամենաբարի, ամենամեծ)	համ(ա)– (համազգեստ, համերգ)
ան– (անգետ, անհաղթ)	մակ(ա)– (մակագրել, մակերես)
ապ– (ապօրինի, ապուշ)	նախ(ա)– (նախագահ, նախաձաշ)
առ– (առանձին, առողջ)	չ– (չկամ, չխոսկան)
արտ(ա)– (արտանկար, արտերկիր)	ստոր(ա)– (ստորակետ, ստորերկրյա)
բաց(ա)– (բացարձակ, բացակա)	վեր(ա)– (վերադարձ,վերսկսել)
գեր(ա)– (գերաշնորհ, գերկարճ)	տ– (տգեղ, տհաճ)
դժ– (դժգոհ, դժգույն)	տրամ(ա)– (տրամագիծ, տրամադիր)
ենթ(ա)– (ենթասպա, ենթակա)	ց– (ցտեսություն, ցմահ)
ընդ– (ընդհանուր, ընդմիջում)	փոխ(ա)– (փոխադրել, փոխարքա)

Վերջածանցներ

–(ա)բար (հերոսաբար, հայրաբար)	–(ե)րորդ (հինգերորդ, երրորդ)
–(ա)գին (ահագին, ուժգին)	–եք (արժեք, երբեք)
–(ա)գույն (նվազագույն, մեծագույն)	–ի (վայրի, աղի)
–ածո, –ածու, –ծու (չափածո, ժողովածու, շինծու)	–իկ (շնիկ, փոքրիկ)
–ակ (գետակ, դռնակ)	–իչ (երգիչ, գրիչ)
–ական (գրական, մեկական)	–լիկ (սուտլիկ, բկլիկ)
–ակի (շեշտակի, եզակի)	–կան (լացկան, խռովկան)
–ային (խմբային, ձմեռային)	–մունք (հուզմունք, սխալմունք)
–անակ (հաղթանակ, մրցանակ)	–յա (արծաթյա, տասնամյա)
–(ա)նոց (մրջնանոց, ամառանոց)	–յալ (որակյալ, դարձյալ)
–(ա)պես (վերջապես, խորապես)	–յակ (հարսնյակ, հնգյակ)
–(ա)ստան (Հայաստան, մրգաստան)	–յան (հայկյան, արևելյան)
–ավետ (ծաղկավետ, բուրավետ)	–յուն (մռնչյուն, հնչյուն)
–(ա)վոր (գլխավոր, լուսավոր)	–ոն (ծամոն, կտրոն)
–ատ (կիսատ, թևատ)	–ովի (ընտրովի, ընկերովի)
–արան (դասարան, նվագարան)	–ոտ (փշոտ, աղմկոտ)
–արդ (գմբեթարդ, խորանարդ)	–որդ (որսորդ, ձախորդ)
–ացի, –եցի, –ցի (գյուղացի, լոռեցի, դասարանցի)	–որեն (ջերմորեն, ազնվորեն)
–ացու (հարսնացու, մսացու)	–ոց (դպրոց, ամրոց)
–ացք (լվացք, գնացք)	–սուն (երեսուն, ութսուն)
–ե (թղթե, ծղոտե)	–վածք (պատմվածք, ասացվածք)
–եղ (թիկնեղ, ուժեղ)	–ու (վերարկու, կծու)
–եղեն (խմորեղեն, ամանեղեն)	–ություն (հարստություն, ուրախություն)
–ենի (նռնենի, հնամենի)	–ուկ (հանելուկ, գայլուկ)
–երեն, –արեն (անգլերեն, չինարեն)	–ուհի (տիրուհի, պարուհի)
	–ույթ (մրցույթ, նորույթ)
	–ունք (ծաղկունք, իրավունք)
	–ուց (դեղնուց, նեղուց)
	–ք (վազք, տարիք)

Առաջադրանքներ

1. Յուրաքանչյուր շարքից ընտրիր մեկ ածանց, մեկ արմատ և նախածանցավոր բառ կազմիր:

առ–	վերջ
ան–	այգ
տ–	ողջ
ց–	ձև
ամենա–	միշտ
ընդ–	արագ

2. Յուրաքանչյուր շարքից ընտրիր մեկ արմատ, մեկ ածանց և վերջածանցավոր բառ կազմիր:

ուրախ	–ուկ
պատիվ	–ություն
գետ	–ավոր
լաց	–ակ
ծով	–կան
սև	–ային

3. Կազմիր ածանցավոր բառեր միևնույն արմատով (բառով) և տարբեր ածանցներով (երկուական):
Երգ, *զգայուն*, *կամք*, *վարժ*, *հուն*, *հատակ*, *արդյունք*, *բախտ*, *գիծ*, *շնորհ*, *արձակ*, *երևույթ*, *կշռել*, *կարգ*, *ձայն*, *օգուտ*, *աշխարհ*, *աճ*:
Նմուշ՝ երգ–համերգ, նախերգանք:

4. Առակ հորինիր՝ բարոյախրատական մաս դարձնելով հետևյալ առածը:
Աղվեսի դունչը խաղողին չհասավ, ասաց՝ խակ է:

5. Գրիր նման իմաստ արտահայտող առած և մեկնաբանիր:

ՏՈՒՆԸ

(հայկական ժողովրդական առակ)

Մի մայր ու տղա էին ապրում իրենց անշուք տնակում:

Կանաչազարդ այգով մի փոքրիկ առու էր անցնում: Սառնաշունչ առվի ափերին գորտերն ամեն օր կռկռում էին, սոսիները՝ մեղմօրոր խշշում, իսկ տղան անընդհատ դժգոհում էր, մորն ասում.

– Արդեն ձանձրացել, հոգնել եմ. ամեն օր գորտերը կռկռում են,

ծառերը՝ անուրախ խշխշում: Գնալու եմ աշխարհը ման գամ, մի լավ տեղ ճարեմ, հետ գամ ու քեզ էլ հետս տանեմ:

Մտամոլոր տղան վեր է կենում ու գլխիկոր գնում իր երազանքի հետևից: Շատ է շրջում, թափառականի կյանքով ապրում, շատ բաներ է տեսնում, բայց ոչ մի տեղի սիրտը չի կպչում: Հոգին անսահման խռով, կարոտը սրտում՝ նորից վերադառնում է իր հայրենի տնակը՝ իր ալեհեր ու գթասիրտ մոր մոտ, ու ասում.

– Իմ սիրասո՛ւն մարե, շատ տեղեր ման եկա, շա՛տ ու շատ բաներ տեսա, հսկա ու հրաշակերտ պալատներ տեսա, հանդիպեցի շատ մեծահարուստների, բայց ոչ մեկը չասաց՝ նե՛րս արի, մի քիչ տաքացի՛ր, մի պատառ հա՛ց կեր: Իմ փոքր ու անշուք տնակը, իմ պզտիկ ու նախշուն այգին, իմ քչքչան առվակը, իմ կոկռան գորտերը, իմ խշխշան ծառերն աշխարհի ոչ մի բանի հետ չեմ փոխի...



Բառային աշխատանք

1. *Ման գալ*, *տեղ ճարել*, *աշխարհը շրջել*, *սիրտը կպչել* բայերի իմաստն արտահայտի՛ր մեկ բառով:
2. *Սառնաշունչ*, *մեղմօրոր*, *մտամոլոր*, *ալեհեր*, *գթասիրտ* բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:
3. Առակից դո՛ւրս գրի՛ր ածանցավոր բառերը: Առանձնացրո՛ւ արմատն ածանցից:

   Նմուշ՝ Փոքրիկ–փոքր–իկ:
4. Գրի՛ր *պզտիկ* բառի գրական համարժեքը:
5. *Սառնաշունչ*, *մտամոլոր*, *ալեհեր*, *անշուք*, *նախշուն* բառերի հոմանիշների և հականիշների շարքե՛ր կազմի՛ր:

   Նմուշ՝ ալեհեր, զառամյալ–երիտասարդ:

6. Տեքստից դուրս գրիր ածանցավոր, հոդակապով և անհոդակապ կազմություն ունեցող բառերը և համապատասխանաբար խմբավորիր եռայուն աղյուսակում:

Ածանցավոր բառեր	Հոդակապով բարդ բառեր	Անհոդակապ բարդ բառեր

7. *Առու*, *գորտ*, *կոկռալ*, *սոսի*, *խշխշալ*, *տղա*, *դժգոհ*, *երազանք*, *շրջել*, *գլխիկոր*, *վերադառնալ*, *հայրենի*, *տուն* բառերով նոր տեքստ հորինիր:

8. Համեմատիր և ըստ հատկանիշների խմբավորիր վերևի բառերը (առարկա և գործողություն ցույց տվող բառեր):

Առարկա ցույց տվող բառեր	Գործողություն ցույց տվող բառեր

Տեքստային աշխատանք

1. Վերարտադրիր առակի բովանդակությունը պարզ նախադասություններով:

2. Վերնագիրը կապիր տեքստի իմաստի հետ:

3. Վերնագրիր առակը տեքստից ընտրված բանալի բառերով: Հիմնավորիր ընտրությունդ:

4. Տեքստը բաժանիր երկու մասի, վերնագրիր յուրաքանչյուր մասը և որոշիր հիմնական միտքն արտահայտող նախադասությունները:

5. Որոշիր տեքստում նկարագրած իրադարձությունների միջև եղած կապերը, մոտավոր ժամանակաշրջանը: Ներկայացրու քո մտորումները:

6. Ինչ խորհուրդ ունի հայրենի տունն այս առակում:

7. Կամ աշխարհում որևէ վայր, որ հայրենի տնից թանկ լինի քեզ համար: Հիմնավորիր պատասխանդ:

8. Շարունակիր տեքստը՝ նոր ավարտ հորինելով առակին:

9. Արտահայտիր քո վերաբերմունքը տղայի և նրա գործողությունների նկատմամբ:

10. Համեմատիր առակը քեզ ծանոթ այլ ստեղծագործության (մուլտֆիլմ, մանկական կինոնկար և այլն) հետ, պատմիր նրանց նմանությունների և տարբերությունների մասին:

11. Առակում պատկերած պատմությունը ի՞նչ խոհեր ծնեց քո մեջ: Թվարկի՛ր դրանք:

12. Կարմիրով նշված բառերի բացատրությունը գտի՛ր բառարանում և պատմելիս կիրառի՛ր դրանք:

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բառի ձևափոխության կամ նոր բառեր կազմելու ընթացքում բառային շեշտը տեղափոխվում է նոր ավելացած մասի վերջին ձայնավորի վրա: Նախկին ձայնավորի արտասանությունը թուլանում է: Հայտնվելով թույլ դիրքում՝ նա կարող է ենթարկվել փոփոխության: Կարող է վերածվել ուրիշ ձայնավորի կամ դուրս մղվել, օրինակ, մարդասեր բառի մեջ շեշտն ընկնում է վերջին սեր վանկի ե ձայնավորի վրա՝ մարդասե՛ր, իսկ մարդասիրական բառի մեջ շեշտը տեղափոխվում է վերջին վանկի ա ձայնավորի վրա՝ մարդասիրակա՛ն: Կամ երբ դպիր բառին ավելացնում ենք –ոց վերջածանցը, ի ձայնավորը, կորցնելով շեշտը, դուրս է մղվում՝ դպրոց:

Որևէ ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությունը կամ սղումը կոչվում է հնչյունափոխություն:

Հայերենում հնչյունափոխության են ենթարկվում է(ե), ի, ու ձայնավորները և յա, ույ, յու երկհնչյունները, նաև գաղտնավանկի ը-ն:

Է(Ե) ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բառասկզբի է-ն, շեշտը կորցնելով, երեք բառում փոխվում է ի-ի: Այդ բառերն են էգ–իգական, էշ–իշատեր, էջ–իջնել:

Բառամիջի փակ վանկի է-ն (գրվում է ե-ով) փոխվում է ի-ի, օրինակ՝ մեջ–միջուկ, վեպ–վիպագիր, կես–կիսամյակ:

Բառասկզբում և բառավերջում ե-ն չի հնչյունափոխվում, օրինակ՝ երեկո–երեկոյան, միջօրե–միջօրեական:

Առաջադրանքներ

1. Տրված բաղադրիչները միացնելով՝ բառեր կազմիր:

   ա) *էշ* + *ա* + *տեր*, *շեկ* + *ա*+ *հեր*, *դեմ(ք)* + *ա* + *նկար*, *մեգ* + *ա* +*պատ*, *վեպ* + *ա* + *գիր*, *գեն(ք)* + *ա* + *կոչ*, *վեմ* + *ա* + *փոր*, *տեր* + *ա* + *կալ*, *հրավեր* + *ա* + *տոմս*:

   բ) *հանդես* + *ավոր*, *գեր* + *ուկ*, *կես* + *ատ*, *դեմ(ք)* + *ակ*, *պարտեզ* + *պան*:

2. *Վեճ*, *սեգ*, *գես*, *տեր*, *սեգ*, *նվեր* արմատներից բառեր կազմիր այնպես, որ հնչյունափոխություն տեղի ունենա:

   Նմուշ՝ կես + ատ = կիսատ (ե > ի):

Կենսագրություն

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

(1875–1957)

ԿԱՔԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Կաքավը, մի օր քարից քար անահ
Ցատկելով, խաղով ոտ դրեց հանկարծ
Քարերի միջին միամիտ քնած
Աղվեսի վրա:
Սոսկալի արկած:
Հազիվ մի վայրկյան,
Կաքավն աղվեսի գրկումն էր դաժան:
Բախտը որ ուզենա,
Քնած տեղդ էլ
Քո դուռը կգա:
– Անոթությունից քուն էի մտել,
Բայց աստված հոգաց,–
Ձվարթ քրքիջով աղվեսն ասաց:
– Աստծու ճամփածն եմ, այդ լավ գիտեմ ես,
Դու, աստվածընտիր, դու, օրհնյալ աղվես,–

Երկյուղած ասաց կաքավը նրան.–
Նաև գիտցիր դու,
Որ ուտել առանց աստծուն փառք տալու,
Մեծ մեղք է հոգուդ:
– Իրավ ես, անշուշտ,–
Աղվեսը հավանեց և ձեռքերն իսկույն
Բարձրացրեց վեր և բազկատարած.
– Փառքդ շատ, աստվա՛ծ...–
Աղոթքն սկսեց, հազիվ սկսած՝
Զարմանքով տեսավ՝
Ժայռի կատարին
Կաքավը թառած
Երգում է ուրախ.
«Շաղկղա՛, կաղկղա՛...»:
Ինչ ծաղր ու ծիծաղ...
Ձայրույթով լցված՝
Աղվեսը զարկեց գլուխը քարին,
Դառնասիրտ ասաց.
– Տեղն է հիմարին,
Թող քաղցած մնա:
Եվ աշխարհիս մեջ թող անիծվի նա,
Ով, դեռ չկերած,
Աստծուն փառք կտա:

Բառային աշխատանք

1. ա) Արտագրի՛ր հետևյալ բառերը և ընդգծի՛ր այն տառերը, որոնք երկու հնչյունից են կազմված:

Վերջ, *երգ*, *կենդանի*, *երազ*, *համբերել*, *քառորդ*, *երկուշաբթի*, *սրբիչ*, *էգ*, *խնդիր*:

բ) Շարքից ընտրի՛ր երեք բառ, կազմի՛ր նոր բառեր և նշի՛ր կատարված հնչյունափոխությունը:

2. Բնագրում գտի՛ր եռավանկ բառեր, նշի՛ր վանկարար հնչյունները:

3. Գտի՛ր *կապար*, *սոսկալի*, *ծիծաղ*, *գիրկ*, *ուրախ* բառերի հոմանիշները:

4. Գտի՛ր *օրհնյալ*, *դառնասիրտ*, *զայրույթ*, *բազկապարած*, *երկյուղած* բառերի արմատները: Այդ արմատներով նոր բառեր կազմիր:

5. Առակից դո՛ւրս գրիր բարդ բառերը և դրանց արմատներով ածանցավոր բառեր կազմիր:

6. *Երկյուղած* բառի տառերով նոր բառեր կազմիր և որոշի՛ր դրանց հնչյունների և տառերի քանակը:

7. Առակից դո՛ւրս գրիր ժողովրդախոսակցական բառերը և գրի՛ր դրանց գրական համարժեքը:

8. Կազմի՛ր առակից սովորած բառերի բացատրական բառարան՝ բառերը դասավորելով այբբենական կարգով:

9. Կարդա՛ առակը և քննարկի՛ր ընկերներիդ հետ՝ բացահայտելով առակի բարոյախրատական իմաստը:

Մի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում. նա երկու ոտքով կաղ էր: Զինվորներից մեկը նրան ասաց.

– Ո՞վ ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող:

Իսկ նա պատասխանեց.

– Ո՞վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու:

«Իմաստուն զինվորը», Վարդան Այգեկցի

ա) Առակից դո՛ւրս գրիր *է(ե)* ձայնավորի հնչյունափոխությանը վերաբերող բառ: Բացատրի՛ր հնչյունափոփոխությունը:

բ) Գտի՛ր *խելացի*, *կռիվ* բառերի հոմանիշները:

գ) Գտի՛ր *զինվոր*, *հաղթել*, *ոտք* բառերի արմատները և դրանցով նոր բառեր կազմիր:

10. Բառաշղթայի բաց թողնված վանդակները համապատասխան տառերով լրացրո՛ւ այնպես, որ ստանաս *ե*-ով սկսվող յոթ բառ:



Տեքստային աշխատանք

1. Մատնանշիր առակի կառուցվածքը՝ սկիզբը, ընթացքը, ավարտը, խրատաբանությունը:
2. Առանձնացրու առակի գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը:
3. Քո բառերով ներկայացրու առակը որպես ականատես:
4. Բնութագրիր կաքավին: Ըստ կաքավի վարքագծի՝ ներկայացրու հնարամիտ մարդուն:
5. Բնութագրիր աղվեսին: Ըստ աղվեսի վարքագծի՝ ներկայացրու կարճամիտ և անխելք մարդուն:
6. Բացատրիր՝ ում ես խղճում: Ինչու:
7. Առակի բովանդակությունից ելնելով՝ մեկնաբանիր կենդանիների արարքների դրդապատճառները:
8. Առակը քննարկիր ընկերներիդ հետ: Մեղադրիր կամ արդարացրու հերոսներից յուրաքանչյուրին: Հորինիր առակ՝ դրսևորելով սեփական դիրքորոշում:
9. Համեմատիր քո ուսումնասիրած տարբեր ժողովուրդների արձակ և չափածո առակների տեքստերը, նշիր նմանություններ և տարբերություններ:

Ի ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Մի շարք միավանկ բառերի բառասկզբի ի-ն փոխվում է ը-ի, օրինակ՝ իղձ–ըղձալ, ինձ «կենդանի»–ընձուղտ, ինչ(ք)–ընչաքաղց:

2. Մի շարք միավանկ բառերի փակ վանկի ի-ն փոխվում է ը-ի, օրինակ՝ գիծ–գ(ը)ծել, գիր–գ(ը)րող, թիվ–թ(ը)վանշան, սիրտ–ս(ը)րտոտ:

3. Բազմավանկ բառի փակ վանկի ի-ն կարող է

ա) փոխվել ը-ի, օրինակ՝ արձիձ–արձ(ը)ձագույն, նարինջ–նար(ը)նջագույն,

բ) սղվել, ինչպես՝ դեղին–դեղնուց, ծաղիկ–ծաղկել, գեղեցիկ–գեղեցկություն:

4. Բազմավանկ բառի վերջին բաց վանկի ի-ն

ա) -ակ վերջածանցից առաջ փոխվում է յ-ի, օրինակ՝ աղավ-նի-աղավնյակ, կղզի-կղզյակ, որդի-որդյակ, պատանի-պա-տանյակ,

բ) հոդակապին կամ -ական վերջածանցին միանալով՝ դառ-նում է ե՝ ի+ա=ե, օրինակ՝ գարի+ա+հաց-գարեհաց, որդի+ա+ սեր-որդեսեր, տարի+ա+վերջ-տարեվերջ, պատանի+ական-պատանեական,

գ) ձայնավորից առաջ սղվում է, օրինակ՝ բարի-բարություն, փոշի-փոշոտել: Որոշ բառերում կարող է չընկնել, օրինակ՝ որ-դի-որդիական, քաղաքացի-քաղաքացիություն:

Առաջադրանքներ

1. Համեմատիր դեմ դիմաց գրված բառերը և բացատրիր՝ ինչ հնչյու-նափոխություն է կատարվել (հնչյունի փոփոխություն, բառի որ դիրքում, շեշտի տեղափոխություն, սղում):

Իղձ-ըղձական, միշտ-մշտապես, ճշմարիտ-ճշմարտախոս, որդի-որ-դեսեր:

2. Հետևյալ բառերը լրացրու համապատասխան սյունակներում:

Գրադարան, դեղնակտուց, կենդանական, մրգատու, հոգյակ, ալյակ, Սարգսյան, գերություն, ծաղկման, կղզյակ:

Ի-ն դարձել է *ը:*	*Ի*-ն դարձել է *յ:*	*Ի*-ն սղվել *է:*

3. Գտիր հանելուկի պատասխանը:

Անհուն կապույտ է կտրում ու անցնում,
Մեզ գիրկը առած՝ հեռուներ տանում,
Ճախրում է ծով ու ցամաքի վրա,
Գուշակեք՝ ինչ է անունը նրա:

ա) Այդ բառի երկրորդ արմատով բառեր կազմիր:

բ) Բացատրիր հնչյունի փոփոխությունը:

4. Փակագծերում տրված բառերի օգնությամբ կազմիր նոր բառեր՝ նշելով կատարված հնչյունափոխությունը:

Ուղի (*գորգ*), թիվ (*նշան*), գին (*նիշ*), գարի (*ջուր*), ծաղիկ (*բույլ*), դե-ղին (*երիզ*), խնդիր (*գիրք*), սիրտ (*կից*), բարի (*տես*), երկիր (*գունդ*):

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

(12-րդ դար)

Կենսագրություն

ՃՆՃՂՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Ճնճղուկները երամով գնացին արագիլի մոտ և աղաչեցին նրան.

– Թո՛ւյլ տուր մեզ ձագեր հանել քո բնի մեջ և պաշտպանի՛ր մեր ձագերին օձերից:

– Ինձ համար ի՞նչ կանեք,– ասաց արագիլը,– որ կատարեմ ձեր կամքը:

– Կաղոթենք մշտապես,– պատասխանեցին ճնճղուկները,– որ ձեր ձագերը առողջ լինեն և զերծ մնան վնասակար օդից ու եղանակից:

Արագիլը տեղ տվեց նրանց:

Երբ ճնճղուկները ձագ հանեցին, օձը սողաց դեպի բույնը՝ նրանց ձագերին ուտելու: Արագիլը սպանեց այդ օձին և սկսեց փնտրել ամենուրեք, որ ոչնչացնի բոլոր օձերին՝ ճնճղուկների ձագերին փրկելու համար:

Առակս ուսուցանում է կարեկցել տկարներին ու թույլերին և ցանկանալ, որ ազատություն վայելեն նրանք:

Բառային աշխատանք

1. Առակից դո՛ւրս գրիր *ի* ձայնավորի հնչյունափոխությանը վերաբերող երկու բառ: Բացատրի՛ր հնչյունի փոփոխությունը:

2. Լրացրո՛ւ բաց թողած տառերը:

Ձա_, աղոթ_, առո_ջ, օ_, կարե_ցել:

3. Հետևյալ արմատներով բառե՛ր կազմի՛ր՝ *օդ*, *օձ*, *երամ*, *բույն*, *թույլ*:

4. Բառաշարքից դո՛ւրս գրիր *ի* ձայնավորի հնչյունափոխությանը վերաբերող բառերը:

Հոգյակ, *աղավնյակ*, *օթյակ*, *գասնյակ*, *ալյակ*, *խոյակ*, *լուսնյակ*, *քառյակ*, *նահիրյան*, *կոնյակ*, *սարյակ*, *հարյուրյակ*, *ոսկյա*, *պարանյակ*, *որդյակ*:

5. Բառաշարքից դուրս գրիր այն բառերը, որոնցում *ի*-ն սղվել է:
Կրթություն, *կավճոտ*, *դարբնոց*, *վարչություն*, *խաճուղի*, *թիկենի*, *մտավորական*, *դեղնակարմիր*, *թշնամաբար*, *փոթորկահույզ*, *վարչապետ*:

Տեքստային աշխատանք

1. Բնութագրիր արագիլի վարմունքը:
2. Գտիր առակի բանալի բառերը:
3. Պատմելիս ճիշտ երանգավորիր նախադասությունները (պատմել, հարցնել, խնդրել, հրամայել, բացականչել):
4. «Ինչ է, ով է» հանրագիտարանից արագիլի մասին հաղորդում պատրաստիր:
5. Գնահատիր գործող հերոսներին և նրանց վարքը (բարի՞ է, չա՞ր է, լա՞վ վարվեց, վա՞տ վարվեց):
6. Մտաբերիր կամ հյուսիր նման պատմություն և համեմատիր հերոսներին:

ՈՒ ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Մի շարք բառերի բառասկզբի ու-ն փոխվում է ը-ի, օրինակ՝ ումպ–ըմպանակ, ունդ–ընդեղեն, ունչ–ընչացք, ունկ–ընկալուչ:

2. Մի շարք միավանկ բառերի փակ վանկի ու-ն փոխվում է ը-ի, օրինակ՝ թութ–թ(ը)թենի, ձուկ–ձ(ը)կնորս, ռումբ–ռ(ը)մբակոծություն:

3. Բազմավանկ բառի վերջին փակ վանկի ու-ն

ա) փոխվում է ը-ի, օրինակ՝ ժողովուրդ–ժողով(ը)րդական, հարուստ–հար(ը)ստանալ:

բ) սղվում է, ինչպես՝ գարուն–գարնանային, մածուն–մածնաթան:

4. Բառավերջի բաց վանկի ու-ն ձայնավորից առաջ հիմնականում փոխվում է վ-ի, օրինակ՝ առու–առվակ, կատու–կատվաձագ:

Որոշ բառերում չի հնչյունափոխվում, օրինակ՝ վերարկուի, հարսնացուի:

Առաջադրանքներ

1. Համեմատիր դեմ դիմաց գրված բառերը և բացատրիր՝ ինչ հնչյունափոխություն է կատարվել:

   Ումպ–ըմպանակ, *նուռ–նռնաձաղիկ*, *նուշ–նշաձև*, *գունդ–գնդասեղ*, *գալուստ–Գալստյան*, *թթու–թթվահամ*, *կապու–կապվաձագ*:

2. Տրված արմատներից ածանցավոր և բարդ բառեր կազմիր: Բացատրիր հնչյունափոխությունը:

   Մեղու, *ամուր*, *ջուր*, *շուն*, *սուր*, *գութ*, *առու*, *շուրջ*:

3. Ո՞ր բառերում *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա՝

   Դաշտամուկ, *սնափառ*, *թթվահամ*, *դափնեվարդ*, *կաղնեփայտ*, *կապվաձագ*, *ձկնկիթ*, *հոգեպես*:

4. Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների վերնագրերից որո՞ւմ *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա:

   «Ուլիկը» (հեքիաթ), «Փարվանա» (բալլադ), «Գելը» (պատմվածք), «Թմկաբերդի առումը» (պոեմ): Գրիր այդ արմատի անհնչյունափոխ ձևը:

5. Մուկ և ձուկ բանալի բառերով առակ հորինիր:

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Յա երկհնչյունը փոխվում է է-ի (գրվում է ե-ով), օրինակ՝ գործունյա–գործունեություն, քրիստոնյա–քրիստոնեություն, վայրկյան–վայրկենական:

2. Ույ երկհնչյունը փակ վանկում

ա) փոխվում է ու-ի, ինչպես՝ գույն–գունավոր, զրույց–զրուց–ընկեր,

բ) սղվում է, ինչպես՝ սառույց–սառցարան, կապույտ–կապտել,

գ) փոխվում է ը-ի, ինչպես՝ բույն–բ(ը)նավեր:

3. Յու երկհնչյունը քիչ դեպքերում կարող է

ա) դառնալ ը, ինչպես՝ ձյուն–ձ(ը)նծաղիկ:

բ) դառնալ ե, ինչպես՝ միություն–միութենական,

գ) սղվել, ինչպես՝ արյուն–արնանման:

Առաջադրանքներ

1. Համեմատիր դեմ դիմաց գրված բառերը և բացատրիր հնչյունափոխությունը:

   Մարյան–մարենադարան, *կապույտ–կապտաթույր*, *ձյուն–ձնեմարդ*, *հույս–հուսադրել*, *լույս–լուսացույց*, *զրույց–զրուցագիրք*:

2. *Թույր–թյուր*, *բույր–բյուր* բառազույգերով նախադասություններ կազմիր: Բացատրիր իմաստները:

3. Հետևյալ բառերից կազմիր բառեր, որում *ույ* երկհնչյունը փոխվի *ու*-ի:

   Մշակույթ, *արտույտ*, *զրույց*, *լույս*, *հույս*:

ՀԻՍՈՒՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Հիսուսն իր միտքն ավելի պարզ և հասկանալի դարձնելու համար ժողովրդի հետ խոսում էր առակներով:

ԵՐԵՔ ԾԱՌԱՆԵՐԻ ԱՌԱԿԸ

(ըստ Մատթեոսի Ավետարանի)

Մի մարդ օտար երկիր գնալիս կանչեց իր ծառաներին և իր ունեցվածքը նրանց հանձնեց: Մեկին հինգ արծաթ տվեց, մեկին՝ երկու, մեկին՝ մեկ արծաթ և ճանապարհ ընկավ:

Նա, ով հինգ արծաթ էր ստացել, անմիջապես գնաց, դրանցով գործարքներ կատարեց և հինգ արծաթ ևս շահեց: Նա, ով երկու արծաթ էր ստացել, երկուսը շահեց: Իսկ նա, ով մեկ արծաթ էր ստացել, գնաց, հողը փորեց և իր տիրոջ արծաթադրամը թաքցրեց:

Որոշ ժամանակ անց վերադարձավ ծառաների տերը և նրանցից իր տվածը պահանջեց: Առաջինը մոտեցավ նա, ով հինգ արծաթ էր ստացել, և ևս իր ավելացրած հինգը ներկայացրեց.

– Տեր, ինձ հինգ արծաթ տվեցիր, ահա հինգ արծաթ ևս շահեցի:

Տերը նրան ասաց.

– Կեցցես, բարի և հավատարիմ ծառա: Քանի որ այդ քչի մեջ հավատարիմ եղար, քեզ ավելին կբաշխեմ: Արի՛, հավիտյան ուրախացի՛ր քո տիրոջ հետ:

Մոտեցավ նա, ով երկու արծաթ էր ստացել, և ևս իր ավելացրած երկուսը ներկայացրեց.



– Տեր, ինձ երկու արծաթ տվեցիր, ահա երկու արծաթ ևս շահեցի:

Տերը նրան ասաց.

– Կեցցես, բարի և հավատարիմ ծառա: Քանի որ այդ քչի մեջ հավատարիմ եղար, քեզ ավելին կբաշխեմ: Արի՛, հավիտյան ուրախացի՛ր քո տիրոջ հետ:

Մոտեցավ նա, ով մեկ արծաթ էր ստացել և ասաց.

– Տեր, գիտեի, որ խիստ մարդ ես. վախեցա, գնացի և քո այս արծաթը հողի մեջ թաքցրի: Ահա այն:

Տերը դիմեց նրան և ասաց.

– Դու պետք է իմ արծաթ դրամը գոնե դրամափոխների մոտ դնեիր, որ վերադառնալիս տոկոսով պահանջեի այն, ինչ իմն էր: Սրանից վերցրեք այդ արծաթը և տվեք նրան, ով տասը արծաթ ունի:

Որովհետև յուրաքանչյուր ոք, ով շնորհ ունի, նրան կտրվի և կշատացվի, իսկ ով չունի, նրանից կվերցվի նաև ունեցածը:

Բառային աշխատանք

1. Առակում գտի՛ր երկինչյուն ունեցող բառեր: Այդ բառերից մեկին ավելացրու՛ վերջածանց: Բացատրի՛ր ինչյունի փոփոխությունը:

2. *Մարգ*, *գրամ* բառերը կարդա՛ հակառակ ուղղությամբ, նշի՛ր օրինաչափությունը: Նման բառազո՛ւյգ գտիր «Երեք ծառաների առակում»:

3. Բնագրում գտի՛ր երկու բարդ բառ, որոնք նույն արմատն ունեն:

4. ա) Նշի՛ր տրված բառերի երկհնչյունները:
Հավիտյան, *ներկայացնել*, *յուրաքանչյուր*:

բ) Այդ բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:

5. Լրացրո՛ւ բաց թողնված *ույ* կամ *յու* երկհնչյունները և բառերն աղյուսակում խմբավորի՛ր:
Ընկ_զ, *ողջ_ն*, *ձ_թ*, *զգ_շ*, *ա_նակ*, *աղ_սակ*, *ալ_ր*, *պա_սակ*, *բ_ր*, *բ_ր*, *հ_ս*, *հ_ս*, *ա_ն*, *ա_ն*, *առ_ծ*, *ողջ_ն*, *աշխ_ժ*, *շառաչ_ն*, *հնչ_ն*, *կապ_տ*, *հ_ր*, *մ_ս*:

ույ	յու

Տեքստային աշխատանք



1. Ներկայացրո՛ւ առակի բովանդակությունը:
2. Բնութագրի՛ր ծառաներից յուրաքանչյուրին:
3. Ճի՛շտ վարվեց տերը երրորդ ծառայի հանդեպ:
4. Արդարացրո՛ւ երրորդ ծառային: Հիմնավորի՛ր կարծիքդ:
5. Արդյոք մեղավո՞ր էր տերը: Դրիքորոշո՛ւմ արտահայտիր:
6. Գրի՛ր նամակ երրորդ ծառային:
7. Եթե դու լինեիր ծառաներից որևէ մեկի փոխարեն, ինչպե՞ս կվարվեիր:
8. Ի՞նչ սովորեցիր այս առակից:
9. Դո՛ւրս գրիր առակի խրատական մասը և քննարկի՛ր ընկերներիդ հետ:
10. Տեքստը բաժանի՛ր իմաստային մասերի և վերնագրի՛ր դրանք:

Լրացուցիչ նյութ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որևէ առակ ընտրիր, կարդա՛ և կարծի՛ք գրիր:
2. Դո՛ւրս գրիր դասագրքի առակների հերոսների անունները, դասավորի՛ր այբբենական կարգով՝ նշելով նրանց բնութագրող բառերը:
3. Պատմի՛ր զգացողություններիդ մասին, որոնք առաջացել են առակների ընթերցանության ժամանակ:
4. Անվանի՛ր առակների հերոսների գործողությունների դրդապատճառները (ինչո՞ւ վարվեց այսպես) և գնահատի՛ր նրանց վարքագիծը:
5. Նշի՛ր դասագրքի առակների քո սիրելի հերոսին և բացատրի՛ր ընտրությունդ:
6. Կարդացած առակներից ստացած տպավորություններով պատկե՛ր նկարիր և գնահատի՛ր դասընկերներիդ նկարած նկարները (որքանո՞վ է նկարը համահունչ տեքստի բովանդակությանը):
7. Առակները բեմադրելիս կատարի՛ր հերոսների դերեր՝ օգտագործելով խոսքի տարբեր ձևեր և ժեստեր:
8. Փորձի՛ր առակ հորինել հետևյալ կառուցվածքով՝ ա) վերնագիր, բ) հերոսներ, գ) դեպքի նկարագրություն, դ) երկխոսություն, ե) ավարտ, զ) բարոյախրատական մաս:

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Առակս ի՞նչ կցուցանե» բաժնի ուսումնասիրությունն ավարտելուց հետո դու կկարողանաս արտահայտիչ և հասկանալով կարդալ առակի տեքստը, կազմել առակից սովորած բառերի բացատրական բառարան, մատնանշել առակի կառուցվածքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ, խրատաբանություն:

Կկարողանաս առանձնացնել առակի գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը, կհորինես առակ՝ դրսևորելով սեփական դիրքորոշում: Ուսումնասիրած առակներից կքաղես բարոյական դասեր, կտարբերես ինչյունը տառից, վանկը բառից, կզանազանես կազմությամբ պարզ, ածանցավոր և բարդ բառերը, հոդակապով և անհոդակապ կազմությունները:

Կճանաչես բառերում շեշտի տեղափոխության հետևանքով կատարվող ինչյունափոխությունը, կկազմես կապակցված խոսք՝ կիրառելով յուրացրած լեզվական նյութերը:

ԱԿԱՆՋ ԴՆԵՆՔ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«Ականջ դնենք հեքիաթքիր պատմությունների» բաժնում ուսումնասիրվող թեմաները կնպաստեն քո՝ պատմվածքի տեքստը հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը, բառակապակցությունները, նախադասությունները առանձնացնելու և բացատրելու, բովանդակությունն ըստ պլանի, մշակած հարցերի, նաև ստեղծագործաբար վերարտադրելու, կարծիք հայտնելու, դիրքորոշում դրսևորելու կարողությունները զարգացնելուն:

Դրանք կօգնեն հարստացնելու քո բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի տարբեր տեսակները, ինչպես նաև կխթանեն լեզվաքերականական նյութի տեղին կիրառումը խոսքի մեջ:

ԻՆՉ Է ՊԱՏՄՎԱԾՔԸ

Պատմվածքը պատմողական ժանրի առավել փոքր տեսակի ստեղծագործություն է, փոքրիկ պատմություն, որի մեջ մեկ կամ մի քանի դրվագով ներկայացվում է հերոսների կյանքը:

Պատմվածքի ծագումը կապվում է բանահյուսության հետ, որտեղից էլ բխում է նրա պատմելու հատկանիշը: Հետագայում, սակայն, պատմվածքը ենթարկվել է փոփոխությունների թե՛ ձևի, թե՛ բովանդակության առումով: Պատմվածքներում պատկերվում են կյանքի էական կողմերը, ներկայացվում են վառ կերպարներ:

Կենսագրություն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

(1869–1923)

ԳԵԼԸ

(հատված)

– Գելը ոչ մի բանից էնպես չի վախենում, ինչպես կրակից,– առաջինը խոսեց իմ տանտերը՝ քեռի Անդրեասը:– Մեր կողմերը, դե գիտեք, որ գել շատ կա: Էնպես տեղ ունենք, որ հենց գիլի բուն է, որ կա: Մի մեծ ծմակ ունենք, Մոտկորա ծմակ ենք ասում: Էդ ծմակումը մի թալա (անտառում բաց տեղ, բացատ) կա: Էդ թալումը էնքան գել կա, որ անունը դրել են Գիլի թալա:

Մի ձմեռնամուտ իրիկուն սարի գոմերիցը տուն եմ գալի: Հակառակին էլ էս Ստեփան տղես էլ հետս է, ինը-տասը տարեկան երեխա է: Որ եկանք էդ թալի դիմացը, մի շան ձեն ընկավ ականջովս: Ասի՝ ով գիտի ոչխար են բերել էս կողմերը, չոբանի շունն է հաչում: Ձեն տվի.

– Ա՜յ չոբան, հեյ...

Էս ձեն տալն էր, էլի:

Շան հաչոցը կտրեց, ու, ձեզ մատաղ, մին էլ էն տեսնեմ՝ էդ ծմակիցը գիլի տուտը բաց էլավ, ռեխները բաց արած գալիս են, ո՞նց են գալիս, աչքերս սևացան...

Դու մի ասիլ, հաչողը գել է եղել: Ախր, չէ՞ որ գելը ոռնում է, բայց շանից հաչել է սովորում ու շատ անգամ էլ հաչում է:

Ձեռիս թվանք կա, միայն լավ գիտեմ, որ գիլի բոլուկի (ոհմակի) վրա թվանք չեն գցիլ. թվանք գցես թե չէ, ավելի կատաղի վրա կտան:

Երեխեն թե՝ ապի, էն ի՞նչ են:

Ասի՝ վախի՛լ մի, քեզ մատաղ, ղոչա՛ղ կաց: Արի՛, օգնի՛ էս խաշամն (չոր տերև) ու չոր ձյուղերը հավաքենք: Չորս կողմից խաշամն ու չոր ձյուղերը ձեռաց կիտեցի ու կրակ տվի, բոցը ծուլ էլավ: Մոտկորա ծմակը լիքը փետ կար: Մինչև սրանց հասնելը վրա տվի, թեժ արի. բոցն էլավ ծառերի ծերը:

Սրանք եկել են, ինչքա՜ն են եկել, չորս կողմներս կտրել են, հեռու կանգնոտել, ժնգժնգում են ու ատամները չխկչխկացնում: Աչքները ծմակի մթան մեջ քուքուրթի (ծծումբի) բոցի նման ջուխտ-ջուխտ վառվում են: Մարդ մտիկ անելիս զարզանդում է:

Երեխեն կպել է փեշիցս ու լաց է լինում:

– Վախի՛լ մի, Ստեփա՛ն ջան, վախի՛լ մի, ես էստեղ եմ... լաց մի՛ ըլի, որ լաց ըլես, կգան մեզ կուտեն...

Երեխեն ձենը փորն է գցել ու փեշիցս կպած դողում է, ո՞նց է դողում...

– Տե՛ր Աստված,– ասում եմ,– դու ազատես էս նեղ տեղիցը: Ի՞նչ անեմ: Հույսս դրել եմ կրակի վրա: Էն էլ փետը հատնում է, երեխեն էլ փեշիցս պինդ բռնել է, թողնում չի մի քիչ հեռանամ, փետ բերեմ, կրակին վրա տամ:

Մոտիկ մի ցցչորի ծառ կար: Կրակը բոթեցի սրա տակը, սրա կողքին էլ մի կտրած ծառի չոր բլուլ (կատար) կար, էն էլ քաշեցի վրեն, թեժացավ, ոնց թեժացավ, կարմիր լույսն ընկել է ամբողջ ձորը:

Դիմացի սարիցը չորանները նկատում են, որ, ախպե՛ր, էս ձորումը, էս ժամանակին, էս ի՞նչ կրակ պետք է լինի, որ քիչ է մնում ծմակը կրակի:

Մտածում են, մտածում ու ձեն են տալի:

Ականջ դնեմ, որ էս մեր Շամիրի ձենն է:

Ուրախանաք, ինչ որ մենք ուրախացանք:

Ձեն տվի.

– Շամի՛ր, հե՛յ... գիլի բոլուկ է. չորս կողմս կտրել են... երեխեն հետս է... օգնեցե՛ք, հե՛յ...

Հենց էս կանչելն էր: Մի քանի չոբան իրար հետ ձեն տվին.

– Վախի՛լ միք, վախի՛լ միք, գալիս ենք, հե՛յ...

Ու պարզ լսում ենք, ոնց են իրար ձեն տալիս, շտապեցնում, ոնց են շներին կանչում:

– Թոբլա՛ն, հե՛յ, Ղայթա՛ր, հե՛յ, Չամբա՛ր, հե՛յ, Չալա՛կ, հե՛յ...

Շների կլանչոցը վեր էլավ ու մտավ ձորը:

Էստեղ երեխեն նորից սկսեց հեկեկալ ու լաց ըլիլ:

– Վախի՛լ մի, Ստեփա՛ն ջան, վախիլ մի՛, հրես կգան:

– Տղե՛ք, էս մեր Շամրին Թոբլան անունով մի գել–

խեղդ շուն ուներ: Մին էլ տեսա՝ էս շան ձենը մոտիկ ծմակում զրնգաց, սրա ետևից՝ մնացած շները, շների ետևից՝ կրնկակոխ չոբանները: Չոբանների դչըրդուն ու շների հաչոցը ծմակը դրմբացնում է: Մին էլ Ստեփանս թե՝ «Ապի՛, գելերը փախչում են»:

Ասավ, ու ուրախությունը խառնվեց սարսափին, սկսեց աղաղակել ու առաջն ընկած փետի կտոր, քար, հող շպրտել գելերի ետևից:

Էլ գելն ո՞վ կտա: Ծմակի մթնումը կորան, գնացին:

Տղեքն եկան:

– Ա՛յ տղա, էս ի՞նչ բան էր:

– Բանն էլ որն է, ձեր տունը չքանդվի, հապա էսպես, էսպես...

Էստեղից վեր կացանք, գնացինք չոբանների մոտ, մինչև լուսացավ, առավոտը խմբով եկանք տուն:

Էս բանը, ախպե՛ր, իմ գլուխը եկավ: Կրակը մեզ ազատեց,– վերջացրեց խոսքը քեռի Անդրեասը:

Բառային աշխատանք

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Առա_ին, *Անդր_աս*, *օ_նել*, *խեղ_ել*, *փա_չել*, *վեր_ացնել*:

2. Բնագրում գտի՛ր *հովիվ*, *բերան*, *հրացան*, *լսել*, *վախենալ*, *հրել* բառերի հոմանիշները:

3. Պատմվածքից դո՛ւրս գրիր հարցական և բացականչական 3-ական նախադասություն և համեմատի՛ր: Կազմության ի՞նչ տարբերություններ ես տեսնում:

4. Պատմվածքից դո՛ւրս գրիր *գայլ* բառի բարբառային բոլոր ձևերը: Նշի՛ր հնչյունափոխությունը:

5. Գտի՛ր բարբառային բառեր, որոնց գրական համարժեքում առկա են *այ* և *ույ* երկհնչյունները:

Նմուշ՝ գել–գայլ, բուն–բույն:

6. Դո՛ւրս գրիր *ույ* և *յու* երկհնչյուն ունեցող բառեր: Այդ բառերով բարդ բառեր կազմիր:

7. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը և դրանցով նախադասություններ կազմիր:

Տեքստային աշխատանք

1. Կարդա՛ պատմվածքը, վերարտադրի՛ր ինքնուրույն եզրահանգումներով և պատմի՛ր քո տպավորությունների մասին:
2. Տարվա ո՞ր եղանակին է կատարվել դեպքը: Ասածդ հաստատի՛ր բնագրից բերված համապատասխան նախադասությամբ:
3. Գտի՛ր պատմվածքի հիմնական միտքն արտահայտող նախադասությունը և մեկնաբանի՛ր:
4. Բնութագրի՛ր չորաններին և հիմնավորի՛ր նրանց արարքների դրդապատճառները:
5. Ինչպե՞ս կպահեիր քեզ, եթե Ստեփանի տեղը լինեիր:
6. Տեքստում տարբերակի՛ր *գայլ* բառի տարբեր կիրառությունները և համապատասխանաբար կիրառի՛ր դրանք տարբեր խոսքերում՝ նշելով իմաստային տարբերությունները:
7. Քննարկի՛ր *«Գայլն ինչ կուզի՝ մութ գիշեր»* առածը:
8. *Գայլ* բառով մեկ առած էլ ի՛նքդ ասա, քննարկի՛ր:
9. Պատմվածքից մի հատված փոխադրի՛ր գրական հայերենի: Ցո՛ւյց տուր փոփոխությունները:
10. Գնահատի՛ր մայրենի լեզվի և բարբառների դերը հայ ժողովրդի կյանքում՝ այն ընկալելով որպես ազգային պատկանելիության ցուցիչ: Բե՛ր համապատասխան օրինակներ պատմվածքից:

ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՁԵՎԻ ԵՎ ԻՄԱՍՏԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ

Հայերենում կան բառեր, որոնք իրար առնչվում են իմաստով՝ նման են կամ հակադիր: Այդպիսի բառերը, միմյանց լրացնելով, կազմում են զույգեր կամ շարքեր:

Ըստ ձևի և իմաստի հարաբերության՝ լինում են հոմանիշ, հականիշ, համանուն բառեր:



ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Հաճախ են հանդիպում այնպիսի բառազույգեր կամ շարքեր, որոնք իրենց իմաստով հիմնականում համընկնում են:

Իմաստով մոտ կամ նույն, բայց ձևով տարբեր բառերը կոչվում են հոմանիշներ:

Երբեմն երկու կամ ավելի բառեր կարող են իրենց իմաստնեռով լիովին համընկնել: **Իմաստով նույն, բայց ձևով տարբեր բառերը կոչվում են նույնանիշ բառեր:** Օրինակ, լուսաբաց և այգաբաց բառերը նշանակում են «լույսը բացվելու ժամանակը»:

Իմաստով մոտ և ձևով տարբեր բառերը կոչվում են համանիշ բառեր: Օրինակ, մազ, վարս, հեր բառերը իրար մոտ իմաստն ունեն: Բայց մազ-ը մարդու և կենդանիների մաշկի վրայի մազեղեն ծածկույթն է, հեր-ը՝ գլխի մազը, վարս-ը՝ կանացի երկար, չհյուսած մազը: Այս բառերը լիովին չեն նույնանում:

Հոմանիշները խոսքում երբեմն կարող են իրար փոխարինել, երբեմն՝ ոչ: Դրանցից յուրաքանչյուրը հուզական-արտահայտչական տարբեր արժեք է տալիս խոսքին: Հոմանիշներն իրարից տարբերվում են որևէ հատկանիշի արտահայտման չափով (օրինակ՝ զեփյուռ, քամի, հողմ, փոթորիկ) կամ երևույթի նկատմամբ վերաբերմունքով (օրինակ՝ քնել, ննջել, մրափել):

Հոմանիշները կարող են ունենալ գրքային կամ խոսակցական երանգ, օրինակ՝ աքաղաղ-աքլոր, արևագալ-արևածագ:

Հոմանիշ կարող են լինել ոչ միայն բառերը, այլև ածանցները, որի արդյունքում կարող են առաջանալ հոմանիշ բառեր՝ համեստաբար-համեստորեն, ոսկե-ոսկյա, անգետ-տգետ: Հոմանիշ բառազույգերի ընդգծված ածանցները հոմանիշ են:

Առաջադրանքներ

1. Բառաշարքից ընտրի՛ր և գրի՛ր հոմանիշների 5 զույգ:

Քամի, *վազք*, *վայրի*, *փոթորիկ*, *գոհ*, *կապույտ*, *դղա*, *մով*, *բախտ*, *համազգեստ*, *կապար*, *հանդերձ*, *աշխույժ*, *ծաղիկ*, *ժիր*, *ծարավ*, *պարկ*, *սոխակ*, *անուրախ*, *պապակ*:

2. Դո՛ւրս գրիր փակագծում գրված բառի 4 հոմանիշ:

ա) գլուխ, աչք, մարզ, վարս, կես, հեր, գեհ, սանրվածք, ծամ, մաշկ (*մազ*),

բ) դեղնավուն, բիլ, մանուշակ, կտոր, երկնագույն, լաջվարդ, լուսնյակ, մով, արմատ, ամպագույն (*կապույտ*),

գ) սարսափ, ցնցում, տենդ, ահ, փախուստ, ախուվախ, զարհուրանք, սարսռալ, երկյուղ, վախկոտ (*վախ*):

3. Բնագրում գտի՛ր տրված բառերի հոմանիշը:

ա) հուր, բոց, հրդեհ– ,

բ) երեկո, արևամուտ, մթնշաղ– ,

գ) մտորել, խորհել, կշռադատել– :

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ
(1890–1967)

Կենսագրություն

ՇԵԿՈՆ

Մանկությանս օրերին հայրս մի ջահել ձի ուներ՝ անունը Շեկոն: Դա մի զարմանալի կենդանի էր. երբ հայրս, նրան հեծած, որևէ տեղից դառնում էր տուն, Շեկոն դեռ մի կիլոմետր հեռվից վրնջում էր՝ ասես իմացնելու, թե ահա գալիս ենք: Եվ երբ մենք վազում էինք՝ նրանց դիմավորելու, Շեկոն, մեզ տեսնելով, նորից էր վրնջում և ուրախությունից ամբողջ մարմնով խաղս եղած՝ թեթևաքայլ մտնում էր բակը:

Հապա նրա պարելը...

Երբ նվագի ձայն էր լսում կամ տնեցիներից մեկը պարեղանակ էր սուլում, Շեկոն անմիջապես պարում էր՝ ոտները հատակին խփելով, և գլուխն ու պարանոցը տարուբերում տակտով:

Բայց մի անգամ, չգիտեմ ինչպես, Շեկոյի ոտը քարի՞ էր դիպել, թե՞

փայտի, ցավ էր տվել, ուռել. այնպես որ հայրս մի ամբողջ շաբաթ նրան չէր հեծնում: Տանում էինք, մոտիկ գետափի կանաչներում թողնում, որ գուցե հանգիստ մնա, ցավն անցնի:

Բայց անցավ մի շաբաթ էլ. ո՛չ ուռուցքն անցավ, ո՛չ ցավը: Ընդհակառակը, քանի գնում ձին ավելի էր կաղում, և ոտի ուռուցքն ավելի մեծանում էր: Տեսքից երևում էր, որ Շեկոն իրեն լավ չի զգում. աչքերն այնքա՜ն տխուր էին:

Հարևանները խորհուրդ տվին տանել անասնաբույժի մոտ:

Հայրս այդպես էլ արեց: Կեսօրին ձին գետափից տարավ անասնաբույժի մոտ: Հետաքրքրությունից ես էլ գնացի հետը:

Անասնաբույժը, որ տարիքով, միրուքով մարդ էր, ուշադիր նայեց ձիու ոտին:

Շեկոն սկզբում խրտնում էր, բայց երբ անասնաբույժը մոտենալով շոյեց նրա գլուխն ու աչքերը, հետո մեջքը, ձին հանգստացավ:

Այդ ժամանակ բժիշկը մի ձեռքով բարձրացրեց Շեկոյի հիվանդ ոտը, մատով շոշափեց ուռուցքը և ապա ձեռքը թափ տվեց այնպես, թե իբր ոչինչ բան է: Հետո ինչ-որ դեղ քսեց ուռած տեղը և քաթանով փաթաթեց:

– Նորից կարող եք տանել դաշտ,– ասաց բժիշկը,– բայց չհեծնեք: Մի շաբաթ, տասն օր պետք է հանգիստ մնա: Վաղը կբերեք նորից դեղ քսելու:

Երկրորդ օրը նույնպես տարանք:

Անասնաբույժը դարձյալ շոյեց ձիու գլուխն ու աչքերը, ապա դեղ քսեց, փաթաթեց, կապեց: Եվ Շեկոն այս անգամ ոչ միայն չխրտնեց, այլև ավելի հանգիստ զգաց իրեն: Իսկ երրորդ օրը, երբ սովորական ժամին հայրս գնաց գետափ՝ ձիուն անասնաբույժի մոտ տանելու, Շեկոյին չէր գտել: Նայել էր ամեն կողմ. ձին չէր երևացել:

Բարկացած եկավ տուն:

– Ձին չկա: Տուն չի՞ եկել:

Մենք չէինք տեսել: Մտածեցինք՝ կարող է եկած լիներ և գոմը մտած:

Գնացինք գոմը. այդտեղ էլ չկար:

Փնտրելու անհանգստության մեջ էինք, երբ մեր հարևանի տղաներից մեկը հայտնեց, թե Շեկոյին տեսել է վերի թաղի փողոցներից մեկում:

Հայրս անմիջապես վազեց դեպի վերի թաղը, ես՝ նրա հետևից:

Գնացինք, բայց Շեկոյին չգտանք այդ փողոցում: Հայրս մոտեցավ այդտեղ կանգնած մի ծերունու և հարցրեց, թե չի՞ տեսել արդյոք մի շեկ, հետևի ոտից կաղ ձի:

– Կաղ,– ասաց ծերունին:– Քիչ առաջ մի կաղ ձի մտավ էս հայաթը:

Ու նա ցույց տվեց անասնաբույժի բակը:

Եվ, իսկապես, ծերունին ճիշտ էր ասում:

Գնացինք տեսանք մեր Շեկոն հրես անասնաբույժի տան առաջ ուրախ կանգնած: Բժիշկը քննում էր մի հիվանդ կովի, իսկ Շեկոն հանգիստ հերթի էր սպասում:

Մեզ տեսնելով՝ նա վրնջաց մի թեթև ու մռութը մի քանի անգամ դիպցրեց հորս թևին, մի բան, որ նա անում էր երկար ժամանակ հորս չտեսնելուց հետո:

Երբ բժիշկը կովին քննեց վերջացրեց, կարճ ժամանակում կապեց և մեր ձիու ոտը:

Ու այդ օրվանից Շեկոն ինքն էր գնում անասնաբույժի մոտ մինչև ոտը լավանալը:

Իսկ գյուղում այնուհետև ասում էին.

– Էս էն ձին է, որ ինքն է գնում բժշկի մոտ...

Բառային աշխատանք

1. Պատմվածքում գտի՛ր հոմանիշների մեկ զույգ: Դրանցով կազմի՛ր նախադասություններ:
2. Տեքստում գտի՛ր *որոնել*, *խաղաղ*, *դրկից*, *ապաքինվել* բառերի հոմանիշները:
3. *Թեթևաքայլ*, *պարեղանակ*, *գեղաափ*, *կեսօր* բառերի արմատներով նոր բառե՛ր կազմիր:

4. Բառակապակցություններն արտահատիր մեկ բառով.

կձղակ ունեցող _____	թև ունեցող _____
սմբակ ունեցող _____	պոչ ունեցող _____
ձայն ունեցող _____	եղջյուր ունեցող _____

5. Ձիերի խումբը կոչվում է *երամակ*: Ինչպե՞ս են կոչում գայլերի և շների, աղվեսների, կովերի, օձերի, թռչունների խմբերը:

6. Բառարանից դուրս գրիր *ձի* բառի հոմանիշները:

Տեքստային աշխատանք

1. Քո բառերով պատմիր պատմվածքի բովանդակությունը:

2. Անվանիր կամ դուրս գրիր պատմվածքի՝ իմաստային և գեղարվեստական տեսակետից քեզ դուր եկած դրվագներ, արտահայտություններ և մեկնաբանիր:

3. Բնութագրիր Շեկոյին, գնահատիր նրա արարքները:

4. Թվարկիր ու պարզաբանիր ձիու այն հատկանիշները, որոնք հատուկ են մարդկանց: Արդյոք համոզի՞չ են դրանք: Ինչո՞ւ:

5. Երևակայական հարցազրույց վարիր հերոսներից մեկի հետ:

6. Պատմվածքին ավարտ հորինիր:

7. «Ինչ է, ով է» հանրագիտարանից հաղորդում պատրաստիր ձիու մասին:

8. Ի՞նչ ձիարձաններ ես տեսել: Պատմիր կամ սահիկաշար պատրաստիր դրանց ստեղծման պատմության մասին:

9. Քո մանկության օրերի համանման վերհուշերից պատմիր ընկերներիդ: Քննարկիր նրանց հետ:

10. Մեկնաբանիր *«Ձու գողացողը ձի էլ կգողանա»* առածի իմաստը: Բեր նույն միտքն արտահատող երկու առած կամ ասացվածք: Մեկնաբանիր:

11. Կազմիր պլան և նյութ պատրաստիր որևէ կենդանու մասին (նախագիծ), տարբեր միջոցներով (գրադարան, համացանց) նյութեր հավաքիր, ծանոթացրու դրան խմբի անդամներին և հաշվի՛ առ նրանց կարծիքը (խմբային կամ զույգային աշխատանք):

ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Կան բառերի զույգեր, որոնք միմյանց հակադիր իմաստներ են արտահայտում, օրինակ՝ մեծ–փոքր, ուրախ–տխուր, գնալ–գալ և այլն:

Միմյանց հակառակ իմաստ ունեցող բառերը կոչվում են հականիշներ:

Հականիշները կարող են լինել տարարմատ, օրինակ՝ եր–կար–բարակ, ուժեղ–թույլ, և նույնարմատ, օրինակ՝ շնորհալի–ապաշնորհ, շատախոս–քչախոս:

Առաջադրանքներ

1. «Շեկոն» պատմվածքից դուրս գրիր երեք բառ և գրիր հականիշը: Դրանցով կազմիր նախադասություններ:

2. Տրված բառաշարքից ընտրիր և գրիր հականիշների հինգ զույգ:

Հեռու, մարդամոտ, ծաղկաստան, մոտիկ, վերև, երկինք, ներքև, երկչոտ, մարմին, ջղային, համարձակ, հյուսիս, թաքուն, խղճալ, ճահիճ, բացահայտ, առողջ, մաքուր, ուղենիշ, հիվանդ:

3. Գրիր հետևյալ բառերի նույնարմատ հականիշները:

Գոհ, գեղեցիկ, անհնարին, գիտուն, անշուք, աղմկոտ:

4. Յուրաքանչյուր շարքում նշիր այն բառերը, որոնք իրար հականիշ են:

ա) 1. համարձակ, 2. նավապետ, 3. փոթորկուն, 4. խաղաղ, 5. կղզի,
բ) 1. բարկ, 2. արդար, 3. թեժ, 4. անիրավ, 5. խորշակ:

5. Գրիր տրված բառերի հականիշները: Կազմիր՛ վերջիններիս հոմանշային շարքերը:

Աղոտ, անգութ, համեստ, հրկիզել, կառուցել:

6. Այլ աղբյուրներից գտիր առածներ–ասացվածքներ, որոնց մեջ հականիշներ են գործածված:

Նմուշ՝ Խոսքը՝ մեծին, ջուրը՝ փոքրին:

Կենսագրություն

ԷԴՄՈՆԴՈ ԴԵ ԱՄԻՉԻՍ

(1846–1908)

ՋՈՒԼԻՈ

(կրճատումներով)

Ջուլիոն սովորում էր 5-րդ դասարանում: Նա սև մազերով ու ձերմակ դեմքով 12-ամյա մի գեղեցիկ տղա էր: Նրա հայրը երկաթուղային աշխատող էր՝ ծանր աշխատանքից վաղաժամ ծերացած: Ընտանիքը պահելու համար, բացի պաշտոնական աշխատանքից, նա կողմնակի գործեր էր վերցնում արտագրելու: Հայրը շատ էր սիրում իր որդուն և միշտ քնքուշ ու համբերատար էր նրա նկատմամբ: Նա վերջին ժամանակները հրատարակչություններից մեկի բաժանորդների հասցեներն արտագրելով էր զբաղված: Այդ աշխատանքը նրան շատ էր հոգնեցնում, և ճաշի ժամանակ նա հաճախ գանգատվում էր աչքերից:

Մի անգամ Ջուլիոն սպասեց, մինչև հայրը քնի: Անձայն հագնվեց, վառեց լամպը և սկսեց գրել՝ ջանալով նմանեցնել հոր ձեռագրին: Գրում էր տղան, և նրա սիրտը լցվում էր ուրախությամբ, հրճվանքով ու մի քիչ էլ սարսափով:

Ահա արդեն գրված է 160 հասցե: Նա, գրիչը տեղը դնելով, մատների ծայրերի վրա վերադարձավ անկողին:

Հաջորդ օրը՝ ճաշի ժամանակ, հայրը շատ լավ տրամադրության մեջ էր: Նա ոչինչ չէր նկատել:

– Ա՛յ, տեսնո՞ւմ ես, Ջու՛լիո, քո հայրը դեռ կարգին աշխատող է: Երեկ երեկոյան՝ երկու ժամվա ընթացքում, մեկ երրորդով ավելի եմ գրել, քան սովորաբար գրում էի: Իսկ երջանիկ Ջուլիոն լսում էր...

Հաջորդ օրը, հենց որ տասներկուսը խփեց, հաջողությունից սրտապնդված Ջուլիոն վեր թռավ տեղից և նստեց աշխատելու: Հայրը գլխի չէր ընկնում: Սակայն գիշերները չքնելով՝ Ջուլիոն չէր կարողանում հանգստանալ: Առավոտյան վեր էր կենում հոգնած, իսկ երեկոյան, երբ դասերն էր պատրաստում, ամեն կերպ ջանում էր չփակել աչքերը:

Մի անգամ երեկոյան նա քնեց դասարանական տետրի վրա:

– Դե՛, դե՛,– գոռաց հայրը,– գործի՛ անցիր:

Տղան ցնցվեց և նորից անցավ աշխատանքի: Բայց հաջորդ երեկոյան և հետո ննջում էր գրքերի վրա. վեր էր կենում սովորականից ուշ, դասերը սովորում էր հապճեպ...

– Ջու՛լիո,– ասաց մի անգամ հայրը,– ես չեմ հասկանում, թե քեզ ինչ է պատահել: Ես դժգոհ եմ քեզանից:

Այդպես անցավ երկու ամիս: Հայրը շարունակում էր կշտամբել: Մի անգամ էլ գնաց դպրոց: Պարզվեց, որ ուսուցիչները սկսել են դժգոհել Ջուլիոյից:

Այդ երեկո նա տղային մի կողմ տարավ և խոսեց խստությամբ:

Ջուլիոն վճռեց, որ ինքը ոչինչ չի խոստովանի հորը: Նա գիտեր, որ վշտացնում է հորը, բայց որոշեց այնպես սովորել, որ այդ տարի անպայման փոխադրվի, իսկ գիշերները կաշխատի, կթեթևացնի հոր ծանր գործը:

Ամենից վատն այն էր, որ հայրն ավելի ու ավելի սառն էր դառնում որդու նկատմամբ:

Ջուլիոն այդ բոլորը շատ լավ տեսնում էր, տանջվում դրանից, սակայն տրտմությամբ, քնքշանքով ու սիրով էր նայում հայացքն իրենից շուռ տվող հոր հետևից:

Նա նիհարեց ու գունատվեց:

Մի օր մայրը, դառնալով ամուսնուն, անհանգստացած ասաց՝

Ջուլիոն հիվանդ է:

– Նրա խիղճը մաքուր չէ, դրանից էլ առողջությունը վատ է: Նա այդպիսի տեսք չուներ, երբ լավ աշակերտ էր և սիրող որդի,– ասաց հայրը:

Այդ խոսքը դանակի պես խրվեց խեղճ տղայի սրտի մեջ... Ուրեմն հայրն այլևս չի սիրում իրեն...

Սակայն, երբ գիշերը եկավ, նա սովորականի պես կրկին արթնացավ, թեթևակի շունչ քաշեց և սկսեց գրել: Հենց այդ ժամանակ նրա աթոռի հետևում կանգնեց հայրը: Նայելով հասցեներ գրող տղային՝ նա հասկացավ ու մտաբերեց ամեն ինչ: Անհուն քնքշանքի ու զղջման զգացում

պատեց նրա հոգուն... Եվ նա, տղային գրկած, տարավ դրեց անկողնու վրա, բռնեց նրա ձեռքն ու ասաց՝ քնի՛ր, տղա՛ս:

Ջուլիոն՝ հոգնատանջ ու երջանիկ, քուն մտավ և երկար ամիսների ընթացքում առաջին անգամ խաղաղ քնեց: Իսկ երբ բաց արեց աչքերը, բարձի վրա տեսավ հոր ծերունազարդ գլուխը: Հայրը ողջ գիշեր նստել էր նրա մահճակալի մոտ և այժմ քնել էր՝ գլուխը որդու բարձին դրած:

Բառային աշխատանք

1. Պատմվածքում գտի՛ր հականիշների երկու զույգ: Դրանցով կազմի՛ր նախադասություններ:

2. ա) Գտի՛ր հետևյալ բառերի արմատները:

Երկաթուղային, *քնքշանք*, *գունապ*, *արտագրել*, *լսել*, *ննջել*, *քնել*, *արթնանալ*, *թռչել*:

բ) Վերականգնի՛ր անհնչյունափոխ արմատները: Բացատրի՛ր հնչյունափոխությունը:

3. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Ջղ_ում, *հա_ձեպ*, *վեր_ին*, *համ_երատար*, *հո_նապանջ*, *հաջոր_*:

4. Քննարկի՛ր տրված բառաձևերի ուղղագրությունը: Ո՞ր դեպքում է գրվում *յ* ձայնակապ: Հիմնավորի՛ր:

Ջուլիոյի, *տղայի*, *հասցեի*, *նստեի*, *կարդայի*:

5. ա) Տրված բառերը բաղադրիչների՛ բաժանի՛ր, դո՛ւրս գրի՛ր ածանցները և դրանցով 2-ական բա՛ռ կազմի՛ր:

Երկաթուղային, *թեթևակի*, *հաջողություն*, *քնքշանք*, *անձայն*, *դժգոհ*:

բ) Մատնանշի՛ր բառի շեշտազուրկ բաղադրիչի հնչյունափոխությունը:

Տեքստային աշխատանք

1. Արտահայտիչ և վա՛ռժ կարդա տեքստը, պահպանի՛ր հայերենին հատուկ արտասանությունը, շեշտադրումը:

2. Կազմի՛ր հարցեր կամ պլան կարդացածի շուրջ և գրավոր վերաշարադրի՛ր դեպքերի հաջորդական ընթացքը:

3. Պատմելիս կամ շարադրելիս կարդացած նյութից համապատասխան մեջբերումներ արա՝ պահպանելով հղում տալու կանոնները:
4. Տրված պատմվածքը բաժանիր պարբերությունների, որոշիր յուրաքանչյուր պարբերության հիմնական միտքը և պարբերությունների իմաստային կապը: Հնարավորության դեպքում հորինիր ևս մեկ պարբերություն:
5. Որոշիր տեքստի հիմնական միտքը, հենակետային բառերը և այդ բառերով պատմությունն հորինիր:
6. Գնահատիր Ջուլիոյի արարքը: Մեկնաբանիր որդիական սիրո դրսևորումը:
7. Գնահատիր հոր արարքը:
8. Հիմնավորիր Ջուլիոյի լռության պատճառը:
9. Քո կարծիքով հայրը որդուն պիտի սիրի միայն սովորելու համար:
10. Նման իրավիճակներում հայտնվել ես: Ինչպես կվարվեիր Ջուլիոյի փոխարեն:
11. Ջուլիոյին համեմատիր քո ընկերների հետ:
12. Ինչպես ես աջակցում ծնողներիդ: Պատմիր այդ մասին:
13. Պատմվածքին այլ ավարտ հորինիր վերնագրելով:

ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ

Կան տարբեր իմաստներով բառեր, որոնք, սակայն, ունենում են միևնույն գրությունը, օրինակ՝ Ջատիկ՝ «եկեղեցական տոն», զատիկ՝ «սև պուտերով կարմիր միջատ», ափ՝ «ձեռքի թաթի ներսի կողմը», ափ՝ «ցամաքի՝ ջրին հարող եզրը»:

Միևնույն գրությունն ունեցող, սակայն իմաստով տարբեր բառերը կոչվում են համանուն բառեր:

Համանունները կարող են համընկնել

ա) գրությամբ և արտասանությամբ (**բացարձակ** համանուններ), օրինակ՝ այր՝ «անձավ», այր՝ «տղամարդ»:

բ) միայն գրությամբ (**նույնագիր** համանուններ), օրինակ՝ սարդ՝ «միջատներ որսալու համար ոստայն հյուսող սարդակերպերի դասին պատկանող կենդանի», սարդ՝ «քո սարը», որոնք արտասանությամբ տարբեր են (սարդ և սար(ը)դ), բայց նույնն են գրությամբ:

գ) միայն արտասանությամբ (**նույնահունչ** համանուններ), օրինակ՝ ուխտ՝ «դաշինք, երդում», ուղտ՝ «սապատավոր կենդանի», որոնք թեև տարբեր կերպ են գրվում, սակայն արտասանվում են միանման (**ուխտ**):

Առկա են նաև քերականական համանուններ, որոնց մի եզրը չթեքվող բառ է, մյուսը՝ թեքվող բառի քերականական ձև, օրինակ՝ անցավ՝ «առանց ցավի», անցավ՝ «անցնել բայի ձևերից»:

Առաջադրանքներ

1. Գրի՛ր հետևյալ բառերի նույնահունչ համանունները: Բացատրի՛ր իմաստները:

Ասյա, *Վիկտորյա*, *Սոֆյա*:

2. Ընդգծի՛ր այն բառերը (բառաձևերը), որոնք ունեն իրենց համանունները:

Եղանակ, *աղային*, *գլուխ*, *խնամի*, *վանեցի*, *սունկ*, *ոսկի*, *անուշ*:

3. «Ջուլիո» պատմվածքը հաղորդի՛ր որպես նամակ:

4. Լրացրո՛ւ աղյուսակը՝ դեմ դիմաց գրելով տրված բառերի բոլոր հնարավոր հոմանիշները:

Հողմ, *ագահ*, *արեգակ*, *ապիկար*, *դրդել*, *արգավանդ*, *խրթին*, *հիանալի*, *երիվար*:

Նմուշ՝

Հողմ	քամի	փոթորիկ	մրրիկ	սամում ...

5. Առանձնացրու՛ նույնարմատ և տարարմատ հականիշների զույգերը՝ լրացնելով աղյուսակում:

Դանդաղաշարժ, ապարդյուն, ապօրինի, արագաշարժ, ներքին, գեղեցիկ, արտաքին, բախտավոր, անկարող, իգական, անհաս, արական, լավագույն, օրինական, հաճելի, դժբախտ, վատագույն, գնորդ, հասուն, շատանալ, գունավոր, քչանալ, արդյունավետ, տհաճ, բարություն, չքնաղ, ապեղի, չիոսկան, պարտություն, սիրելի, չարություն, հաղթություն, խոսկան, անգույն, վաճառող, կարող: **Նմուշ՝**

Նույնարմատ հականիշներ	Տարարմատ հականիշներ
դանդաղաշարժ – արագաշարժ	ներքին – արտաքին

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՐ ԲԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ա

Ամառային արձակուրդն սկսվել էր: Երեխաները բակ էին իջել ու Ծառի տակ հավաքված՝ չգիտեին՝ ինչ մտածեն, որ ժամանակը հետաքրքիր անցնի: Լուսինեն խորասուզված գիրք էր կարդում:

– Ի՞նչ ես կարդում,– նրա ուսի վրայով նայելով՝ հետաքրքրվեց Կոկոն:

– Հին աշխարհի առասպելները, – պատասխանեց Լուսինեն:

– Հա՜,– ասաց Կոկոն, – հին ժամանակներ... Ո՞նց չէ, հիշում եմ: Հիշում եմ, որովհետև ես էլ եմ կարդացել: Գիտե՞ս՝ ինչ հետաքրքիր գիրք էր՝ գունավոր նկարներով...

– Իմացա,– տեղից վեր ցատկելով՝ ոգևորված բացականչեց Անին,– եկե՛ք մեր բակի մասին գիրք գրենք:

– Օ՜, ապրես,– հնարավորություն տվեց Կոկոն.– մեր բակի պատմությունը կգրենք, թե ինչ հետաքրքիր բաներ են կատարվել: Թե չէ, մեկ էլ տեսար, տարիներ կանցնեն, ու ոչ ոք չի հիշի, թե ի՞նչ լավ մարդիկ էին ապրում, ի՞նչ հնարամիտ թռչուններ, Քուչոն... Հենց ես էլ կգրեմ. ի՞նչ ենք երկար–բարակ մտածում: Որոշումը կայացրած հա-

մարելով՝ Կոկոն սկսեց պոչից մի հարմար փետուր ընտրել, որ պոկի, որպես գրիչ օգտագործի:

– Իզուր մի՛ չարչարվիր,– մեջ ընկավ Տիգրանը,– ավելի լավ է թողնես՝ գիրքը ես գրեմ: Մեր բակում պատմություն կա՛, որ ես մեջը խառնված չլինեմ, ուրեմն իմ հիշողություններն ամենաշատն են:

– Էդ էր պակաս,– վրդովվեց Անին,– առաջինը ո՞վ մտածեց գիրք գրելու մասին: Ով որ մտածել է, նա էլ կգրի:

– Կարելի՞ է, մի քիչ էլ ես գրեմ,– կամացուկ խնդրեց Լուսինեն,– գոնե կես էջ: Հա՛:

– Չէ՛, կտրուկ պատասխանեց Կոկոն,– դեռ փոքր ես, ի՞նչ ես հիշում, որ ինչ էլ գրես: Կմեծանաս, կտեսնենք:

– Կարո՞ղ եմ մի բան էլ ես առաջարկել,– անսպասելիորեն միջամտեց Ծառը:– Ես մեր բակի ամենահին բնակիչն եմ: Գիտեք ինչքա՞ն եմ հիշում... Ձեր ծնողներին էլ եմ հիշում, երբ դեռ ձեզ պես վազվզում էին իմ ստվերի տակ: Դրա համար էլ թողեք՝ ես գրեմ:

– Իսկ որ դուք գիշերները մուշ-մուշ քնած եք ու ոչինչ չեք տեսնո՞ւմ,– առարկեց Քուչոն:– Ավելի ճիշտ կլինի, եթե համաձայնվեք ու գործն ինձ թողեք:

Պարզվեց՝ բոլորն էլ ուզում են, որ գիրքը հենց իրենք գրեն, և ամեն մեկն էլ մի բան գիտի, որ մյուսները չգիտեն: Սկսեցին վիճել ու ոչ մի կերպ համաձայնության չէին գալիս:

– Չէ՛, վեճով գործն առաջ չի գնա,– վերջապես ասաց Ծառը: Նա իսկապես շատ իմաստուն էր:– Պիտի փորձենք մի ելք գտնել: Բայց ո՞նց:

– Ես գիտեմ,– առաջարկեց Գրիգորը,– եկե՛ք վիճակ գցենք: Մենք քանի՞ հոգի ենք: Այդքան էլ թղթի թերթիկներ վերցնենք, մեկի վրա գրենք «գիրք», իսկ մյուսները մաքուր թողնենք:

– Հետո՞,– հետաքրքրվեցին ընկերները:

– Հետո թղթերը կծալենք ու կլցնենք գլխարկի մեջ: Ամեն մեկը մի հատ կքաշի: Ով գրած թերթիկը քաշի, նա էլ գիրքը կգրի:

ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ ՄԵՆԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Մեկ իմաստ ունեցող բառերը կոչվում են մենիմաստ բառեր:

Կան բառեր, որոնք միայն մեկ իմաստ են արտահայտում: Դրանք մենիմաստ բառերն են, օրինակ՝ գոյական, ֆիզիկա, եռանիշ, քառահարկ, չորս, դաշտամուկ, արևաշատ, թիկնաթոռ, սրտաբան, դասընկեր և այլն: Բայց կան շատ բառեր, որոնք մեկից ավելի իմաստներ են արտահայտում:

Մեկից ավելի իմաստ ունեցող բառերը կոչվում են բազմիմաստ բառեր:

Բազմիմաստ բառերի իմաստներից մեկը համարվում է հիմնական իմաստ, և բառարաններում նշվում է առաջինը: Մյուսները կոչվում են երկրորդական իմաստներ: Օրինակ, հաց բառն իր հիմնական իմաստով նշանակում է «ալյուրից թխած ամենօրյա ուտելիք», երկրորդ իմաստով՝ «հացահատիկ (ցորեն, գարի)»: Այն նշանակում է նաև «ուտելիք»: Ունի նաև «ճաշ, հացկերույթ» իմաստները: Հաց նշանակում է նաև «մեղրի բլիթ, մեղրահաց»:

Երկրորդական իմաստների շարքում կարող են լինել նաև բառի փոխաբերական կիրառության դեպքեր: Օրինակ, հաց փոխաբերաբար կարող է նշանակել «ապրուստ», «եկամուտ», «բարերարություն»:

Բառիմաստի տեսակները

Մենիմաստ

1. Գիտաբառեր՝ **ջրածին**, **ծծումբ**, **քանորդ**
2. Կենդանական, բուսական աշխարհների, առարկաների անվանումներ՝ **հացենի**, **թխկի**, **սոսի**, **լոր**, **բախտակ**
3. Հապավումներ՝ **ՀՀ**, **ՌԴ**, **ԱՄՆ**, **ԱԺ**
4. Բաղադրյալ բառեր՝ **էլեկտրասնուցում**, **կինոպատճենահանում**
5. Չթեքվող խոսքի մասեր, օժանդակ բայ՝ **որ**, **թե**, **որովհետև**, **որպեսզի**, **եմ**

Բազմիմաստ

ածել – ունի 6 իմաստ
աշխարհ – ունի 10 իմաստ
դնել – ունի 33 իմաստ
կարգ – ունի 18 իմաստ
հոգի – ունի 23 իմաստ

Առաջադրանքներ

1. Քո ուսումնասիրած նախորդ պատմվածքներից դուրս գրիր մենիմաստ բառեր:

2. Բառարանից դուրս գրիր *թուղթ*, *գիրք*, *գլուխ* բառերի տարբեր իմաստներ: Այդ իմաստներով նախադասություններ կազմիր:

3. *Ծանր*, *քար*, *երկաթ*, *ծով*, *սիրտ* բազմիմաստ բառերից յուրաքանչյուրով կազմիր երկուական նախադասություն քեզ հայտնի իմաստներով:

4. ա) Տրված հոմանիշ բառերի շարքը դասավորիր ըստ առարկաների հատկանիշների սաստկության:

Զքնաղ–գեղանի, *գեղեցիկ*, *սիրուն*, *բարեդեմ*, *գեղահրաշ*, *գողտրիկ*, *չնաշխարհիկ*, *սքանչելի*, *հիասքանչ*, *լուսերես*:

բ) Գրիր այդ հատկանիշներն ունեցող բառեր:

5. Կարդա՛ հատվածը և ասա՛, թե *անուշ* բառն ի՞նչ իմաստներով է գործածված:

Աղջիկը մոտենում էր, սառը ջրով լի կուլան տալիս արտվորներից ամենահասակավորին, նա էլ բարձրացնում էր կուլան, շուրթերին սեղմում և ըմպում անհագորեն:

– Օ՜, *անուշ* էր ջուրդ, Անահի՛տ, ջրիդ պես *անուշ* լինես,– ասում էր նա՝ ջրից հագենալով, և կուլան տալիս էր մյուսներին:

Բ

Գրիգորի առաջարկը բոլորին դուր եկավ, ու երեխաները գործի անցան:

Երբ ծալված թերթիկները գլխարկի մեջ էին, Ծառը հանդիսավոր ձայնով հայտարարեց.

– Բարեկամնե՛ր, սկսում ենք վիճակահանությունը:

Շուտով ամեն մեկը, մի թերթիկ ձեռքին, հերթով սկսեց բացել:

Առաջինը Ծառը բացեց:

– Ափսո՜ս,– սոսափեց Ծառը,– իմը փուչ դուրս եկավ: Ուրեմն գրքում հիշողություններս չեն լինի:

– Իմ թուղթն էլ է դատարկ,– հիասթափված դատարկ թուղթը դնելով գրպանը՝ ասաց Լուսինեն:

Հաջորդը Տիգրանի հերթն էր, բայց նրա թուղթն էլ դատարկ դուրս եկավ:

– Ի՞նչ վատ ստացվեց,– դժգոհ բացականչեց նա.– հիմա ոչ ոք չի իմանա, թե ինչքան հետաքրքիր խաղեր եմ հորինել:

– Ա՛յ քեզ բան,– զարմացավ Անին, որն արդեն համարյա համոզված էր, թե իր բախտն է բերելու,– իմն էլ է փուչ:

– Տեսա՞ք: Որ ասում էի՞: Գիրքը ես եմ գրելու,– ինքնագոհ տեսքով հայտարարեց Կոկոն ու բացեց թուղթը: Նրա թուղթն էլ դատարկ դուրս եկավ:

– Ոչինչ չեմ հասկանում: Լուսինե՛, ճի՛շտ ասա, երևի տառերը մոռացել ես ու ոչ մի թերթիկի վրա ոչինչ չես գրել,– թուղթը շուռումուռ տալով՝ խիստ ձայնով բացականչես Կոկոն:

Բայց Քուչոն Լուսինեին օգնության հասավ:

– Ոչ մի բան էլ չի մոռացել, սխալվում ես,– առարկեց Քուչոն ու ձեռքի թուղթը Կոկոյին պարզեց: Թղթի վրա չաղլիկ տպատառերով հստակ գրված էր՝ ԳԻՐՔ:



– Գիրքը ես եմ գրելու,– հպարտ-հպարտ ասաց Քուչոն, ու աչքերը փայլեցին:

– Էհ, բախտդ բերեց,– ափսոսանքով հոգոց հանեց Կոկոն ու Քուչոյին խնդրեց, որ գոնե գրելիս իր պատմություններից էլ մի երկուսը հիշի:

– Չմոռանաս փաստերը ճիշտ հերթականությամբ թվարկել. ինչքան չլինի, պատմություն է,– հուշեց Ծառը:

– Ու անպայման նկարներ էլ թող լինեն: Նկարներով ավելի հետաքրքիր է,– խուրհուրդ տվեց Անին:

Քուչոն շվարեց:

– Այդքանը մենակ ո՞նց անեմ,– անհանգստացավ նա:

– Ինքդ չուզեցի՞ր, որ գիրքը դու գրես: Էլ ի՞նչ ես բողոքում,– զարմացավ Տիգրանը:

– Հա՛,– գլուխը կախեց Քուչոն,– ես կարծում էի, թե ոտանավորներ կգրեմ մեր բակի մասին, բայց չգիտեի, որ հիշողություններ էլ եմ գրելու: Իսկ նկարել բոլորովին չեմ կարողանում:

– Ի՞նձ լսեք,– խոսեց Ծառը,– լավ կլիներ՝ միասին գրեինք համագործակցելով:

– Հա-մա-գոր-ծակ-ցել նշանակում է ընկերովի աշխատել,– բացատրեց Անին՝ երկար բառը վանկ-վանկ ասելով, որ Լուսինեն հիշի:– Ծառը ասում է, որ առանձին-առանձին գործ անելն ավելի դժվար է, քան միասին:

– Ես Ծառի պատմածները գրի կառնեմ,– առաջարկեց Գրիգորը.– իմ ձեռագիրը լավն է:

– Կարելի՞ է՝ ես էլ քեզ օգնեմ,– խնդրեց Լուսինեն,– ես արդեն շատ վարժ եմ գրում, ազնիվ խոսք:

– Ուրեմն Ծառն ու Կոկոն կպատմեն, Քուչոն ոտանավորներ կհորինի, Լուսոն ու Գրիգորը կգրեն, Տիգրանը կնկարի, ես էլ վերջում կստուգեմ, որ հանկարծ սխալներ չլինեն,– ի մի բերեց Անին:– Ա՛յ թե հրաշալի գիրք կստացվի: Վերնագիրն էլ կլինի «Մեր բակի պատմությունը», հեղինակներ՝ բոլոր բնակիչներ: Երեխաները, իրենց որոշումներից գոհ, ուրախ ծափ տվեցին, իսկ Քուչոն հայտարարեց.

– Ես արդեն նախաբան եմ հորինել: Կարդամ, լսե՛ք.

Մի գիրք գրենք միասին
Մեր ընկերության մասին,
Թող բոլորը իմանան
Ու մեզանով հիանան:

– Ապրե՛ս,– Քուչոյին գովեց Ծառը:– Ու բոլորը, ովքեր մեր գիրքը կարդան, կհասկանան, թե ինչ ճշմարիտ բան է համագործակցելը, գործը միասին անելը, միմյանց սեր վայելելը:

Բառային աշխատանք

1. Պատմվածքում գտիր բառ, որն ունի իր համանունը: Մեկնաբանիր իմաստները:
2. Գտիր *պատմություն*, *ամառային*, *ընկերաբար*, *թերթիկ*, *գիրք*, *վերջապես* բառերի ածանցները: Այդ ածանցներին արմատ ավելացնելով՝ բառեր կազմիր:
3. Վերականգնիր *գունավոր*, *թռչուն*, *վիճել* բառերի անհնչյունափոխ արմատները: Բացատրիր հնչյունափոխությունը:
4. Մեկնաբանիր՝ բնագրում ինչու են ծառ և քուչո անունները մեծատառով գրվում:
5. Ինչ է նշանակում *«Ազնիվ խոսք»* արտահայտությունը: Մեկնաբանիր: Երբ են գործածում այն:
6. Ինչ կախարդական խոսքեր գիտես: Թվարկիր դրանք և մեկնաբանիր քո հասկացողությամբ:
7. Կազմիր պատմվածքի հերոսների անունների բառարան:
8. Դասագրքի բառարանում գտիր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը և դրանք գործածիր բանավոր կամ գրավոր խոսքում:

Տեքստային աշխատանք

1. Որոշիր տեքստի հիմնական միտքը, բանալի բառերը: Պատճառաբանիր՝ ինչու են քո ընտրած բառերը համարվում բանալի բառեր:
2. Ինչո՞ւ է հերոսներից յուրաքանչյուրն ուզում, որ հենց ինքը գրի բակի պատմությունը: Հիմնավորիր:
3. Ներկայացրու պատմվածքի գործող անձանց, իրերին, երևույթներին բնորոշ հատկանիշները և համեմատիր:
4. Մասնակցիր պատմվածքում ծավալված բանավեճին, այս կամ այն գործող անձի մասին արտահայտիր քո վերաբերմունքը:
5. Տեքստում գտիր տարբեր տեսակետներից քեզ հետաքրքիր տողերը: Մեկնաբանիր ընտրությունդ:
6. Բնութագրիր պատմվածքի հերոսներին՝ պարզաբանելով նրանց արարքների դրդապատճառները:

7. Տեքստում գտի՛ր եզրակացությունն իր մեջ ամփոփող տողը: Ինչպե՞ս կմեկնաբանես այն, և ո՞րն է նրա խորհուրդը:
8. Քննարկե՛ք բնագրի կապույտ գրված նախադասությունը (խմբային աշխատանք):
9. Պարզաբանի՛ր բակի բնակիչների անհանգստությունը: Ի՞նչ ելք գտան նրանք:
10. Պատմի՛ր ձեր բակի մասին: Ներկայացրո՛ւ մտերիմ ընկերոջդ:
11. Ի՞նչ հիշողություններ ունես քո մանկությունից. պատմի՛ր այդ մասին և այն համեմատի՛ր պատմվածքի հերոսների առօրյայի հետ:
12. Ծնողներիդ միջոցով տեղեկացի՛ր քո մանկության տարիների հետաքրքիր դրվագներին:
13. Կարդացածդ գրքերից մի պատմությո՛ւն ներկայացրու ընկերասիրության մասին: Ո՞րն է ընկերասիրության քո բանաձևը:

ԲԱՌԻ ՈՒՂԻՂ ԵՎ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐ

Ծանր նշանակում է «մեծ կշիռ ունեցող»: Օրինակ, ծանր ճամպրուկ ենք ասում և հասկանում ենք ծանրաքաշ ճամպրուկ: Դա ծանր բառի ուղիղ իմաստն է, որովհետև ցույց է տալիս ճամպրուկին բնորոշ հատկանիշ:

Սենյակի կենտրոնում դրված է ծանր սեղան նախադասության մեջ դարձյալ ծանր բառն ուղիղ իմաստով է գործածվել:

Այլ է, երբ ասում ենք ծանր կյանք, ծանր կորուստ: Այստեղ խոսքը մեծ կշռի մասին չէ: Հասկանում ենք դժվար կյանք և մեծ կորուստ: Ծանր հատկանիշը բնորոշ չէ կյանք և կորուստ բառերին:

Նա ծանր կյանքով է ապրել: Թշնամին ունեցավ ծանր կորուստներ:

Հետևյալ բառերի հետ ծանր-ը ոչ թե ուղիղ, այլ փոխաբերական իմաստով է գործածվում՝ «ծավալով համեմատաբար մեծ, ծանրանիստ» (անձրևի ծանր կաթիլներ), «խիտ, թանձր» (ծանր մառախուղ), «դանդաղ, ոչ արագ» (ծանր քայլվածք), «դժվարամարս» (ծանր կերակուր) և այլն:

Առաջադրանքներ

1. Արտագրիր տրված տեքստը, առանձնացրու ընդգծված բառերը և նշիր հականիշ բառը:

Հին ժամանակ ապրում էր մի ասպետ՝ *խելացի*, գեղեցիկ ու *բարի*: Նրա ձիու սմբակները չէին պղտորում աղբյուրների ադամանդը, չէին տրորում ճանապարհի քնքուշ, *նուրբ* ծաղիկները *երփներանգ*:

Մի օր էլ հսկա լեռների գոգում նկատեց մի *շողշողուն* լճակ: Նրա *վճիտ* ու ողորկ հայելու մեջ տեսավ մի չքնաղ աղջկա լուսեղեն դեմքը: Լուսնկա գիշերների պես *մեղմանուշ* աչքերով աղջիկը նստած էր մարմարյա պատշգամբում:

(Ավ. Իսահակյան)

Նմուշ՝ լուսնկա – մթնկա, խավարչտին:

2. ա) Տրված բառերն իրենց ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածիր նախադասությունների մեջ:

Ճանապարհ, *սուր*, *քաղցր*, *երես*, *օդ*, *գանձ*:

բ) Ընդգծիր փոխաբերական իմաստով գործածված բառը՝

3. Երկսյուն (Տ–աձև) աղյուսակում դասավորիր ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածված բառակապակցությունները:

Կանաչ դաշտ, *կանաչ ճանապարհ*, *սև մաշկ*, *սև հոգի*, *դառը կորիզ*, *դառը ճակատագիր*, *մեծ աշխարակ*, *մեծ ապագա*, *քաղցր միրգ*, *քաղցր երազ*, *ծանր զամբյուղ*, *ծանր կյանք*:

Ուղիղ իմաստ	Փոխաբերական իմաստ

4. Ընդգծիր փոխաբերական իմաստով գործածված բայերը, նշիր՝ ինչ իմաստով են նրանք կիրառված:

Երգում է քամին, լալիս է նորից,
Անհույս ու անվերջ մղկտում է նա.
Այս մութ գիշերում այնքան կա թախիծ,
Այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա:

(Վ. Տերյան)

ՄԱԿԴԻՐ

Մակդիրը լեզվի պատկերավորման միջոցներից է: Գեղարվեստական խոսքում առարկան, երևույթը կամ գործողությունը պատկերավոր ներկայացնելու նպատակով գրողները հաճախ են փոխաբերական իմաստով գործածում առարկայի հատկանիշ արտահայտող բառեր կամ կապակցություններ: Օրինակ՝ փափուկ ամպ, զանգակ աղբյուր, շուշան լեռներ, քաղցր հիշողություն:

Մակդիրի հիմնական հատկանիշը փոխաբերական իմաստ ունենալն է: Այն խոսքը դարձնում է պատկերավոր: Մակդիրները հիմնականում նկարագրության (դիմանկար, բնանկար) կարևոր միջոցներ են:

Առաջադրանքներ

1. Հետևյալ բառերին մակդիրներ ավելացրու:

ա) *Հայաստան*, բ) *երաժշտություն*, գ) *վարդ*, դ) *խոսք*, ե) *լիճ*, զ) *լեռներ*, է) *քարեր*:

2. Աշունը բնորոշող մակդրային կապակցություններ գրիր:

3. *Գիրք* բառը ի՞նչ մակդիրներով կարելի է բնորոշել:

4. Փակագծում տրված համանուն բառերը տեղադրի՛ր համապատասխան տեղում՝ ենթարկելով ձևափոխությունների:

ա) Պապ ու _____ հազիվ կարողացան ջրից դուրս քաշել ձկներով լի ծանր _____:

բ) Թելադրություն գրելիս Կարինեն, մերթընդմերթ տնկելով _____ մատը, հուշում էր ընկերուհուն, թե որ բառերի վրա պետք է _____ դնել:

գ) Երբ բարերարներն օգնեցին անպաշտպան _____ աղջկան, նա հուզմունքից սկսեց դառնագին _____:

(թոռ–թոռ, բութ–բութ, լալ–լալ)

5. Ընդգծիր փոխաբերական իմաստով գործածված բայերը, նշիր՝ ինչ իմաստով են նրանք կիրառված:

Երբ Հայաստան եմ ասում,
Քարն արթնանում է քնից,
Սիրտս թռչում է բնից,
Եվ կակաչները բլրից
Դեպի սարերն են վազում:

(Հ. Սահյան)

ՀԱՆՐԻ ՋԱՐՅԱՆ
(1928–1974)

Կենսագրություն

ՆԱ

Ա

Սովորում է մեր դասարանում, բայց ընկերություն է անում հինգերորդ «բ» դասարանի Ծիպուկի հետ: Դասերից հետո սպասում են իրար ու միասին գնում...

Մյուս օրը ուշացած է գալիս դասի: Հարցնում են՝ ինչու՞ ես ուշացել, չի պատասխանում, այսինքն՝ պատասխանում է, բայց կարճ.

–Էլ չեմ ուշանա,– ասում է ու նստում:

Բայց էլի ուշանում է: Նույնիսկ մաթեմատիկայի դասերից է ուշանում: Մենք մտածում ենք, որ ինչ-որ արտասովոր բան է կատարվում նրա հետ: Արտաքինը սովորական է. երկար, նիհար մարմին, ձվաձև դեմք, շագանակագույն աչքեր ու բիզ-բիզ մազեր, թավշյա հայացք:

Իսկ մի քանի օր առաջ նա այնպիսի տեսքով մտավ դասարան, որ ես մտածեցի. «Նրա հետ հաստատ ինչ-որ արտասովոր բան է կատարվում»:

Դարձյալ ուշացած մտնում է դասարան՝ ոտքից գլուխ թրջված: Եվ մեր մաթեմատիկայի դասատուն կլորացնում է աչքերը.

Ուրեմն հիմա էլ թրջվա՞ծ ես գալիս իմ դասին: Որտե՞ղ ես թրջվել. ծով երկնքում փափուկ ամպ էլ չկա:

Նա հանգիստ ասում է.

– Ավազանի մեջ: Վազում էի, առաջս չէի նայում ու ընկա:

– Ուրեմն վազու՞մ էիր: Իսկ ինչո՞ւ էիր վազում:

– Որ դասից չուշանամ:

– Ուրեմն չէի՞ր կարող մի քիչ շուտ արթնանալ:

Բայց նա այլևս ոչինչ չի ասում. նստում է ու լռում: Դասատուն ավելի է կլորացնում աչքերը.

– Պա՛րզ է:

Մենք ծիծաղում ենք. ի՞նչն է պարզ...

Երեկ էլ ուշացած մտավ դասարան՝ դեմքը, քիթն ու ձեռքերը ճանկռված:

– Ուրեմն հիմա էլ կատուների հետ ես կռվի բռնվում,– ասում է դասատուն:

– Ո՛չ,– հանգիստ պատասխանում է նա,– բարձրացել էի ծառը:

– Իսկ ինչո՞ւ էիր բարձրացել ծառը:

Նա այլևս ոչինչ չի ասում. միայն ուսերն է թոթվում: Դասատուն ավելի է ոգևորվում.

– Ուրեմն չե՞ս ուզում խոսել: Պա՛րզ է... Նստի՛ր:

Նստում է: Մենք զսպում ենք մեզ, որ չծիծաղենք, որովհետև մեր մաթեմատիկայի դասատուի դեմքը շատ է սպառնական, և աչքերն էլ կլո՛ր-կլոր են. ամեն րոպե կարող է մեկնումեկիս գրատախտակի մոտ կանչել...

Հետո մտածում եմ. «Գուցե հենց իր ընկերը՝ Ծիպո՞ւկն է նրան ճանկռել»,– և չեմ կարողանում ծիծաղս զսպել:

Դասատուն բարկությունը թափում է վրաս.

– Ուրեմն համարձակվում ես ծիծաղե՞լ իմ դասին: Պա՛րզ է ...Դո՛ւրս...

Իսկույն դուրս եմ գնում: Մեր մաթեմատիկայի դասատուի հետ եթե վիճում ես, վերջը շատ վատ է լինում. մանավանդ որ նրա համար ամեն բան պա՛րզ է:

Իսկ այսօր նա՝ ծառը բարձրացող տղան, ուռած ու կարմրած դեմքով է մտնում դասարան, բիզ-բիզ մազերն էլ զզգզված:

– Ուրեմն այսօր էլ քիթ ու մռութդ կապտեցրե՞լ են,– խայթում է դասատուն:

– Այո՛,– հառաչում է նա:

Դասարանը կարեկցանքով նայում է նրան: Ես էլ մի տեսակ տխրում եմ, որ նա հառաչում է, որովհետև առաջին անգամ եմ տեսնում նրան հառաչելիս: Իսկ դասատուն ուրախ է կարծես:

– Ովքե՞ր են,– հարցնում է նա:

– Ոչ ոք,– ասում է,– ընկա:

– Ա՜խ, ընկա՛ր... Իսկ որտե՞ղ ընկար:

– Փողոցում. փոսի վրայի կափարիչը չէին ծածկել, ու ընկա:

– Ուրեմն կափարիչը չէին ծածկել, ու ընկա՛ր: Դե, եթե չես ուզում կիսվել մեզ հետ, պա՛րզ է. երևի դա համարում ես խաբարբզիկութ–յո՛ւն, ուրեմն նստի՛ր,– ասում է դասատուն, մոտենում գրատախտակին, վերցնում կավիճն ու սկսում գրել նոր գլուխկոտրուկ բանաձև:

Բայց դասարանը ոչ թե գրատախտակին է նայում, այլ փոսի մեջ ընկած տղային: Ես էլ եմ նրան նայում. ձերմակ տեսք ունի: Պարզ երևում է, որ ոչ թե փոսի մեջ է ընկել, այլ որևէ տհաճ արկածի... Բաց է անում պայուսակը, միջից գիրք է հանում, թաքուն կարդում է: Նա խոսել չի սիրում, բայց կարդալ սիրում է, մանավանդ արկածային գրքեր: Որոշում եմ դասամիջոցին Ծիպուկին հարցնել, թե նա ումից է ծեծ կերել:

ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայերեն տառերի մեծ մասի արտասանությունն ու գրությունը համընկնում են, այսինքն՝ արտասանվում են այնպես, ինչպես գրվում են, օրինակներ՝ գալ, ծիծաղել, սալոր, նուռ, հրամանատար, խրամատ, գիշեր, խելք, պայքար, Արամ, Գարեգին, կարմիր, մկնիկ, ձակատ, անկողին, սրճարան (շարունակի՛ր):

Սակայն շատ տառեր էլ կան, որոնց արտասանությունն ու գրությունը տարբեր են, օրինակներ՝ առաջին, ավագ, վերջանալ, անցուդարձ, հաղթել, երգել, շոգ, բարձր, սուրբ, ժողովուրդ, դեղձենի, իջնել, կենդանի (շարունակի՛ր):

Ուղղախոսությունը բառերի ճիշտ արտասանությունն է:

Ուղղագրությունը բառերի ճիշտ գրությունն է:

Հայերենն ունի ճիշտ գրելու որոշակի կանոններ:

Առաջադրանքներ

1. Պատմվածքներից դուրս գրիր ձայնավորով սկսվող վեց բառ:
2. Պատմվածքի Ա հատվածից դուրս գրիր վեց բառ, որոնց արտասանությունն ու գրությունը տարբերվում են:
3. Ընդգծիր այն բառերը, որոնք սկսվում են բաղաձայն հնչյունով:

   Բնօրրան, *ելևէջ*, *էջանշան*, *եղնիկ*, *թախծօրոր*, *էժանագին*, *ոգնի*, *երամ*, *գեղեզր*, *խավիար*, *ողկույզ*:
4. Ընդգծիր տրված բառերի երկհնչյունները:

   Բամբակյա, *բայց*, *գոյ*, *եզակի*, *երեկոյան*, *կահույք*, *կայմ*, *այդքան*, *քնքշաբույր*:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի ա, ի, ու ձայնավոր հնչյունների արտասանությունն ու գրությունը համապատասխանում են, օրինակ՝ Արարատ, առվակ, իրիկուն, հին, ուղի, մուկ:

Է–Ե

1. Բաղաձայնից հետո ե տառը արտասանվում է է, օրինակ, լայնեզր – (լայնէզր), տասներկու – (տասնէրկու):

2. Ձայնավորից հետո ե-ն արտասանվում է յէ, օրինակ, ինքնաեռ – (ինքնայէռ), ամենաերկար – (ամենայէրկար):

3. Կ և չ մասնիկներից հետո ե-ն յէ է արտասանվում, քանի որ ե-ն հաջորդում է ը ձայնավորին, օրինակ՝ կերգեմ – կ(ը)երգեմ, կեռա – կ(ը)եռա, չերազել – չ(ը)երազել:

1. Բառասկզբում Է հնչյունը գրվում է Է տառով, օրինակ՝ Էջ–միածին, Էջանշան, Էակ, Էություն, Էքսկուրսիա, նաև՝ Էի, Էիր, Էր, Էինք, Էիք, Էին:

Այս ընդհանուր կանոնից շեղվում են եմ օժանդակ բայի եմ, ես, ենք, եք, են ձևերը, որոնցում արտասանվող Է–ն գրվում է ե տառով, օրինակ՝ կարդում եմ, նկարում ես, երգում ենք, երգիչ ես, ուսուցիչ եք և այլն:

2. Բառամիջում և բառավերջում Է գրվում է այն դեպքում, երբ Է–ն արմատի սկզբնատառն է, օրինակ՝ վայրէջք, ամենաէական, մանրէ, անէ և այլն:

3. Մնացած դեպքերում բառամիջում և բառավերջում լսվող Է–ն գրվում է ե, օրինակ՝ մեծ, օգնել, արծաթե, ափսե, Նարե:

4. Բառասկզբում յէ լսելիս գրվում է ե տառը, օրինակ՝ երեսուն, եղբայր, երկինք, երդում, երթ:

Հիշիր՝ երբևէ = երբ + և + է (ինչևէ, որևէ), երբևիցե = երբ + և + ից (ինչևիցե, որևիցե):

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ *Է* կամ *ե*:

Պար_ղանակ, վայր_ջք, չ_մ ուզում, որև_, չ_ի գտել, անմիջապ_ս վա–զեց, երբևից_, հն_աբան, _լեկտրական, տեսա_կրան, իսկույն և_թ, ծով_գր, ամենա_ժան:

2. Գրի՛ր հատուկ անուններ (մարդկանց անուններ, ազգանուններ, մայրցամաքների, քաղաքների, գետերի, ծովերի, լճերի անուններ և այլն), որոնք սկսվում են *Ե*–ով և *Է*–ով:

3. Գրի՛ր տրված բառերի հոմանիշները:

Աղոթատուն, անուրջ, գույն, վախ, բախտավոր, յասաման, ուժ, ապե–ռախտ, դրախտ, օտարական:

4. Փակագծում տրված բառերում լրացրո՛ւ բաց թողնված *է*, *ե* տառերը և տեղադրի՛ր տեքստի համապատասխան նախադասություններում:

(առօր_ական, երբև_, ելև_ջները, _ական, չ_ ին, , երբևից_, ան_ական)

Ջութակի_____ունկնդիրներին կտրել էին_____հոգսերից: _____այդքան մարդ չէր հավաքվել,_____այդպիսի համերգ երաժշտասերները _____լսել: Այսպես փոքրիկ ջութակահարը մարդկանց կտրել էր_____ և _____գործերից ու նետել կախարդական հնչյունների աշխարհ:

Բ

Հանկարծ դասարանում բյուրեղյա լռություն է տիրում: Սթափվում եմ, շուռ գալիս ու տեսնում, որ դասատուն վերջացրել է իր նոր բանաձևը և կանգնել նրա գլխավերևում: Դասարանը պապանձվել է վախից: Իսկ նա՝ գիրք կարդացող տղան, իր ոսկե տարերքի մեջ է: Եվ դասատուն նույնպես ընկնում է իր տարերքի մեջ, այսինքն՝ սկսվում է մեր մաթեմատիկայի դասատուի ամենաերկար ու ամենասպառնալից մենախոսությունը:

– Ուրեմն հիմա էլ արկածայի՞ն գրքեր ես կարդում... Փակի՛ր իսկույն այդ սառած գիրքը... Գուցե կբարեհաճեի՞ք գնալ գրատախտակի մոտ, արկա՛ծ տղա: Չե՞ք բարեհաճում: Ո՞վ է ուզում գնալ գրատախտակի մոտ: Ուրեմն ոչ ոք: Պարզ է: Ուրեմն... Ջնում է հերթով բոլորին ու վերջում մատն ուղղում է վրաս,– ուրեմն դու կգնաս:

Իսկույն գնում եմ: Գրում եմ բանաձևը. բոլոր մինուսներն ու պլյուսները խառնում եմ իրար:

Դասատուն դիմում է դասարանին.

– Ուրեմն ո՞վ կարող է գրել ճիշտը:

Ոչ ոք ձեռք չի բարձրացնում. բոլորի ծաղիկ դեմքերին էլ վախ կա, նույնիսկ գերազանցիկների:

Բայց հանկարծ նա՝ Ծիպուկի կապտուկներ ստացած ընկերը, որ միշտ ուշացած է մտնում դասարան, վեր է կենում տեղից, մոտենում է ինձ, կավիճն ու բարձիկը վերցնում է ձեռքիցս և գրում ճիշտ բանաձևը: Հետո կավիճն ու բարձիկը տալիս է ինձ ու նորից գնում նստում իր տեղը: Նա ոչ մեկին ոչինչ չի ասում. միայն ուռած ու կարմրած դեմքի

վրա ժպիտ է երևում մի թեթև: Դասատուի քարե դեմքին էլ ժպիտ է երևում մի թեթև, այն էլ բարի՛ ժպիտ... Աչքերն էլ կլոր չեն, այլ նշաձև ու բարի՛-բարի...

Հնչում է զանգը:

Ուրեմն ոչ ոք չգիտի՞, թե ով է կապտեցրել մեր արկածային հերոսի դեմքը,- հարցնում է ուսուցչուհին:

Իսկույն ձեռք եմ բարձրացնում:

- Դու՞:

- Ո՛չ,- ասում եմ,- Ծիպուկը: Հինգերորդ «բ» դասարանից է, կանչեմ:

- Կանչի՛ր,- ասում է դասատուն:

Իսկույն վազում եմ միջանցք ու քիչ հետո մտնում եմ Ծիպուկի հետ, որի դեմքը նույնպես ներկված է կապույտներով:

Ծիպուկին տեսնելով՝ դասատուն ծիծաղում է:

- Ուրեմն այս Ծիպո՞ւկն է մեր հերոսի դեմքը նախշել:

- Ո՛չ,- ասում է նա՝ հերոսը,- Ծիպուկն իմ ընկերն է, ինչո՞ւ պետք է մենք իրար հետ կռվեինք:

Մենք հաճույքից աշխուժանում ենք, իսկ դասատուն ասում է.

- Դե, ուրեմն, Ծիպո՛ւկ, ասա՛՝ տեսնենք՝ ով է այսպես այլանդակել ընկերոջդ ու քո դեմքը:

- Բակի տղաները,- ասում է Ծիպուկը:

- Իսկ դուք ի՞նչ գործ ունեիք այդպիսի տղաների հետ:



- Մենք ոչ մի գործ էլ չունեինք,- ասում է Ծիպուկը.- նրանք անմեղ տեղը մեզ վիրավորեցին, մենք էլ չուզեցինք վիրավորանքը կուլ տալ:

- Լավ, իսկ ինչո՞ւ էր այն օրը ընկերդ թրջված եկել դպրոց:

Ծիպուկն ասում է.

- Մի փոքրիկ երեխա հեծանիվով ընկավ ջուրը, նետվեցինք ու հանեցինք երեխային, որ հանկարծ չխեղդվեր:

- Դա էլ ճիշտ եք արել: Իսկ հեծանիվը մնաց ջրի մե՞ջ:

- Ո՛չ, հեծանիվն էլ ես հանեցի:

– Կեցցե՛ս, Ծիպու՛կ, կեցցե՛ս: Իսկ երեկ ո՞վ էր ընկերոջդ ճանկռել. էլի անծանոթ տղանե՞ր:

– Ո՛չ, բայց էլի նրանց պատճառով եղավ: Մի փոքրիկ կատվի ճուտ էին դրել ծառի վրա. այնպե՞ս մեղք էր. մլավում էր: Բարձրացանք, իջեցրինք ծառից, թե չէ այնտեղ որ մնար, սովից կսատկեր:

– Պարզ է, Ծիպո՛ւկ, պարզ է, սովից կսատկե՞ր...

Եվ նորից հնչում է զանգը:

Դասատուն ձեռքը դնում է Ծիպուկի ուսին, ու միասին դուրս են գնում դասարանից: Ես էլ մոտենում եմ նրան՝ Ծիպուկի ընկերոջը.

– Լավ մարդ է, չէ՞, մեր մաթեմատիկայի դասատուն:

– Ըհը՛,– գլխով է անում նա:

– Ի՞նչ գիրք էիր կարդում դասի ժամանակ,– հարցնում եմ:

Պատասխանում է.

– «Անգլուխ ձիավորը»:

– Իսկ ամենից շատ ո՞ր գիրքն ես սիրում:

– «Երեք հրացանակիրները»:

Ու այնպե՞ս են փայլում աչքերը...

Հետո դասարան է մտնում մեր մայրենիի դասատուն. նորից սկսվում է դասը: Բայց ես դեռ մտածում եմ նրա մասին՝ մեր դասարանի չխոսկան, բայց քաջ տղայի մասին...

Իսկ մենք ինչքա՞ն ենք սիրում խոսել մեր և՛ կատարած, և՛ չկատարած քաջագործություններից...

Բառային աշխատանք

1. Պատմվածքից դո՛ւրս գրիր մակդիրները: Դրանք փոխարինի՛ր այլ բառերով:

2. Կարդա՛ տեքստը և դո՛ւրս գրիր *ձև* արմատով բառեր: Նշի՛ր՝ ինչ կազմության բառեր են դրանք:

3. «Արմատ + ձև» կաղապարով բառե՛ր կազմիր՝ օգտագործելով հետևյալ արմատները՝ *ասպղ*, *խաչ*, *նոր*, *օղակ*: Դրանցով կազմի՛ր կապակցություններ:

Նմուշ՝ նուշ + ձև = նշաձև, նշաձև աչքեր:

4. Լրացրու բաց թողնված տառը:

Թր_վել, *խ_ճալի*, *որև_*, *բար_իկ*, *խեղ_վել*:

5. Բառարանում գտիր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը և գործածիր բանավոր կամ գրավոր խոսքում:

Տեքստային աշխատանք

1. Ներկայացրու պատմվածքի վերնագրի և տեքստի իմաստային փոխադարձ կապի մասին:

2. Արդարացնում ես ուսուցչի վարքագիծը տղայի նկատմամբ. չէ՞ որ նա չէր փորձում հասկանալ նրան և վերլուծել փաստերը:

3. Քո ընկերների նկատմամբ նման վերաբերմունք դրսևորվ՞ել ես, պատմիր:

4. Պատմվածքի հերոսին անուն դիր՝ ելնելով նրա բնավորությունից:

5. Բնութագրիր անանուն հերոսին՝ պահպանելով հեղինակի բառապաշարը:

6. Բնութագրիր Ծիպուկին: Ինչ կարծիք ունես նրա մասին:

7. Պատմվածքի հատվածներից յուրաքանչյուրին վերնագիր դիր՝ ելնելով բովանդակությունից:

8. Որոշիր հերոսների արարքների դրդապատճառները, դրսևորիր քո վերաբերմունքը նրանց նկատմամբ կամ գնահատիր:

9. Տեքստում գտիր բառեր և արտահայտություններ, որոնք հեղինակը կիրառում է գործող հերոսներին, փաստերն ու իրադարձությունները նկարագրելու համար:

10. Պատմությունը պատմիր ստեղծագործության մեջ պատկերված հերոսներից մեկի անունից:

11. Հարցեր կազմիր գրողի հետ երևակայական հարցազրույցի համար:

12. Նամակնե՛ր գրիր իրական և երևակայական հասցեատիրոջը (բարեկամ, ստեղծագործության հեղինակ, գործող դեմք և այլն):

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Համեմատությունը գեղարվեստական խոսքի ամենատարածված արտահայտչամիջոցներից է: Դրանք կազմվում են մի առարկան կամ երևույթը մյուսին նմանեցնելու հնարքով: Օրինակ, Մեր քաջերը իրենց լեռների արծիվների պես խիզախ ու արիասիրտ են:

Համեմատությունը երկու տարբեր առարկաների զուգադրում է՝ նրանց որևէ հատկանիշի նմանության հիման վրա:

Համեմատություններում անձը կամ իրը կարող է համեմատվել անձի հետ, կենդանական աշխարհի էակների, բնության երևույթների հետ:

Համեմատություններն առավել արտահայտչական երանգ ունեն և ձևավորվում են պես, նման, ինչպես, ասես, կարծես, իբրև, որպես և նման այլ բառերով: Օրինակ՝ Ծովը մռնչում էր ամեհի գազանի պես: Մեր հարևան Միքայել պապը մանկան նման միամիտ էր:

Առաջադրանքներ

1. Կարդա՛, գտի՛ր համեմատությունները: Նշի՛ր կազմության միջոցները:

Հեռվում կարմիր կակաչների և սպիտակ հասմիկների պես երևում են խումբ-խումբ ծաղկեփնջեր. իսկապես դրանք ծաղկեփնջերի են նմանվում արտերի ոսկե անսահմանության մեջ: Սպիտակ աղավնիների նման կարծես թևահարում են արտերին: ***(Հ. Շիրազ)***

2. ա) Կարդա՛, գտի՛ր համեմատությունը:

Անտառը... Այ թե որտեղ է ազատ կյանքը: Խոտի մեջ վխտում էին մրջյունները, բզեզները, օդում ճախրում էին թիթեռները, բոլոր կողմերից լսվում էր թռչունների ձայնը: Ես և Միշան որոշեցինք ամառը գալ այստեղ, գետի ափին հոլիկ շինել և ապրել Ռոբինզոնի պես: ***(Ն. Նոսով)***

բ) Շարունակի՛ր պատմությունը՝ գործածելով համեմատություններ:

3. ա) Կարդա՛ հատվածը, գտի՛ր համեմատությունները: Ցո՛ւյց տուր համեմատվող առարկաները:

Ծովի հայելանման կրծքին շողշողում էին Առտեր և Աղթամար կղզիները: Առտերը փոքր էր. նա դուրս էր ցցվել, ինչպես ծովային շողշողուն մի խեցի, իսկ Աղթամարը հուրհրատում էր ոսկեծույլ մի ծովաբերդի նման: Սակայն ամենից գեղեցիկը ծովն էր, վարդագույն ու կանաչ բոցերով բռնկված ծովը, որի մանուշակագույն կոհակներից ասես ծաղկում ու հանկարծ սուզվում էր ծովային ծաղիկների նմանվող բյուրեղափայլ թրթուրը: ***(Հ. Ղուկասյան)***

բ) Հատվածից դո՛ւրս գրիր բարդ բառերը, գծիկներով առանձնացրո՛ւ արմատները, անհրաժեշտության դեպքում նաև հոդակապը:

4. Կետերի փոխարեն լրացրո՛ւ համապատասխան բառը:

Մեղրի պես....., *պողպատի պես....*, *աղավնու պես....*, *ջրի պես ....*, *եղնիկի պես....*, *մոր նման....*, *հայրենիքի նման ....*, *ամառվա մրգերի նման....*:

Օ–Ո

1. Բաղաձայնից հետո ո տառն արտասանվում է օ, օրինակ՝ կողմնորոշվել, անորակ, Կարո:

2. Բառամիջում ձայնավորից հետո ո–ն արտասանվում է վօ, օրինակ՝ արջաորս – (արչավօրս), ամենաորակյալ – (ամենավօ–րակյալ):

3. Կ և չ մասնիկներից հետո ո–ն վօ է արտասանվում, քանի որ ո–ն հաջորդում է ը ձայնավորին, օրինակ՝ կորսա – կ(ը)որսա, չորոշի – չ(ը)որոշի:

1. Բառասկզբում օ հնչյունը գրվում է օ տառով, օրինակ՝ օր, օղակ, օրացույց, Օհան, Օշական:

Բացառություն են ով և դրանից կազմված ովքեր, ովևէ, ով–ևիցե բառերը, որոնց սկզբում արտասանվում է օ, բայց գրվում է ո տառը:

2. Բառամիջում օ է գրվում այն դեպքում, երբ օ-ն արմատի սկզբնատառն է, օրինակ՝ այսօր, անօգնական, ոսկեզօծ, տափօղակ, կօգնեմ:

3. Մյուս բոլոր դեպքերում բառամիջում և բառավերջում օ արտասանվելիս գրվում է ո տառը, օրինակ՝ խոսել, թատրոն, քանդակագործ, Մեսրոպ, Մարո:

4. Բառասկզբում վօ արտասանվելիս գրվում է ո, օրինակ՝ ոսկի, որակ, որտեղ, Ոստանիկ, Ոսկանյան:

Բացառություն են մի շարք օտար բառեր, որոնց սկզբում վօ արտասանվելիս գրվում է վօ, օրինակ՝ վոլեյբոլ, վոլտ, վոկալ, Վոլգա, Վոլոդյա...

Այս բացառությունը չի տարածվում վաղ անցյալում փոխառված մի քանի բառերի վրա, օրինակ՝ Ոդիսևս, ոդիսական, Որմիզդ, Որմիզդուխտ:

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ *օ* կամ *ո*:

Ականջ_ղ, *ման_դյա*, *օր_րոց*, *երկար_դյա*, *արևազ_ծ*, *բն_դրան*, *արջա_ռս*, *կիրակն_դյա*, *_վքեր*, *հայր_դյակ*, *չ_գնել*, *միջ_ռե*, *չ_գևորել*, *_դանավ*, *ան_թևան*:

2. Հետևյալ արմատներով բառե՛ր կազմիր այնպես, որ մի դեպքում նրանք լինեն առաջին բաղադրիչ, մյուս դեպքում՝ երկրորդ: Արտասանի՛ր այդ բառերը և բացատրի՛ր կազմությունը՝ *ոսկի*, *որդ*, *որմ*, *օր*, *օղակ*, *օձ*:

Նմուշ՝ ոձ–ոձաբան–նրբառձ:

3. ա) Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ *օ* կամ *ո*:

Քնքշ_ռեն, *սև_ռակ*, *մի_ռինակ*, *մեղմ_ռեն*, *ընդ_ռինակելով*, *ոսկեզ_ծեց*, *նրբ_ռեն*, *գրգռմ_ռոր*:

բ) Այդ բառերը տեղադրի՛ր տեքստի համապատասխան նախադասություններում:

Երկնքից _____ ժպտաց արեգակը, _____ _____ սար ու ձոր, արթնացրեց ծաղիկներին: Կակաչը բացեց _____ աչքերը, _____ նազեց մանուշակը....: Զմռան _____ _____ ամիսներից հետո բոլորը, _____ միմյանց, ուրախ համերգով ասես օրհներգեցին արևին:

4. Ընտրի՛ր անուններից մեկը և նրանց մասին հաղորդո՛ւմ պատրաստիր ընկերներիդ համար:

Ոդիսևս, *Օրբելի եղբայրներ*, *Օսկար Ուայլդ*:

ՎԻԳԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

(1916–1975)

Կենսագրություն

ՁՎԱՐԹՆՈՑ

Բարձրանում էր տաճարը: Շոգ էր, օդը՝ ծանրացած փոշով և տապով: Քրտինքն առու էր կազմում կառուցողների պղնձացած մաշկի վրա: Ջուր էին ըմպում նրանք և չէին հագենում:

Տարիներ էին անցել: Լուրթ էր երկինքը, ու արեգակը նոր էր նայում հորիզոնից: Շրջապատում թևածում էր գարնան բույրը: Ծիծեռնակները միմյանց շուրջն էին պտտվում: Զով առավոտի քամին սվսացնում էր ծաղիկ ու սեզ... Խաղա՛ղ, խաղա՛ղ մի լռություն, հանգստացնող սուրբ լռություն էր թագավորում ամեն տեղ:

Ճանապարհորդը ցած իջավ ձիուց, թոթափեց վրայի փոշին և երեսը խաչակնքելով՝ քայլեց առաջ: Բարձրացավ աստիճաններով և մի պահ կանգ առավ շինվածքի առաջ՝ քարակոփ հարթվածքի վրա: Առջևում մուտքերն էին, որոնք, բարակ երկուական սյուներով իրենց վրա փոքրիկ ծածկ կազմած, խորացնում էին փայտակերտ նուրբ դուռը:

... Շողում էր սրբատաշ քարը, որ ձիթված էր և մաքրված փոշուց: Հարկերը հանդիսավորությամբ կրում էին գմբեթը սիգաճեմ բարձրության մեջ: Նրա հետևում ծածկվելով՝ չէին երևում Մասիսները: Տաճարի բոլորակությունը՝ լուսամուտներով առատորեն օղակված, կյանք բուրող բազմաթիվ քանդակները, ողջ հպարտ տեսքը շոյում էին մարդուս

հոգին սրբազան անդորրությամբ: Մտավ ներս: Դրսում՝ արեգակի ներքո, նվազ էր թվում լույսը: Այժմ պատուհաններից ներս թափանցող լույսերի հեղեղը ճառագայթներով հատում էր վեր ու վար, մխրճվում ամեն անկյուն, ավելի հորդացած ծավալվում և փռվում:

Բարձրացավ նա քարե աստիճաններով, հասավ երկրորդ հարկի օթյակը, մոտեցավ սյուներին և մնաց կանգնած: Սյուների արանքներից երևում էին շրջանաձև, պսակածածկ պատուհանները: Հանգստացնում էին սիրտը ճարտար միացումներն ու ըմբոստ սլացումները... Նայեց վար: Լի էր տաճարը հասարակությամբ: Աղոթքի մրմունջները ձուլվում էին կնդրուկի բուրմունքին, երգը հանկարծ բռնվում էր սյուների և խորանների մեջ, հետո տեղից պոկված թռչունի պես խփվում աջ ու ահյակ՝ արձագանքելով հուժկու և ելևէջող, սավառնում լուսամուտներից դուրս...

– Աղաղակեցեք... օրհնեսցի՛ և սրբեսցի՛...

Որպիսի՛ փայլ և մաքրություն ունեին արարողության սպասարկուները: Որքա՜ն զուսպ և հավատով լի էին հանդիսականները...

Ջմայլվել էր: Կրկին ներքևից նայեց վեր, սահեց պատերով, գրկեց սյուները, բարձր ճկվելով՝ հասավ նրանց գագաթներին, մտքում դրոշմեց թռիչքային կամարների բարդ հյուսումները, սահեց երկրորդ հարկի լուսամուտառատ պատերով, մտավ գմբեթածածկի տակ, ուր լույսի նիզակները խաղողվել էին իրար, կպավ բարձրաբերձ գմբեթի սուր առաստաղին և կորչող վերևում մարեց, մնաց միայն երգը.

– Սքանչելի ես դու, տե՛ր, ի բարձո՛ւնս...

... Ավելի բա՛րձր, բա՛րձր,– բացականչեց վարպետ Հովհանն ու սթափվեց:

Ցնցվում էին ձեռքերը, շնչում էր հաճախակի, աչքերում խենթ վայելքի և հաս-



տատ համոզման արծիվներն էին ճախրում: Մուրճերի հանկարծակի աղմուկը վայրիվերո, բայց և հեղեղող հնչյուններով լցվեց լսողության մեջ. նա զգաց քարերի տաշման սվսվոցը, թափվող ավազի խշշոցը, որ դատարկում էին սայլերից, կրի շրշյունը, որ պղպջակվելով մարում էր ցնցուղված ջրի ներքո, և տեսավ մոխրագույն փոշին, որ երերուն նստում էր քարերին, մարդկանց երեսներին:

Կառուցվում էր Զվարթնոցը:

Բառային աշխատանք

1. Գտի՛ր համեմատությունը, ցո՛ւյց տուր համեմատվող առարկաները՝ նշելով համեմատության նպատակը:

2. Նախադասություններում ցո՛ւյց տուր պատկերավորման միջոցները և նշի՛ր տեսակը:

ա) Սուրբ լռություն էր թագավորում ամեն տեղ:

բ) Քրտինքն առու էր կազմում կառուցողների պղնձացած մաշկի վրա:

գ) Ցնցվում էին ձեռքերը, շնչում էր հաճախակի, աչքերում խենթ վայելքի և հաստատ համոզման արծիվներն էին ճախրում:

դ) Լուրթ էր երկինքը, ինչպես ծովի հայելին, և արեգակը նոր էր նայում հորիզոնից:

3. Բնագրում գտի՛ր *խմել*, *արև*, *կապույտ*, *հոտ*, *հովիկ*, *կարար*, *հմայվել* բառերի հոմանիշները:

4. Բնագրում գտի՛ր նախադասություններ, որոնցում գործածված են հականիշ բառեր:

5. Գնահատի՛ր Զվարթնոցը՝ որպես ազգային արժեք: Ուրիշ ի՞նչ ազգային արժեք գիտես, թվարկի՛ր: Դրանցից մեկի մասին հաղորդո՛ւմ պատրաստիր:

6. *Սրբատաշ*, *փայտակերտ*, *գմբեթաձաձկ*, *լուսամուտառատ*, *մոխրագույն* բառերը բաղադրիչների՞ բաժանիր:

7. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ *բար_բանալ*, *թ_աձել*, *թա_ավորել*, *ար_ազան*, *ը_բոստ*, *բարձրաբեր_*, *եր_*, *ցնցու_*:

8. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը:

Տեքստային աշխատանք

1. Հեղինակի բառերով բնութագրիր՝ ինչպես էր բարձրանում տաճարը:
2. Բնութագրիր ճանապարհորդին՝ ներկայացնելով նրա զգացումներն ու հոգեվիճակը:
3. Նկարագրիր տաճարի ներսը՝ օգտագործելով հեղինակային կապակցություններ:
4. Ինչ է նշանակում խաչակնքել: Երբ և որտեղ ես խաչակնքում:
5. Տեքստում գտիր ազգային խորհրդանիշներ: Դրանցից որևէ մեկը նկարիր քո ընտրությամբ:
6. Ինչի՞ խորհրդանիշն է արծիվը: Մեկնաբանիր:
7. Ինչ մտորումներ ունեցար այս տեքստը կարդալիս: Ինչպե՞ս ես գնահատում հայ ազգային մշակութային կոթողները:
8. Կազմեք ստեղծագործության դիպաշարի (սյուժե) մեկ այլ ավարտով գրավոր տարբերակ (խմբային աշխատանք):
9. Հաղորդում կամ սահիկաշար պատրաստեք Զվարթնոց տաճարի մասին (խմբային աշխատանք):

ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ

Անձնավորումը ոճական հնարք է:

Այս դեպքում իրերին, տարբեր երևույթների վերագրվում է մարդկային այս կամ այն հատկանիշը:

Օրինակ՝ Քաղաքի վրա մաղում էր անձրևը, իսկ կիսամերկ ծառերը մրսում էին: Առավոտյան քնքուշ հովը շոյում էր հասկերը:

Անձնավորումը սկզբնապես կիրառվել է ժողովրդական բանահյուսության մեջ: Ժամանակակից գրականության մեջ անձնավորումը միջոց է, որն ուժեղացնում է բնագրի հուզական հագեցվածությունը: Հեքիաթներում, առակներում, մանկական բանաստեղծություններում երբեմն մեծատառով են գրվում որոշ բառեր, նաև տարվա եղանակների, կենդանիների անունները:

Օրինակ՝ Եվ մտածեց Գայլը երկար..., Նայեց ծտին Ուղտը հսկա (*Պ. Սևակ*):

Առաջադրանքներ

1. ա) Հետևյալ բառերը խմբավորելով՝ կազմի՛ր հոմանիշների շարքեր:
բ) Գտի՛ր այդ շարքերից յուրաքանչյուրի հիմնաբառը:

Գեղեցիկ, *ահռելի*, *ահագին*, *սամում*, *դյութիչ*, *գրավչություն*, *խինդ*, *անկշտում*, *ձգնել*, *խոշոր*, *զեփյուռ*, *անհագ*, *քամի*, *խորշակ*, *չքնաղ*, *ագահ*, *հրապուրանք*, *անհագուրդ*, *ձգտել*, *փոթորիկ*, *հոծ*, *թովչանք*, *անկուշտ*, *ջանալ*, *չքնաղ*, *թավ*, *ընչաքաղց*, *աշխատել*, *սյուք*, *առինքնող*, *մրրիկ*, *գողտրիկ*, *հմայք*:

Նմուշ՝ սյուք – զեփյուռ, քամի, փոթորիկ:

2. ա) Ուշադի՛ր կարդա, լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Լուս...կա գիշերին հաջոր...ել էր Արարատյան դաշտի՝ գարնան բույրերով օծված առավոտներից մեկը: Մասիսի *երկնակարկա...* գագաթը ոսկ...որվել էր՝ փայլփլելով ոսկ...առ շողերով, որոնք աչք էին *շլացնում*: Արագածի երկնահու... գագաթը, սակայն, չէր երևում. որպես ամոթխած հարսիկ՝ նա *աքողել* էր յուր դեմքը *անթափանց շղարշով*: Կանաչազար... մարգագետինները՝ ցողված վաղ...րդյան մարգարիտներով, վառվում էին ծիածանի *երփներանգ* գույներով: Ծաղիկները ժպտում էին, *դալար* խոտաբույսերը՝ *ծփում* ու *ծածանվում*, և դաշտի *անդո...* մակերևույթը օրորվում էր *հիասքանչ* ալեկոծությամբ: Ողջ դաշտը վա...վ...ում էր *արբշիռ* գույներով:

բ) Դո՛ւրս գրիր ընդգծված բառերը՝ կազմելով դրանց հոմանիշների եռաշարքեր:

Նմուշ՝

Բառեր	Հոմանիշներ
երկնակարկառ	երկնամուխ, երկնամերձ, երկնահուպ

3. Կարդա՛ Վ. Ենանյանի «Սևանի շուրջը» պատկերը և գտի՛ր անձնավորման դեպքերը:

Հազար գեղեցկություն ունի Սևանը. պիտի ապրես նրա ափին և տեսնես, թե ինչպես է շարունակ փոխում նա իր երանգները, իր տրամադրությունը. մերթ հևում է զայրացած, մերթ ժպտում հեզանազ,

մերթ խոժոռում հոնքերը և շանթ ու կրակ արձակում, մերթ այնպես պայծառ ցոլանում, որ կարծես ոչ թե արեգակն է ցոլանում իր ջրերում, այլ ինքն արեգակ է՝ իջած երկնից: Երբ նա անվրդով նիրհում է իր զմրուխտ ափերի մեջ, չես կարող որոշել՝ երկի՞նքն է ցոլում նրա մեջ, թե՞ ինքը՝ երկինքն է իջել՝ հանգստանալու Գեղամա լեռների շուրջպա-րի մեջ. կապույտ է նա երկնքի նման, արև ունի նա իր խորքում, իսկ գիշերները՝ իր ջրերում լողացող անթիվ աստղեր ու լուսին...

4. Եթե նկարիչ լինեիր, ինչ գույներով կվրձնեիր լճի պատկերը:

5. «Զվարթնոց» հատվածից դո՛ւրս գրիր անձնավորման օրինակներ:

6. Գտի՛ր տրված բանաստեղծական տողում գործածված պատկերա-վորման միջոցը և հիմնավորի՛ր:

Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում: ***(Հ. Սահյան)***

7. Գրավոր նկարագրի՛ր քեզ շրջապատող միջավայրը, բնությունը, մարդկանց արտաքինը, կիրառի՛ր պատկերավորման միջոցներ՝ մակդիր, համեմատություն:

Ը

1. Սկ, ստ, սպ, շտ, զգ, զբ, սփ հնչյունակապակցություններից առաջ թույլ լսվող ը-ն չի գրվում, օրինակ՝ (ը)սկսել, (ը)սթափվել, (ը)ստեղծել, (ը)սպասել, (ը)շտապել, (ը)զգույշ, (ը)զբաղվել, (ը)սփոփել:

Բացառություն են կազմում սպրդել, սփրթնել, շտկել, ստել բառերը, որոնցում ը-ն բաղաձայնից հետո է արտասանվում, այսպես՝ ս(ը)պրդել, ս(ը)փրթնել, շ(ը)տկել, ս(ը)տել:

2. Բառասկզբի ը-ն մի քանի բառերում չի արտասանվում, օրինակ՝ շտեմարան, սկուտեղ, սպասք, Սփյուռք բառերը պետք է արտասանել առանց բառասկզբի ը-ի:

1. Բառասկզբում արտասանվող ը հնչյունը գրվում է միայն ղ, մ, ն բաղաձայններից առաջ, օրինակ՝ ըղձալ, ըմբիշ, ընկեր, ինչպես նաև ըստ բառում:

2. Բառամիջում ը-ն գրվում է, երբ ը-ով սկսվող բաղադրիչ կա, օրինակ՝ խաղընկեր, առընթեր, սրընթաց, օրըստօրե: Նաև կ և չ մասնիկներից հետո, այսպես՝ կընկնի, չընկճվել:

3. Մյուս բոլոր դեպքերում բառամիջում լսվող ը-ն չի գրվում, օրինակ՝ ջ(ը)րհոր, կ(ը)րթություն, անբ(ը)նական:

Լսվող Ը-ն գրվում է միայն այն դեպքում, երբ բառի մեջ միակ ձայնավորն է, օրինակ՝ Մը՛սր, շը՛խկ, թը՛խկ, սը՛ր «անգլերեն՝ պա-ռոն»:

4. Բառավերջում ը հնչյունը գրվում է, երբ արտասանվում է, օրինակ՝ դառը, խառը, սառը, ինը, տասը, ոչ մեկը, ընդհակառակը, ընդամենը, մեկնումեկը, գիրքը, գրիչը:

5. Տողադարձի և վանկատման ժամանակ գաղտնավանկի ը-ն գրվում է, օրինակ՝ գը՛ը-խարկ, մը՛կ-ռատ, դուս-տը՛ր, Մը՛-կըրտիչ (Մկը՛ր-տիչ):

Առաջադրանքներ

1. Անհրաժեշտ տեղերում գրի՛ր ը տառը:

Ամենա_նդունակ, գույն_զգույն, ձեպ_նթաց, լուս_նկա, հայր_նտիր, չ_ոիսկոց, ակ_նթարթ, հյուր_նկալ, առ_նչվել, դաս_նկեր, մակ_նթացություն, չ_նկնել, խոչ_նդոտ:

2. ա) Լրացրո՛ւ ը տառը այն բառերում, որոնցում անհրաժեշտ է:

*Համ_նթաց, **գահ_նկեց**, գիրկ_նդիսառն, զմ_ռսել, ան_նդունելի, _նթերակա, ինքն_ստինքյան, չ_նկճվել, ամենա_նտիր, **մ_թնշաղ**, **ակ_նդեպ**, ան_նդմեջ, **որոտ_նդոսպ**, ձ_կնկիթ, ամենա_նդունակ, չ_նդունել, մերթ_նդմերթ, գործ_նկեր, դյուր_մբռնելի, չ_մբոշխնել, **լուս_նկա**, ակ_նկոր:*

բ) Բառաշարքի թավ գրված բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:

3. Վերը բերված բառերից վեցը ենթարկի՛ր բառակազմական վերլուծության՝ նշելով բաղադրիչների արժեքը:

4. Գրի՛ր հետևյալ բառերի հոմանիշները:

Բողբոջ, խմիչք, բաժակ, հասկանալ, անհնազանդ, ցանկալ:

Կենսագրություն

ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

(ծնվ. 1940 թ.)

ԵՐԳԸ

Ա

1992 թ. ամառվա հունիսը վախի ժամանակ էր: Մեծ ու փոքր փախչում էին:

Շահումյանից մինչև Մարտակերտի շրջան անտառներում մոլորված, ճանապարհը կորցրած մարդիկ էին թափառում: Կամավորական ջոկատը, շրջապատումից խույս տալով, նույնպես թաքնվել էր անտառներում: Հիմնական ուժերի հետ կապը կտրվել էր: Դժվար էր պարզել՝ յուրայինները որտեղ են, որ կողմ են նահանջել: Վախը թափառում էր չորս կողմերում: Արգելված էր կրակ վառել, բարձրաձայն խոսել: Երրորդ օրն էր, ինչ ճարպկորեն դուրս էին պրծել թշնամու ծուղակներից: Հոգնած էին: Մնունդը վերջացել էր: Նստեցին հանգստանալու: Մննդի վերջին մնացորդներն էին միմյանց հետ կիսում:

Հանկարծ հեռվում ձայներ լսվեցին: Թվաց, թե երեխայի լացի ձայն է: Բոլորը միանգամից անշարժացան: Դարձան լսողություն: Տարօրինակ աղմուկ էր՝ անտառային ձայներին ոչ հատուկ:

– Երևի թշնամին է... ,– շշնջաց զինվորներից մեկը.– գտել են հետքերս...

Վախն ավելի խտացավ: Զինվորները ձեռքերի մեջ սեղմեցին զենքերը, ավելի լարեցին լսողությունը:

Նորից անսպասելի լսվեց երեխայի լացն ու անմիջապես էլ կտրվեց. կարծես մեկը փակեր բերանը: Կասկած չկար՝ անտառում մոլորված հայեր էին թափառում: Երևի իրենց տեսել էին, բայց վախենում էին մոտենալ, թուրքերի տեղ էին դրել: Պարզելու համար հրամանատարը հետախույզների մի խումբ ուղարկեց:

– Հայեր են, – վերադառնալով զեկուցեցին հետախույզները,– մեզ նկատել են, կարծում են՝ թշնամի ենք... Չկարողացանք մոտենալ...

– Համոզվա՞ծ եք, որ հայեր են, – ասաց հրամանատարը.– փորձանքի չգանք:

– Հայեր են...,– հաստատեցին հետախույզները,– բայց վախեցած են: Եթե մոտենանք, կարող են վախից կրակել: Իզուր տեղը զոհեր կտանք:

Բոլորն ուշադրությամբ լսում էին հետախույզներին: Այդպիսի դեպքեր եղել էին, երբ յուրայինները վախից կրակել էին կամ հակառակորդին յուրայինների տեղ դնելով՝ դարանի մեջ էին ընկել: Զինվորները լռությամբ ծամում էին ուսապարկերի անկյուններում գտնված, ամառային շոգից չորացած հացի կտորտանքը: Բոլորը մտահոգ էին: Թողնել հեռանալ չէր կարելի. գուցե անօգնական փախստականներ են: Մոտենալ նույնպես վտանգավոր էր: Բոլորը խորհրդային զինվորի համազգեստ էին հագնում, նույն զենքերը կրում, թուրքերից շատերը հայերեն էին խոսում: Ամեն ինչ այնպես էր խառնվել, որ հնարավոր չէր յուրայինին թշնամուց տարբերել:

– Շատ են, – հարցրեց հրամանատարը:

– Երևի 30–40 հոգի: Մեծ մասը տարբեր տարիքի երեխաներ են:

– Հարկավոր է ամեն ինչ պարզել: Թեկուզ հենց մեր անվտանգության համար,– վճռականորեն ասաց հրամանատարը:

Նորից լռություն տիրեց: Հեռվից հազիվ լսելի լացի ձայնը կրկնվեց: Երեխաների ձայներ լսվեցին:

– Ճիշտ է, երեխեք են,– հուզված ասաց զինվորներից մեկը,– ծնողներին կորցրած, մոլորված...

Հետո լացի ձայնն սկսեց հեռանալ: Ինչ իմանաս՝ դեպի ուր են գնում...

Զինվորներն սպասում էին հրամանատարի վճռին: Եվ բոլորի համար անսպասելի նա սկսեց երգել.

– Հսկա երկիր էր Հայաստանը մեր,
Բայց ինչքան ասես թշնամիք ուներ...

Զինվորները զարմացած լսում էին: Մի՞թե այդ էր նրա վճիռը: Իսկ նա շարունակում էր երգել.

– Ուս ուսի տված՝ առյուծի նման
Ետ բերենք հողն ու փառքը հավիտյան:

Մի քանիսն սկսեցին ձայնակցել: Հասկացել էին հրամանատարի մտադրությունը: Ապա երգեցին բոլորը.

– Հայեր, միացեք, միացեք, հայեր,
Արցախն է մեզ կանչում, օգնության հասեք:

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի երկհնչյունների արտասանությունն ու գրությունը մեծ մասամբ համապատասխանում են, օրինակ՝ կղզյակ, Հրաչ-յա, հայր, թեյ, բույր, վայրկյան:

Սակայն մի շարք բառերի արտասանության և գրության միջև կան տարբերություններ:

ՅԱ – ԻԱ – ԵԱ

Յա երկհնչյունը իա տառերով է գրվում

ա) հայերեն հետևյալ բառերում՝ հեքիաթ, կրիա, օվկիանոս, խավիար, բամիա, փասիան, օվկիանոս, ալելուիա,

բ) մի շարք անձնանուններում և ազգանուններում՝ Ազարիա, Անանիա, Բենիամին, Բունիաթ, Եղիա, Ալիսիա, Մարիամ, Մա-րիա, Լիա, Եղիազարյան, Սուքիասյան և այլն (բացառություն են՝ Վանյա, Վոլոդյա, Իլյա և այլն),

գ) աշխարհագրական անունների վերջում՝ Ֆրանսիա, Բելգիա, Գերմանիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Եդեսիա,

դ) օտար լեզուներից փոխառված բառերում՝ ակադեմիա, էներգիա, լաբորատորիա, միլիարդ, քիմիա, օլիմպիադա:

Կանանց օտար անունները գրվում են յա-ով, ինչպես՝ Էլյա, Լիլյա, Օլյա, Սոնյա, Մելանյա, Մարուսյա, Մանյա, Արաքսյա, Եպ-րաքսյա, Եվգենյա, Երմոնյա:

Մի քանի անուններ ունեն զուգաձևեր:

Աշխարհագրական անուն	*Աղջկա (կնոջ) անուն*
Ասիա (աշխարհամաս)	Ասյա
Սոֆիա (Բուլղարիայի մայրաքաղաքը)	Վիկտորյա
Վիկտորիա (ջրվեժ և լիճ)	Սոֆյա

Մի քանի բառերում էլ գրվում է եա, ինչպես՝ Անդրեաս, հրեա, սեանս, իդեալ:

Առաջադրանքներ

1. Խմբավորի՛ր արմատի *յ* և ձայնակապ *յ* ունեցող բառերը:

Հայաստան, *մայիս*, *խնայողաբար*, *թեյաման*, *խոյահարել*, *ծառայողական*, *կայազոր*, *կայուն*, *հայելի*, *հայհոյել*, *հմայել*, *կոյուղի*, *հոյաշեն*, *արքայաբար*, *բայական*, *հմայիչ*, *բայաձև*, *դերբայական*, *գարնանային*, *հայորդի*, *գոյական*, *մակբայական*, *դիմակայել*, *հայասեր*, *ենթակայություն*, *խոյակ*, *հեռակայել*, *հոյակապ*, *մնայուն*, *նայել*, *շոյել*, *սփյուռքահայություն*:

Արմատի յ	Ձայնակապ յ

2. Արտագրի՛ր՝ լրացնելով *յա*, *իա*, *եա* երկհնչյունները:

Միամս_կ, *Զաքար_*, *օվկ_նոս*, *հռոմ_կան*, *քառ_կ*, *Վիկտոր_*(անձնանուն), *այծ_մ*, *փաս_ն*, *դաստ_րակ*, *միլ_րդ*, *բիլ_րդ*, *Անդր_ս*, *Սա_թ-Նովա*:

3. Լրացրո՛ւ աղյուսակը՝ բառերը տեղադրելով համապատասխան բաժնում:

Հրաչյա, *Վիկտորիա*, *Սոֆյա*, *Բուլղարիա*, *Եվրասիա* «երկրագնդի ամենամեծ մայրցամաքը», *Գրենլանդիա* «աշխարհի ամենամեծ կղզին», *Նիագարա* «ջրվեժ Հյուսիսային Ամերիկայում», *Բունիաթ*, *Իլյա*, *Ասիա*, *Օֆելյա*:

Անձնանուններ	Աշխարհագրական անուններ

Բ

Երգի հզոր ալիքները թնդացին անտառապատ լեռներում: Պատերազմի դաժան մեքենան կարծես փոխեց շարժման ուղղությունը: Հայերը ճանաչել էին միմյանց: Կորածները գտնվել էին: Վազելով գալիս էին: Տարբեր տարիքի երեխաներ էին՝ տղաներ ու աղջիկներ՝ բոկոտն, ճղված հագուստներով, կիսամերկ, զզգզված մազերով, նիհարած, բայց վառվող աչքերով: Բոլորից վերջում հայտնվեց մի ծերունի: Վազելուց շունչը կտրվում էր:

Խառնվեցին զինվորներին: Գրկախառնվում էին հարազատի նման: Կարծես փախուստի ճանապարհին կորցրած ծնողներին էին գտել: Զինվորները հացի վերջին փշրանքներն էին բաժանում նրանց: Ծերունուն մի պահ բոլորը մոռացել էին: Իսկ նա նստած ուրախությունից լաց էր լինում:

– Պա՛պ, ես քու ցավը տանեմ,– ասաց հրամանատարը.– էս քանի՞ երեխա ես փրկել: Էս երեխեքին որտեղի՞ց ես գտել ...

– Մեկ-մեկ հավաքել եմ... Պապը ձեր ցավը տանի... Ուղիղ քառասուն ու ինը հոգի: Մոլորված, շշկլված, վախից թփերի, քարերի մեջ թաքնված, սովից, ծարավից նվաղած... Մեկ-մեկ գտել եմ, հավաքել... Փրկել եմ... Էս ա, տասն օր առաջ ութսունս լրացավ: Հիմա որ մեռնեմ էլ, ցավ չի... Իմ փոխարեն էս քառասուն ու ինը երեխեքը կապրեն...

Հրամանատարը գրկեց ծերունուն, համբուրեց ճակատը: Ծերունու հանդեպ զինվորները հարգանքով լցվեցին: Անհավատալի էր: Շատերը գլխապատառ փախչում էին, իսկ ծերունին, իր մասին մոռանալով, ուրիշի երեխաներին էր հավաքել, տառապանքի գնով պահել-պահպանել: Երկար օրեր...

– Պա՛պ, բա որ թուրք լինեինք,– կատակեց զինվորներից մեկը:– Էդ ո՞նց որոշեցիր մոտենալ... Բա որ թուրք լինեինք ու հայերեն երգեինք...

– Ա՛յ բալա,– հանգիստ ասաց ծերունին,– բա թուրքը կարա՞ հայի երգը հայի նման երգի: Նա իրա բայաթիից դենը բան չունի...

Բոլորը ծիծաղեցին: Երեխաները մոռացել էին և՛ հոգնություն, և՛ քաղց: Հրամանատարը նորից երգեց «Հայե՛ր, միացե՛ք» երգը: Բոլորը միացան երգին, և միասին երգն ավելի հզոր էր հնչում, ավելի մարտական...

Բառային աշխատանք

1. Կարդա՛ և միևնույն նախադասության մեջ գտի՛ր հականիշ բառեր:

2. Կարդա՛ բառերը (բառաձևերը) և բացատրի՛ր, թե ինչու *ե*-ն մի դեպքում *է* ես արտասանում, մեկ այլ դեպքում՝ *ե* (յէ):
Երգ, *վառել*, *ծերունի*, *սեղմել*, *երեխա*, *մեջ*, *երևի*, *իննսուներկու*, *կիսաեփ*, *հավաքել եմ*:

3. Բաղադրիչների՝ բաժանիր *անպառապատ*, *գլխապտույտ*, *ուսապարկ*, *հրամանատար* բառերը: Նրանց արմատներով նոր բառեր կազմիր:

4. ա) Առանձնացրու՛ հետևյալ բառերի ածանցները:

Ծերունի, *փշրանք*, *ութսուն*, *մարտական*:

բ) Այդ ածանցներին արմատներ ավելացնելով՝ բառե՛ր կազմիր:

5. Բնագրում գտի՛ր համեմատության օրինակ: Նշի՛ր համեմատվող առարկաները:

6. Բառարանում գտի՛ր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը և այդ բառերը գործածի՛ր պատմելիս:

Տեքստային աշխատանք

1. Ո՞ր կերպարը հավանեցիր, ինչո՞ւ:

2. Բնութագրի՛ր հրամանատարին և ծերունուն: Նշի՛ր նրանց արարքների խորհուրդը:

3. Ձեր բարեկամներից ովքե՞ր են մասնակցել Արցախյան պատերազմին: Պատմի՛ր նրանց մասին:

4. Գրքերից և կինոնկարներից հիշի՛ր նման իրավիճակներ:

5. Գնահատի՛ր հերոսների վարքագիծը և արտահայտի՛ր քո վերաբերմունքը: Ո՞րն է իսկական հայրենասերի քո պատկերացումը:

6. Ի՞նչ է երգը: Ի՞նչ ազդեցություն է թողնում երգը մարդու ներաշխարհի վրա:

7. Հայրենասիրական ի՞նչ երգեր գիտես: Կատարի՛ր դրանցից մեկը:

8. Երգը՝ իբրև արվեստի գործ, համեմատի՛ր կտավի հետ: Ի՞նչ նմանություններ և տարբերություններ ես տեսնում:

ՈՒՅ – ՅՈՒ

Ույ և յու երկհնչյունները ինչպես արտասանվում, այնպես էլ գրվում են, օրինակ՝ բույր, ընկույզ, հյուր, ձյուն, արյուն, Սյունիք, Ծովագյուղ:

Պետք է զգույշ լինել բառի մեջ ավելորդ յ ներմուծելուց: Արտասանել սյունակ, աղյուսակ, պայուսակ:

Երկհնչյունների հնչյունափոխությունը

յա–ե
ատյան–ատենական
պատյան–պատենավոր
վայրկյան–վայրկենաչափ

ույ–ու
բույր–բուրավետ
հույս–հուսահատ
լույս–լուսավոր

ույ–ը սղվում է
սառույց–սառցակալել
պտույտ–պտտահողմ
կապույտ–կապտել

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ *յ* ձայնակապն այն բառերում, որոնցում անհրաժեշտ է:

Վա_ոկյան, *Հոիփսիմե_ի*, *հո_ակապ*, *մնա_ուն*, *ծառա_ի*, *շո_ել*, *է_ակ*, *մի_ասնություն*, *ազգա_ին*, *թե_ման*, *Սերգե_ի*, *վերարկու_ով*, *ջղա_ին*, *կարդա_ի*, *Սարո_ի*, *խնա_ել*, *Նա_իրի*, *արքա_որդի*, *այրուձի_ի*, *ռո-պե_ով*, *սյուն_ակ*:

2. Արտագրի՛ր՝ լրացնելով *ույ*, *յու* կամ *ու*:

Վիրաբ_ժ, *հար_ր*, *ուխտադր_ժ*, *ձ_նաձերմակ*, *ատամնաբ_ժարան*, *ս_նակ*, *բ_րավոր*, *բ_րավետ*, *համբ_ր*, *ալ_ր*, *լուծ_թ*, *համ_թ*, *հ_սալի*, *մ_ս*, *լ_սավոր*, *Վր_ր*:

3. Նախադասություններում գործածի՛ր հետևյալ բառազույգերը՝
ա) բյուր–բույր, բ) *թույր–թյուր*, գ) *հույս–հյուս*:

4. Լրացրո՛ւ բաց թողնված *ույ* կամ *յու* երկհնչյունները և խմբավորի՛ր աղյուսակում:
Հնչ_ն (գոյական), *մ_ս*, *առ_ծ*, *աղ_սակ*, *ալ_ր*, *պա_սակ*, *կապ_պ*, *հ_ր*, *ընկ_զ*, *ողջ_ն*, *ձ_թ*, *զգ_շ*, *ս_նակ*, *բ_ր*, *բ_ր*, *հ_ս*, *հ_ս*, *ս_ն*, *ս_ն*, *ողջ_ն*, *աշխ_ժ*, *շառաչ_ն* (գոյական):

ույ	յու

ՈՅ, ՅՈ – ԻՈ

Հայերենում և օտար մի շարք բառերում լսվում է օյ, գրվում է ոյ, ինչպես՝ խոյ, գոյ, Նոյ:

Հայերեն և օտար մի շարք բառերում լսվում է յո, գրվում է յո, ինչպես՝ յոթ, արդյոք, ընտանյոք, յոդ, Պյոտր:

Մի շարք բառերում լսվում է յո, գրվում է իո, այսպես՝ ռադիո, հետիոտն, միլիոն, բրաբիոն:

Մի քանի բառերում լսվում է յո, գրվում է եո, ինչպես՝ թեո-ռեմ, քամելեոն, Նապոլեոն:

Առաջադրանքներ

1. Գրի՛ր՝ լրացնելով *ոյ*, *յո*, *իո* երկհնչյունները:

Չեմպ_ն, *ամբ_ն*, *_դ*, *քսան_թ*, *օր_րդ*, *ռադ_փուն*, *բրաբ_ն*, *ն_եմբեր*, *ամբ_ն*, *գ_ամարտ*:

2. Լրացրո՛ւ բաց թողնված *ոյ*, *յո*, *իո* կամ *եո* երկհնչյունները:

Ռադ_թափրոն, *արդ_ք*, *գ_ական*, *խ_ակ*, *_թական*, *խ_ընթաց*, *թ_ռեմ*, *քամել_ն*, *լեգ_ն*, *Նապոլ_ն*, *ռադ_կայան*, *միլ_ն*, *մարմար_ն*:

3. Արտագրի՛ր և դո՛ւրս գրիր երկհնչյուն ունեցող բառերը՝ ընդգծելով երկհնչյունը:

Ամառային լուսնկա գիշեր էր: Հարավից փչում էր մեղմօրոր սյուքը: Լուսնի անրջային լույսով էր ողողված Ձիրավի ընդարձակ դաշտա-վայրը, որ մեղմորեն փռվել էր շղարշային կաթնամշուշի մեջ: Հազիվ էր նշմարվում հայոց սրբազան գետը՝ հեքիաթային Արածանին: Թվում էր՝ անդորրություն է ամենուրեք, բայց դա սոսկ երևութական էր:

Հայոց զորքը բանակել էր այդտեղ՝ Արածանիի ափին: Երկու շքեղ վրան առանձնանում էին մյուսներից. մեկը Պապ թագավորի վրանն էր, մյուսը՝ Մուշեղի՝ հայոց սիգապանծ սպարապետի: Բոլորը քնած էին, և միայն կտրիճ պահապաններն էին հսկում բերդի ապահովությունը: Խավարչտին գիշերվա խորհրդավոր լռությունը խախտում էր միայն եղեգների միօրինակ խշշոցը:

ԱՄՓՈՓԻՉ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տրված բառերից յուրաքանչյուրի համար կազմի՛ր հոմանշային և հականշային շարքեր:

Ականակիպ, *ունայն*, *հոծ*, *պարարտ*, *դաժան*, *քաջ*, *ջանասեր*, *վտիտ*, *պայծառ*, *մեղմ*:

Նմուշ՝ մեղմ–թույլ, խիստ:



2. Դո՛ւրս գրիր հականիշ զույգերը.

Այնպես ես գալիս, այնպես ես գնում,
Ո՛վ դու, արարո՛ղ և ավերի՛չ,
Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝
Բերածդ ի՞նչ էր, տարածդ՝ ի՞նչ:
Գալիս ես որպես իրարանցում,
Անց ես կենում որպես երազ...

3. Արտագրի՛ր, կետերի փոխարեն ավելացրո՛ւ հականիշ բառեր և ստացի՛ր առած–ասացվածքներ:

1. ..... հետ քար քաշի՛ր, ... հետ փլավ մի՛ ուտի:
2. ..... գիտես, ...խոսիր:
3. Խոսքը՝ ....., ջուրը՝ .....:
4. Մազը՝....., խելքը՝ .....:

4. Տրված բառաշարքից դո՛ւրս գրիր բառեր, որոնք ունեն համանուններ, բացատրի՛ր նրանց իմաստները. դրանցից վեցը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Բարձր, *մարտ*, *հարկ*, *փոքր*, *այր*, *գազաթ*, *գոլ*, *քանոն*, *քաջ*, *ակ*, *բութ*, *մանր*, *գեղեցիկ*, *ցող*, *շահ*, *աղուտ*, *երջանիկ*, *ծամ*, *վճիտ*, *շրջել*, *սեր*, *ճերմակ*, *դաս*, *հոտ*, *չար*, *մոտիկ*, *ծաղիկ*, *գունդ*, *անարգել*:

5. Բացատրի՛ր տրված բառերի նշանակությունը և դրանցից յուրաքանչյուրով կազմի՛ր նախադասություններ՝

ավանդություն – ավանդույթ,
պճնանք – պչրանք,
ցնծալ – ցնցվել,
քառյակ – քառատող:

6. Տրված բառերն իրենց ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածի՛ր նախադասությունների մեջ:

Մոլախոտ, *ապտղ*, *ճանապարհ*, *երես*, *օղ*, *խաղաղ*, *քաղցր*:

Լրացուցիչ նյութ

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Ականջ դնենք հետաքրքիր պատմությունների» բաժնի ուսումնասիրությունն ավարտելուց հետո դու կկարողանաս հասկանալով կարդալ տեքստը, մատնանշել պատմվող դեպքերի հաջորդական ընթացքը:

Կկարողանաս առանձնացնել տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերը, բառակապակցությունները, նախադասությունները:

Կկազմես տեքստի պլան, կմշակես հարցեր, կվերաշարադրես տեքստն ըստ պլանի, հարցերի կամ ստեղծագործաբար:

Համեմատելով կվերլուծես արձակ և չափածո, գրական և ոչ գրական տեքստերը, եզրահանգումներ կանես թեմայի վերաբերյալ:

Կտարբերակես բառերն ըստ ձևի և իմաստի հարաբերության, մենիմաստությունը և բազմիմաստությունը, բառի ուղիղ և փոխաբերական իմաստները:

Կկազմես կապակցված խոսք՝ տեղին կիրառելով բառերի տարբեր տեսակները՝ ըստ ձևաիմաստային խմբերի, ըստ կազմության առանձնահատկությունների:

ԵՎ ԱՅՍՊԵՍ
ՀՅՈՒՍՎՈՒՄ Է ԻՄ ԵՐԳԸ

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«Եվ այսպես հյուսվում է իմ երգը» բաժնում ուսումնասիրվող թեմաները կնպաստեն քո՝ բանաստեղծության տեքստը արտահայտիչ, հասկանալով կարդալու, զգացողություններն արտահայտելու, խորհրդանիշները բացատրելու, բառերը, պատկերավոր արտահայտությունները կիրառելով՝ կապակցված խոսք կազմելու կարողություններ ձևավորելուն և զարգացնելուն:

Կզարգացնես ուղղախոսական և ուղղագրական կանոնների, օրինաչափությունների իմացությունդ և դրանց ճիշտ կիրառությունը խոսքի մեջ:

ԻՆՉ Է ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Բանաստեղծությունը չափածո ստեղծագործություն է: Աշխարհի, բնության ու մարդկային հարաբերությունների արձագանքը բանաստեղծի հոգում ծնում են մտքեր ու ապրումներ: Շրջապատի, հայրենիքի ու մարդկության հույզերը, ուրախությունները, տագնապները դառնում են բանաստեղծության թեմաներ: Պատահական չէ, որ չափածոյով գրող հեղինակին անվանում են **բանաստեղծ** (բան, խոսք ստեղծող):

Մորս սրտի հետ աշխարհն եմ չափել,
Էլի մեծ էր նա,մեծ էր ու անգին,
Արև աչքերի լույսն է նա թափել՝
Լուսնյակ դառնալով որդոց օրոցքին...
Եվ հիմա քիչ է,թե աչքերս տամ,
Թե սիրտս հանեմ ու տամ մայրիկիս,
Ա՜խ,մայր երգելուց ինչպե՞ս կշտանամ,
Մայրս պատկերն է մայր հայրենիքիս:

Հովհաննես Շիրազ

Կենսագրություն

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ
(1915–1999)

* * *

Մագաղաթի սրբությունով
Ու մաքրությամբ ծաղկաներկի
Արվեստ եղար, երազ ու երգ՝
Քո սրբացած հիմք ու հունով.
Մատյաններով քո լուսաթերթ,
Քո սիրախենթ պատմությունով,
Իմ ժայռակո՛ղ փոքրիկ երկիր:
Քո կրակի սուր ձևերով,
Քանդակներով ու քիվերով
Եղար փլչող գեղեցկություն
Ու քարեղեն տողեր երգի:
Ծաղկի՛ր հիմա, իմ սե՛ր, իմ լա՛վ,
Ելած մթին անդունդներից,
Ճամփաներից հազարադավ:
Դարե՛ր անցիր օրերի մեջ,
Ցավերդ խոր սերերի մեջ,
Առաջնորդի՛ր զավակներիդ
Կայաններով լուսակատար,
Հրաշքներով հորինումի.
Անդունդներիդ եզրին անտակ
Շարի՛ր նորից քիվ ու քանդակ,
Մատյաններդ լցրո՛ւ լույսով
Ու քո քարոտ հո՛ղը հերկիր
Մագաղաթի սրբությունով
Ու մաքրությամբ ծաղկաներկի:

Բառային աշխատանք

1. Գրի՛ր *մատյան* բառի տարբեր իմաստներ: Կազմի՛ր դրանցով նախադասություններ:
2. Դո՛ւրս գրիր *լույս* արմատով երկու բառ: Երկրորդ բաղադրիչներով բառեր կազմիր՝ նշելով նրանց կազմությունը և բաղադրիչները:
3. Բացատրի՛ր *ծաղկաներկ* և *ժայռակող* բառերի կազմությունը:
4. *Ծաղկաներկ* բառի արմատներով ածանցավոր և բարդ բառեր կազմիր:
5. Գտի՛ր *քար* բաղադրիչով բառեր: Բացատրի՛ր իմաստները:
6. Դո՛ւրս գրիր *–ություն* վերջածանցով երեք բառ: Նշի՛ր դրանց արմատները:

7. Մատնանշիր *սրբություն*, *մաքրություն*, *ծաղկաներկ*, *փլչող*, *գեղեցկություն* բառերի շեշտազուրկ բաղադրիչի հնչյունափոխությունը:

8. Դուրս գրիր տեքստի բոլոր հնչյունափոխված բառերը, բացատրիր հնչյունափոխությունը:

9. Գտիր մակդրային կապակցություններ: Դրանք գործածիր նախադասությունների մեջ:

10. Կազմիր նկարագրական խոսք՝ կիրառելով տրված բառերը: *Մնագաղաթ*, *մատյան*, *պատմություն*, *ժայռակոփ*, *երկիր*, *դարեր*, *անդունդներ*, *հերկել*:

11. Բառարանում գտիր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը և կիրառիր պատմելիս կամ գրավոր խոսքում:

Տեքստային աշխատանք

1. Որոշիր բանաստեղծության հիմնական միտքը, բանալի բառերը և հիմնավորիր:

2. Առոգանությամբ կարդա՛ բանաստեղծությունը, հասկանալի ձևակերպիր մտքերդ և պատմիր քո զգացումների մասին:

3. Մնջախաղով, ժեստերի լեզվով հաղորդիր նյութի բովանդակությունը:

4. Հիշիր հերոսական դրվագներ Հայաստան երկրի պատմությունից:

5. Ներկայացրու Հայաստանի քաջ զավակների սխրանքները:

6. Նշիր այն տողերը, որոնք կրկնվում են. բացատրիր նպատակը:

7. Բանաստեղծությունը բաժանիր հատվածների և վերնագրիր նրանց բովանդակությանը համապատասխան: Հիմնավորիր ընտրությունդ:

8. Արձակ շարադրանքով պատմիր ստեղծագործության բովանդակությունը այլ անձի բերանով:

9. Դասանյութի բովանդակությանը համապատասխան նկարազարդումներ արա (ծեփիր կամ ձեռքի այլ աշխատանքներ արա):

10. Բանաստեղծության համար ընտրիր համապատասխան երաժշտություն և բացատրիր նրանց ներդաշնակության հիմքերը:

11. Գնահատիր քնարական հերոսի վարքագիծը և արտահայտիր քո վերաբերմունքը:

12. Բանաստեղծության բովանդակությունից ելներով՝ ձևակերպիր հետազոտության հարցը, նպատակը, հիմնախնդիրը: Պլանավորիր և գրառիր կատարելիք քայլաշարը (նախագծային աշխատանք):

13. Գտիր եզրակացությունն արտահայտող տունը: Մեկնաբանիր՝ ինչ խորհուրդ ունի բանաստեղծության միտքն ամփոփող եզրակացությունը:

ՏՈՒՆ

Բանաստեղծական տունը իրար հետ սերտ կապված մի քանի տողերի միասնությունն է: Տողերը հիմնականում իրար հետ կապվում են համահունչ վերջավորություններով:

Բանաստեղծական տան ամենապարզ ձևը երկու տողից կազմված միտքն է: Կան նաև եռատող տներ: Ամենատարածված տեսակը **քառատողն** է, որն ավելի ամբողջական է ներկայացնում արտահայտված միտքը կամ պատկերը:

Օրինակ՝

ՄԵՐ ՀՈՂԸ

Մեր հողը լեգենդ է, առասպել,
Սասնաբառ էպոսն է մեր կյանքի,
Մեր հողը Նահապետ մեր Հայկն է,
Պսակն է Վարդանանց սխրանքի:

Մեր հողում ամեն ծառ հայ պապ է,
Հայ հայր է, հայ եղբայր ու որդի,
Թոռներին փայփայող հայ տատ է,
Մեր սիրտն է նժդեհված մի ոգի:

(Սոկրատ Խանյան)

Հազվադեպ լինում են նաև 5, 6, 7 և ավելի տողերից բաղկացած տներ:

Հաճախ էլ բանաստեղծությունները կանոնավոր կառուցվածք չեն ունենում: Ժամանակակից հեղինակները գրում են նաև ազատ ոտանավորներ:

Առաջադրանքներ

1. Կարդա՛ ժամանակակից գրողների մանկապատանեկան բանաստեղծություններից և որոշի՛ր՝ դրանք ինչ տներից են կառուցված:
2. Դրանցից մեկ-երկուսը ներկայացրո՛ւ ընկերներիդ:

ԱՐՏԱՇԵՍ ՂԱՋԱՐՅԱՆ
(ծնվ. 1955)

Կենսագրություն

ՀԱՅԱՍՏԱՆ

Մարտիրոս Սարյանի հիշատակին

Սա այն երկիրն է, որ կորցրել ենք,
Սա այն երկիրն է, որ նորից գտանք:
Սա այն երկիրն է, ուր բարձրյալը
Նախաստեղծ կավից արարում էր կյանք:

Ձեփ-ձերմակ ամպեր կապույտ երկնքում...
Ուր որ է պիտի հրաշք կատարվի:
Հեռվում սքողված արարման ակունք,
Արոր ու ակոս՝ հերկած կտավին:

Ծաղկած տանիքին պար բռնած ծռեր,
Հողն իրենով է Լույսը երիզել...
Կարմրաքար վանք ու թզենու ծառեր,
Հասունացել ու կաթում է թուզը:

Զորի պռնկից կախված խաչքարեր,
Այրվող խնկի ծառ՝ դեղին կտավին:
Բերդապարսպին՝ մեսրոպյան գրեր,
Բերդապարսպին՝ քանդակված տավիղ:



Սա այն երկիրն է, որ կորցրել ենք,
Երկիրն այն, որ մենք փնտրեցինք երկար:
Սա այն երկիրն է, ուր մեր անցյալը
Հավերժից հառնում, դառնում է ներկա:

Բառային աշխատանք

1. Բնագրում գտիր *ու* ձայնավորի հնչյունափոխությանը վերաբերող բառեր:
2. Բացատրիր՝ ինչ է նշանակում *արարել*: Թվարկիր՝ ինչ է արարում մարդը:
3. *Կարմրաքար* և *բերդապարիսպ* բառերի արմատներով նոր բառեր կազմիր:
4. *Նախապտեղծ*, *ձեփ-ձերմակ*, *ակունք*, *կարմրաքար*, *թզենի*, *խաչքար*, *բերդապարիսպ*, *մեսրոպյան* բառերը ենթարկիր բառակազմական վերլուծության:
5. Տեքստում գտիր հականիշ բառերի երկու զույգ և դրանցով նախադասություններ կազմիր:
6. Դուրս գրիր գույների անուններ պարունակող կապակցությունները: Դրանք գործածիր նախադասությունների մեջ:
7. Տեքստից ընտրիր, դուրս գրիր և խմբավորիր պատկերավորման-արտահայտչական միջոցներ պարունակող բառերն ու արտահայտությունները: Բացատրիր դրանց դերը տեքստում:
8. Կապակցված խոսքի մեջ նոր իմաստային նրբերանգներով կիրառիր ուսումնասիրված տեքստերից ընտրված պատկերավորման միջոցները:
9. Բառարանում գտիր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը, հարստացրու բառապաշարդ:

10. Ուսումնասիրված բոլոր թեմաներից հավաքեք և կազմեք մակդիրների, համեմատությունների ձեռագիր կամ տպագիր բառարան (նախագծային աշխատանք):

Տեքստային աշխատանք

1. Ներկայացրու բանաստեղծության կառուցվածքը:

2. Պարզիր տեքստի հիմնական միտքը, բանալի բառերը:

3. Առոգանությամբ կարդա՛ և արձակ շարադրանքով ներկայացրու բանաստեղծության բովանդակությունը:

4. Ինչ հույզեր, զգացումներ ունեցար բնագիրը կարդալիս: Հիշիր դրվագներ հայոց պատմության էջերից:

5. Տեքստում գտիր եզրահանգումն արտահայտող նախադասությունը, դուրս գրիր, քննարկիր այն ընկերներիդ հետ:

6. Մեկնաբանիր՝ երբ ենք կորցրել ու գտել մեր երկիրը: Ինչու:

7. Ո՞ր տունն է հոգուդ հարազատ: Ընտրությունդ հիմնավորիր:

8. Դիմիր երևակայությանդ և նկարի միջոցով ներկայացրու ընտրածդ տունը:

9. Սա բանաստեղծություն-բնապատկեր է: Փակիր աչքերդ և լսիր երաժշտությունը: Ինչ ես լսում և զգում: Պատմիր այդ մասին:

10. Նկարիչներից ում կտավին է ներդաշնակում այս բանաստեղծությունը:

11. Մարտիրոս Սարյանի մասին հաղորդում պատրաստիր՝ օգտվելով այլ աղբյուրներից:

ԲԱՂԱՁԱՅՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բ–Պ–Փ

1. Մի շարք արմատներում և դրանցից կազմված որոշ բառերում ր-ից, մ-ից և ձայնավորից հետո փ հնչյունը լսելիս գրվում է բ տառը, ինչպես՝ դարբին, երբ, լիրբ, հարբել, որբ, սուրբ (սրբել), սրբիչ, նուրբ, ուրբաթ (ուրբաթախոս), համբերել, համբույր, աբխազ, Գաբրիել, Հակոբ, Սերոբ, Քերոբ, իբր, խաբել, շաբաթ:

2. Մի քանի բառերում արտասանվում է խպ, գրվում է ղբ, ինչպես՝ աղբ, աղբյուր, եղբայր, ողբ:

3. Բառի բոլոր դիրքերում բ-ն, պ-ն և փ-ն արտասանվում են այնպես, ինչպես գրվում են, օրինակ՝ բորբ, ամբողջ, բամբակ, սերբ, բորբոս, գրաբար, ռումբ, ամպ, ամպրոպ, ապշել, ոոպե, պատշգամբ, կողպեք, ճամպրուկ, վիրապ, ամփոփել, արփի, ափսե, խափշիկ, հափշտակել, սփոփել, փրփուր և այլն:

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ *բ*, *պ* կամ *փ* տառերը:

Դար_նոց, *թ_րթալ*, *երեսար_իչ*, *Ծո_ք*, *ուր_աթախոս*, *Վիրա_*(անձնանուն), *Փար_ի*, *Կար_ի*, *Ար_ի*, *հա_շրապ*, *հա_շրակել*, *թ_ուր*, *ոսկեծո_*, *ջրար_ի*, *սրտապրո_*, *ա_շել*, *ձեր_ակալել*, *լրա_եր*, *եր_ևիցե*, *աղ_յուր*, *շերե_ուկ*, *եր_եմն*, *Ար_իար*, *նր_անկապ*, *սր_ատեղի*:

2. Արմատների միացումով կազմի՛ր նոր բառեր:

Շաբաթ + *թերթ*, *նուրբ* + *թել*, *սուրբ* + *պատկեր*, *խումբ* + *նկար*, *խաչ* + *եղբայր*, *ալի* + *ծուփ*, *դափնի* + *վարդ*, *ըմբիշ* + *մարտ*, *աղբ* + *արկղ*, *թմբուկ* + *թաղանթ*, *հույս* + *խաբ*, *Գեր* + *ափ*, *Բամբակ* + *շատ*, *Կարճ* + *աղբյուր*:

3. Գրի՛ր անձնանուններ, որոնք վերաբերում են *բ*–*պ*–*փ* բաղաձայնների ուղղագրությանը:

4. Փորձի՛ր գրել պատմություն՝ օգտագործելով հետևյալ բառերը:

Շաբաթ, *խումբ*, *լողափ*, *բորբ*, *արփի*, *ոոպե*, *կոփվել*, *փրփուր*, *ափսե*, *ապշել*, *երփներանգ*, *աղբյուր*, *գամփռ*:

5. Տրված բառերը խմբավորի՛ր ըստ *բ*, *պ* կամ *փ* բաղաձայնների ուղղագրության:

Խա_ուսիկ, *հորեղ_այր*, *փր_ոել*, *եր_եմն*, *բամ_ել*, *գրա_ար*, *խա_ել*, *գամ_ռ*, *ամփո_ել*, *ճամ_ա*, *բամ_ակ*, *դիպմամ_*, *համ_ուրել*, *ար_ի*, *եր_ներանգ*, *փր_ուր*, *նր_անցք*, *սր_ել*, *ի_ոև*, *Կող_*, *ող_*, *Գա_ոիել*, *եր_եք*,

աղ_արկղ, *դյուրաբորբոք*, *խա_շիկ*, *ցայտաղ_յուր*, *ոսկեծո_*, *ջրար_ի*, *հար_ուխ*, *բա_ախել*, *թա_առել*, *խա_ուսիկ*, *ալեծու_*, *ար_ել*, *համ_երա-տար*, *ամ_ողջ*, *ար_ագրել*, *նր_առձ*, *սուր_*, *խարխա_ել*, *հա_շտակել*, *հա_ձեպ*, *փա_ազ*, *պա_ակ*, *հա_շտա_*, *խա_անել*, *կա_արիչ*:

Բ	Պ	Փ

6. Կազմի՛ր նախադասություններ *կապկպել*, *կափկափել* բառերով:

7. Փակագծում տրված բառերում ավելացրո՛ւ բաց թողնված *բ*, *պ*, *փ* բաղաձայնները և տեղադրի՛ր տեքստի համապատասխան նախա-դասություններում:

(ոսկեծու_, ա_շել, հա_շտակված, հա_շտա_, երկնահու_, եր_նավառ, եր_ևիցե, եր_ևէ, եր_ներանգ, ձեր_ազատված)

_____ նայում էինք Արագածի _____ կատարներին: _____ չէինք տեսել այդքան _____ ծաղիկներ, _____ այդպես չէի _____ բնության պերճանքից: Լեռնագագաթների ձեփ-ձերմակ ձյունը, դեպի հարթավայրերը _____հոսող գե-տակները, _____ մարգագետինները, _____ ալպյան կանաչը, խիտ թփուտները, մեղմ սյուքի համբույրը շլացրել էին մեզ: _____ քաղաքի օդից՝ ըմբոշխնում էինք նրբագեղ բնության պատկերները:

8. Ամբողջացրո՛ւ հոմանիշների շարքը:

ա) արև, արեգակ, ...
բ) սևամորթ, եթովպացի, ...
գ) ճանապարհ, ուղի, ...
դ) ծարավ, տոչոր, ...

9. Հիշի՛ր անցած դասերի վերնագրերը: Խաչբառը լուծելու համար համապատասխան համարների դիմաց պիտի լրացնես գրական ստեղծագործությունների համապատասխան բառերը: Ճիշտ լրաց-նելուց հետո կարմիր վանդակներում կկարդաս հայալեզու առաջին տպագիր գրքի անվանումը:

1. «Որսորդ....» (Ի. Կռիլով): **2.** «Ոսկի ...»: **3.** «Մեր .... պատմությունը»: **4.** «....» (Արտաշես Ղազարյան): **5.** «..... » (Վիգեն Խեչումյան): **6.** «...., հեռախոսի ու համակարգչի վեճը» (Աննա Ադամյան): **7.** «....» (պատմվածք) (Հ. Թումանյան): **8.** «....» (Էդմոնդո դե Ամիչիս): **9.** «.... վեճը» (Հ. Շիրազ): **10.** «... մարդը» (Հ. Թումանյան):



Կենսագրություն

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ
(1914–1993)

ՈՐՈՏԱՆԻ ԿԻՐՃՈՒՄ

Ես չգիտեմ՝ ինչի մասին
Եվ ինչու են վիճում
Ծիծեռնակներն այս մայիսին
Որոտանի կիրճում:

Ո՞վ իմանա՝ ինչ են թողել
Հեռու ճանապարհին,
Գուցե մեկի մայրն է կորել,
Մեկի քնքուշ մարին:

Գուցե մեկը պնդում է թե՝
Անցած լեռներ ու ծով՝
Մենք ենք բերել
գարունն այստեղ
Ուրախ ծլվլոցով:

Իսկ մյուսը նրան հերքում
Եվ չի ուզում ներել.
– Գարուն է միշտ այս եզերքում
Գարունն է մեզ բերել:

Ես ուզում եմ միջամտել
Նրանց հուզված վեճին,
Ասել.– Ապրեք, լավ եք գտել
Պատասխանը վերջին:

Բայց չգիտեմ՝ ինչի մասին
Էլ ինչու են վիճում
Ծիծեռնակներն այս մայիսին
Որոտանի կիրճում:

Բառային աշխատանք

1. Լրացրո՛ւ տրված բառերի բաց թողնված տառերը:
   *Կիր_*, *վի_ել*, *հեր_ել*, *մի_ամփել*, *վեր_ին*:
2. Բնագրում գտի՛ր *հեռավոր*, *ուղի*, *զվարթ* բառերի հոմանիշները:
3. Գտի՛ր որն է *վիճել* բառի արմատը: Բացատրի՛ր հնչյունափոխությունը:
4. Շարադրա՛նք հյուսիր՝ օգտագործելով *գարուն*, *եզերք*, *կիրճ*, *ծիծեռնակ*, *ծլվլոց* բառերը:
5. Կազմի՛ր *հերքել*, *հեռու*, *քնքուշ*, *վիճել*, *ուրախ* բառերի հոմանշային և հականշային շարքերը:
6. Վերականգնի՛ր *միջամտել* բառի անհնչյունափոխ արմատները և դրանք գործածի՛ր նախադասություններում:
7. Բառարանում գտի՛ր *մարի* բառի բացատրությունը: Նշի՛ր՝ ինչպես են անվանում արու թռչունին:
8. Գրի՛ր շարադրություն՝ «Իմ երկրի բնաշխարհը» վերնագրով:

Տեքստային աշխատանք

1. Կարդա՛ և ստեղծագործաբա՛ր վերարտադրիր բանաստեղծության բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը ու պատկերավոր արտահայտությունները:
2. Բնագրից դո՛ւրս գրիր գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը, մեկնաբանի՛ր:
3. Նշի՛ր՝ գարունը ինչ տրամադրություններ և հույզեր է ծնում: Տարվա ո՞ր եղանակն ես սիրում:
4. Պարզաբանի՛ր՝ ինչո՞ւ են վիճում ծիծեռնակները: Արդարացի՞ է նրանց վեճը:
5. Ըստ քեզ՝ որն է վեճի պատասխանը. ծիծեռնակնե՞րն են բերել գարունը, թե՞ գարունն է ծիծեռնակներին բերել: Քննարկի՛ր:
6. Ուշադրությո՛ւն դարձրու բանաստեղծության կրկնվող տներին: Դրանք ինչո՞ւ են կրկնվում:
7. Որոտանը գետ է Սյունիքի մարզում, Արաքս գետի ձախ վտակն է: Ներկայացրո՛ւ տեղեկություն գետի մասին:

8. Քո բառերով արձակ վերարտադրիր բանաստեղծությունը:

9. Գրավոր շարադրիր բնագրում պատկերված շրջապատող միջավայրը, բնությունը:

10. Նկարիր բանաստեղծությունը քո պատկերացմամբ:

11. Օտար լեզվից հայերեն թարգմանիր որևէ պարզ տեքստ՝ արժևորելով մայրենի լեզվի բառիմաստային և բառակազմական հնարավորությունները թարգմանություն կատարելիս:

ՌԻԹՄ

Ռիթմն ընդհանրապես հավասար միավորների կանոնավոր, պարբերական և համաչափ կրկնություն է, որը բնորոշ է և՛ բնության երևույթներին, և՛ արվեստի որոշ տեսակներին (երաժշտություն, պար, չափածո խոսք): Ռիթմիկ բնույթ ունեն սրտի աշխատանքը, Երկրի պտույտը Արեգակի և իր առանցքի շուրջը, մեխանիզմների աշխատանքը և այլն:

Մեծ է ռիթմի դերը չափածոյում: Այն նախևառաջ հենց ռիթմով է տարբերվում արձակ խոսքից, որը բաղկացած է կապակցություններից և նախադասություններից: Չափածոն բացի այդ տարրերից պարունակում է նաև որոշ հավասար միավորներ, որոնց կանոնավոր և պարբերական կրկնությունից էլ առաջանում է բանաստեղծության ռիթմը: Ռիթմի հիմնական միավորը բանաստեղծական տողն է:

Հայ պոեզիայում ռիթմը հիմնականում առաջանում է տողերի կրկնությունից, որոնց վանկերի թիվը հավասար է: Օրինակ, Խաչիկ Մանուկյանի «Դառնամ թռչուն» ստեղծագործության տողերի ռիթմը առաջանում է նրանից, որ բոլորն էլ ունեն հավասար թվով վանկեր (1-ին և 3-րդ տողերը՝ ութ վանկ, 2-րդ և 4-րդ տողերը՝ վեց վանկ):

Ա՛յ, թե մի օր դառնամ թռչուն,
Երկնքով մեկ թռչե՛մ,
Հետո իջնեմ սաղարթի մեջ,
Շեփորի պես հնչեմ:

Առավոտն իմ երգով բացեմ,
Լույսն ինձ ասի՝ բարև՛,
Գամ, կտուցով թուշդ կծեմ,
Հայաստանի՛ արև...

Առաջադրանքներ

1. Կարդա՛ ժամանակակից գրողների մանկապատանեկան բանաստեղծություններից և որոշի՛ր յուրաքանչյուր տողի վանկերի քանակը: Դրանցից մեկ-երկուսը ներկայացրո՛ւ ընկերներիդ:
2. Բանաստեղծության մեջ գտի՛ր և մատնանշի՛ր հնչյունական արտահայտչամիջոցները՝ հանգ, ռիթմ: Բացատրի՛ր դրանց դերը տվյալ բանաստեղծության մեջ:
3. Տեքստից դո՛ւրս գրիր պատկերավորման միջոցները և նշի՛ր տեսակը:
4. Կարդացածդ տեքստի համար ընտրի՛ր միանման հույզ, ապրում առաջացնող խորհրդանիշներ (երաժշտություն, գույն):
5. Գրի՛ր հանգավորված ակրոստիքոս քո անվան տառերով:

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ
(1919–1998)

Կենսագրություն

ՄԵՐ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Այբուբեն չէ սա,
Բերդ է անմատույց,
Գանձ է աննվաճ.
Դուռ է փրկության,
Ելք, երբ հույս չկա,
Զարթոնքի նվագ:
Էությունն է մեր,
Ընթացքն ու ուղին,
Թագ ու զորավար.
Ժողովող մի կանչ,
Իմաստուն խորհուրդ,
Լինելու հնար:
Խարիսխը նավի,
Ծառը դպրության,
Կնիքն ինքնության,



Հացն հանապազօր
հայի սեղանի,
Ձիրքերի հնձան:
Ղողանջը երգի,
ղեկը ընթացքի,
Ճեմարան ճառի,
Մարզարան մտքի,
մատյան հավատքի,
Յուղ անմար ջահի:
Նախահիմքն է մեր,
Շողը մեր հույսի,
Ոգին մեր ճարտար.
Չինարին այգու,
Պարիսպը մեր տան,
Ջրաղացն արդար...
Ռումբն է մեր ռազմի,
ռունգը բնազդի,
ռահվիրան փառքի,
Սերն ու սիրտն է մեր,
սերմը միշտ ծլող,
Վեմ ու վիմագիր:
Տունը ցամաքում,
տապանը ջրում,
Որպեն սլացքում.
Յորյանը արտում,
Ուղին անհայտում,
Փառքը սխրանքում:
Քիստ ու քաղն է մեր,
քանքար ու քնար,
քարավան ու ափ.
ԵՎ
Օջախն անմար,
օժիտն անհատնում,
Ֆե–ից մինչև Այբ:

Բառային աշխատանք

1. Բնագրում գտիր *ճանապարհ*, *գաղանդ*, *շիրակ*, *ճառագայթ* բառերի հոմանիշները:
2. Գտիր *ելք*, *դպրություն*, *մարգարան* բառերի արմատները: Այդ արմատներով նոր բառեր կազմիր:
3. Դուրս գրիր *ան-* նախածանց ունեցող բառերը, բաժանիր բաղադրիչների:
4. Նշիր՝ պարկերավորման-արտահայտչական ինչ միջոցներ են գործածված բանաստեղծության մեջ:
5. Բառարանում գտիր տեքստի կարմիր գրված բառերի բացատրությունը և քո բառերով բացատրիր:
6. *Այբուբեն*, *ինքնություն*, *փրկություն*, *հնձան*, *հանապազօրյա*, *ճարտար*, *վիմագիր*, *քանքար*, *քիստ* բառերը գործածելով՝ ստեղծագործական շարադրություն գրիր և վերնագրիր:
7. Կետադրիր տրված հաղորդակցական և հնչերանգային տարբեր տեսակի նախադասությունները:

   ա) Երբ Երևան հասանք մութն ընկել էր արդեն:
   բ) Աղջիկս երգիր քո սիրելի երգերից մեկը:
   գ) Վայ կանաչ մարգագետինը երփներանգվել է ծաղիկներով:
   դ) Ինչ գեղեցիկ է խոխոջում գետակը:

Տեքստային աշխատանք

1. Վերհիշիր հայոց այբուբենը տառերի անուններով (գրաբար):
2. Ինչ սկզբունքով է կառուցված բանաստեղծությունը: Նման ինչ օրինակներ գիտես:
3. Հորինիր բանաստեղծություն՝ քեզ ծանոթ մարդկանց կամ ծաղիկների անուններով:
4. Գտիր հայոց լեզվի մասին ասույթներ կամ բանաստեղծական տողեր:
5. Մատնանշիր բանաստեղծության կառուցվածքը:
6. Բացատրիր գործածված պատկերավորման միջոցները՝ մակդիր և համեմատություն:

7. Կարդացածդ բնագիրը համեմատիր նմանատիպ այլ բանաստեղծությանների հետ: Գտիր նմանություններ և տարբերություններ:

8. Բանաստեղծությունը շարադրիր արձակ՝ նոր նրբիմաստներով կիրառելով սովորած բառերը, պատկերավորման միջոցները՝ մակդիրները և համեմատությունները:

9. Մատնանշիր տեքստի ուղղագրական դժվարություն ունեցող բառերի արտասանության և գրության տարբերությունները, բառակազմական վերլուծությամբ հիմնավորիր բառերի ուղղագրությունը:

10. Բանաստեղծությունից գտիր և աղյուսակով ներկայացրու պատկեր, ձայն, զգացողություն կերտող բառերը, բառակապակցությունները:

11. Հիշիր՝ ինչ դեր ունեցան հայոց տառերը մեր ինքնության գործում:

12. Թարգմանիր տեքստը և մայրենի լեզվի հնչյունաբանական, գրային, բառագիտական առանձնահատկությունները համեմատիր ռուսերենի հետ (խմբային աշխատանք):

Птичка божия не знает
Ни заботы, ни труда,
Хлопотливо не свивает
Долговечного гнезда.

В долгу ночь на ветке дремлет,
Солнце красное взойдет,
Птичка гласу бога внемлет,
Встрепенется и поет.

Пушкин А. С.

ՀԱՆԳ

Հանգը չափածո ստեղծագործության հնչյունային կառուցվածքի ձև է: Դա այն երևույթն է, երբ բանաստեղծության մեջ երկու կամ ավելի տողեր ունեն նման վերջավորություն: Քառատողի մեջ կենտ տողերը (I և III) հանգով իրար են կապվում, զույգ տողերը (II և IV)՝ իրար: Օրինակ՝

Լեռների մեջ ժպտա հա**վետ**,
Դու ջինջ լճակդ իմ Սև**անի**,
Քեզ չեմ փոխի ծովերի **հետ**,
Դու աչք իմ մայր Հայաստ**անի**:

(Հ. Շիրազ)

Հանգի ամենակարևոր դերն այն է, որ հանդես գալով տողերի վերջում՝ ավելի է ընդգծում տողի ինքնուրույնությունը: Հանգը ուժեղացնում է բանաստեղծության ռիթմը, երաժշտական է դարձնում գեղարվեստական խոսքը:

Կան, սակայն, ազատ բանաստեղծություններ: Նման բանաստեղծությունների մեջ չկան ո՛չ վանկերի և շեշտերի թվի հավասարություն, ո՛չ էլ շեշտերի կանոնավոր դասավորություն, ինչպես նաև տների կայուն, պարբերաբար կրկնվող կառուցվածք: Հաճախ բացակայում է նաև տողերի համահունչ վերջավորությունը (հանգ): Այսպիսով, ազատ ոտանավորը զգալի չափով մոտենում է արձակին:

Առաջադրանքներ

1. Ընտրի՛ր ժամանակակից գրողների մանկապատանեկան բանաստեղծություններից և որոշի՛ր հանգերի տեսակները: Դրանցից մեկ-երկուսը ներկայացրո՛ւ ընկերներիդ:

Գ–Կ–Ք

Կան գրության և արտասանության որոշ տարբերություններ: Մի շարք արմատներում և դրանցից կազմված որոշ բառերում ր–ից, ն–ից և ձայնավորից հետո բառամիջում և բառավերջում գրվում է գ, սակայն ք է արտասանվում, օրինակ՝ երգ, թարգմանել (թարգմանիչ, թարգմանություն), մարգարիտ, պարգև, Սարգիս, Մարգար, անգամ, ավագ (ավագանի, ավագություն), ձրագ, մարագ, ուրագ, պատարագ, կարագ, օգնել, օգուտ, Օգսեն, գոգ (գոգնոց), շոգ, նորոգել (նորոգում), ոգի, ոռոգել, սուգ, տեգր, էգ (իգական):

Մյուս բոլոր դեպքերում գ–ի, կ–ի և ք–ի գրությունն ու արտասանությունը համընկնում են, օրինակ՝ գարուն, ագահ, վագր, անհագ, ձագար, կոտորակ, կատու, սայթաքել, թաքնվել, հավաքել, ոչ ոք, ոչ–ոքի:

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ *գ*, *կ* կամ *ք* տառերը:

Այ_եկութ, *բարեկար_*, *բար_*(**թեժ**, **այրող**), *զու_ահեռ*, *արջու_*, *եր_ել*, *թա_ավոր*, *թմբու_*, *հավա_ույթ*, *կմախ_*, *աներձա_*, *շա_անակագույն*, *անօ_ուտ*, *մանրու_*, *տա_դեղ*, *դարա_*, *հե_իաթ*, *Մի_աշատ*, *Մեսրա_սյա*, *Բա_բատ*, *Գրի_որ*, *Սու_իաս*:

2. Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր նրան հոմանիշ մեկ բառ: Այդ բառերում գրվում է *գ* կամ *ք*:

Տոթ, *կատար*, *մառախուղ*, *լուսաբաց*, *բանակ*, *գաղանդ*:

3. Ազգանունները դասավորի՛ր այբբենական կարգով:

Գրիգորյան, *Սուքիասյան*, *Բագրատյան*, *Թորգոմյան*, *Սարգսյան*, *Գարեգինյան*, *Ավետիքյան*, *Միսակյան*, *Գևորգյան*, *Ավագյան*:

4. *Մրգահանդես*, *մրգաշատ*, *մրգահյութ* բառերով նախադասությունն՝եր կազմիր:

5. Բառերը լրացրո՛ւ համապատասխան սյունակներում՝ ըստ արտահայտած ընդհանրական իմաստների:

Շաղգամ, *սագ*, *գաքդեղ*, *վագրաձի*, *գինարբուկ*, *վագր*, *զկեռ*, *կարվաձագ*, *սերկևիլ*:

Բույսեր	Կենդանիներ

6. Բառերը խմբավորի՛ր ըստ *գ*, *կ* կամ *ք* բաղաձայնների գրության:

Գովեր_ել, *հե_նել*, *սի_ապանծ*, *եր_իծան_*, *ձ_ան*, *ո_եշնչել*, *թան_*, *մար_արիտ*, *պար_և*, *երփներան_*, *ժայթ_ել*, *գիր_*(փափուկ), *գինարբու_*(խնջույք), *կար_ին*, *կար_ին*, *վար_* (հեղինակություն), *վար_* (վարվելակերպ), *բար_*, *բարա_* (հյուղակ), *բար_* (նիստուկաց), *կողպե_*, *սայթա_ել*, *քսու_*, *գինարբու_*(ծաղիկ), *հո_նատանջ*, *միր_*, *առանց_*, *քր_ջալ*, *էլե_տրականություն*, *առույ_*, *պատ_ամ*, *տրտմաշու_*, *սրտմաշու_*, *մեղ_*(թուլամորթ), *մեղ_*(հանցանք), *դիցու_*:

Գ	Կ	Ք

7. Փակագծում տրված բառաձևերում ավելացնել բաց թողնված *գ*, *կ* կամ *ք* տառերը և տեղադրել տեքստի համապատասխան նախադասություններում:

(*ձ_նավորները*, *գո_ավորության*, *ա_ցանի*, *նեպա_իգներին*, *հո_նորականներն*, *ո_նորում*)

Գեղամա լեռների _____ մեջ անհոգ նազում են Սևանա ջրերը: Քարերի ժանիքներն _____ նման ամուր բռնել են ջրերի վրա բազմած կղզին, ուր մի ժամանակ օթևանել է Աշոտ Երկաթը: Նա _____ էր իր_____, որոնք փոքրաթիվ էին, բայց կարողացան հաղթել արաբ զորքերին: Այդ հաղթանակի առթիվ կղզու_____ ու _____ պատարագ մատուցեցին առ Աստված:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ
(1922–1996)

Կենսագրություն

ՄԻ ՓՈՇՈՏ, ՓԱՓՈՒԿ ՃԱՄՓԱ

Մի փոշոտ, փափուկ ճամփա,
Փշատի փոշոտ ծառեր,
Մի կապույտ, կապույտ երկինք
Ու արև, արև, արև...

Կատարին՝ լույսից շիկնած
Մի թեթև ամպի ծվեն,
Արարատ լեռն է ցոլում
Նյութեղեն – աննյութեղեն...

Ուխտավոր հոգնած մի հով,
Անցնելով բարդուց բարդի,
Գնում է, ծունկի իջնում
Խորանում Արարատի:

Մի փոշոտ, փափուկ ճամփա,
Փշատի փոշոտ ծառեր,
Մի կապույտ, կապույտ երկինք
Ու արև, արև, արև...

Հովի հետ այդ ուխտավոր
Անցնելով բարդուց բարդի՝
Ուզում ես գնալ, գնալ
Ու փարվել Արարատին...

Բառային աշխատանք

1. Տեքստից դուրս գրիր *գ–կ–ք* բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող բառեր:
2. *Փոշոտ ծառեր*, *կապույտ երկինք*, *ամպի ծվեն* կապակցությունները գործածիր նախադասությունների մեջ:
3. Բացատրիր՝ ինչ է նշանակում *ծունկի իջնել*: Ո՞րն է ծունկի իջնելու խորհուրդը: Եկեղեցում ծունկի իջնելիս ինչ են մրմնջում քո շուրթերը:
4. Պատկերավորման–արտահայտչական ինչ միջոցներ են գործածված բանաստեղծության մեջ:
5. Վերլուծիր տրված նախադասությունները:

   ա) Անողոք ու անհոգի մի մարդ քանդում է կաքավի բույնը:

   բ) Լեռն կյանքում մրջյուն չի տրորել:

Տեքստային աշխատանք

1. Որոշիր տեքստի հիմնական միտքը, քննարկիր ընկերներիդ հետ:
2. Թվարկիր Հայաստանը բնութագրող բոլոր խորհրդանիշ բառերը: Բացատրիր նրանց կիրառության նպատակը:
3. Գտիր յուրաքանչյուր տան բանալի բառը, տները վերնագրիր դրանցով: Բացատրիր ընտրությունդ:
4. Տեքստի բանալի բառերի և նախադասությունների միջոցով ստեղծիր պատմություն, վերնագրիր:
5. Ինչ խոհ է ծնում բանաստեղծությունը: Ըստ բանաստեղծության՝ նշիր հայ ժողովրդի անցած ուղին: Անցյալը զուգորդիր այսօրվա հետ:
6. Ուխտավոր–Արարատ բառազույգով մի պատկեր ստեղծիր:
7. Մեկնաբանիր՝ որն է Արարատ լեռան խորհրդանիշը:
8. Վերնագրիր բանաստեղծությունը՝ ըստ բովանդակության:
9. Ստեղծագործաբար գործածիր բառերի իմաստային կապերը (հոմանիշներ, հականիշներ):
10. Լսիր երաժշտությունը և վերաբերմունք արտահայտիր:

Լրացուցիչ նյութ

Առաջադրանքներ

Բանաստեղծության մասին քո գիտելիքները կարող ես ստուգել՝ լրացնելով խաչբառը:



Ուղղահայաց

1. Հայ նկարիչ: **2.** Երաժշտական գործիք, անցյալում բանաստեղծական խոսքն արտասանվել է այդ գործիքի մեղեդու ուղեկցությամբ: **4.** Տարվա եղանակ: **5.** Բանաստեղծական տողերի սերտ միասնություն: **6.** Բանաստեղծության կառուցման հիմնական ձևերից: **7.** Բանաստեղծության հավասար միավորների պարբերաբար, կանոնավոր կրկնությունը: **9.** Բանաստեղծության երկու կամ ավելի տողերի հաճախ նման կամ նույն վերջավորություն ունենալը: **10.** Անցյալում բանաստեղծությունը կոչվել է ...:

Հորիզոնական

3. Ավետյաց երկիր, որտեղ ապրում ենք: **8.** Հայ բանաստեղծուհի: **11.** Ամենայն հայոց բանաստեղծը: **12.** Տեղեկություն հաղորդելու գրավոր միջոց (...– բանաստեղծություն): **13.** *Կարեկցանք*, *գութ* բառերի հոմանիշը:

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Եվ այսպես հյուսվում է իմ երգը» բաժնի ուսումնասիրությունն ավարտելուց հետո կկարողանաս հասկանալով, արտահայտիչ կարդալ, կկազմես բանաստեղծության զգայական ընկալման աղյուսակներ:

Կկարողանաս մատնանշել բանաստեղծության կառուցվածքը, կբացատրես և կտարբերես պատկերավորման միջոցները:

Կկարողանաս համեմատել և վերլուծել տարբեր բանաստեղծությունների տեքստեր, բանաստեղծությունը կշարադրես արձակ ձևով: Կլսես բանաստեղծությունների ռիթմին համահունչ երաժշտություն և հույզերդ կարտահայտես ըստ ընկալման:

Կմատնանշես բառերի արտասանության և գրության տարբերությունները:

Սիրելի՛ բարեկամ, քո դասագրքի հեղինակները հուսով են, որ դու լավ սովորեցիր «Մայրենի 5»-ի բոլոր դասերը՝ գրական և լեզվական նյութերի համակցումով: Գրի՛ր քո կարծիքը դասագրքիդ մասին և ուղարկի՛ր հեղինակներին: Անհամբեր սպասում ենք: Մինչ հանդիպում:

Էլփոստ՝ ash.galstyan@mail.ru, toma.tovmasyan.59@mail.ru

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա

ԱԼԵՀԵՐ – *1. Ձերմակած մազերով: 2. Փիբ. Ձյունապատ:*

ԱԼԵՎՈՐ – *1. Ծեր մարդ, ծերունի: 2. Ծերացած:*

ԱԾԽԱՐԱՐ – *Փայտածուխ պատրաստող արհեստավոր:*

ԱԿԱՆՋՈՎ – *1. Լսող: 2. Հնազանդ, խելոք:*

ԱԿՈՒՆՔ – *Անցք, որից բխում է ջուրը, ջրի ակ: 2. Այն տեղը, որից սկիզբ է առնում գետը:*

ԱՀՅԱԿ – *Ձախ:*

ԱՃՅՈՒՆ – *1. Դիակ: 2. Հող, փոշի (փտած մարմնի):*

ԱՆՄԱՏՈՒՅՑ – *1. Որին չի կարելի մոտենալ, անհասանելի: 2. Չմատուցված, չտրված:*

ԱՆՇՈՒՔ – *1. Ոչ շքեղ: 2. Հասարակ, աղքատիկ:*

ԱՆՏԱԿ – *1. Տակ, հատակ չունեցող: 2. Փիբ. Շատ խոր: 3. Փիբ. Անսահման:*

ԱՊԻ – *1. Մեծ եղբայր: 2. Հայր: 3. Ծերունիների տրվող հարգական անուն:*

ԱՊՍՊՐԵԼ – *Ուրիշի միջոցով հանձնարարել, պատվիրել:*

ԱՌԱՍՊԵԼ – *Հին ժողովրդական զրույց ասվածների, դիցաբանական հերոսների, աշխարհի ու կյանքի ծագման մասին:*

ԱՎԱՐ – *Պատերազմի ժամանակ թշնամուց գրավված ամեն ինչը (մարդ, զենք, կենդանի, գույք և այլն):*

ԱՐՈՐ – *Երկրագործական գործիք հողը հերկելու համար:*

Բ

ԲԱԽՏԸ ԲԵՐԵԼ – *Մեկի գործերը իրենից անկախ հաջողվել, հաջողություն ունենալ:*

ԲԱՐԵՀԱՃ – *Մեկի նկատմամբ բարությամբ տրամադրված:*

ԲԱՐԵՐԱՐ – *Բարի, օգտակար գործ կատարող, բարեգործ:*

ԲՈԹԵԼ – *Հրել:*

Գ

ԳԵԼԽԵՂԴ – *Հովվի մեծ և ուժեղ շուն, գամփռ:*

ԳԹԱՍԻՐՏ – *Գթոտ սիրտ ունեցող, կարեկցող:*

ԳԼԽԻԿՈՐ – *1. Գլուխը կախած: 2. Լռռումունջ:*

Դ

ԴԱՍ ՔԱՂԵԼ – *Խրատվել, օրինակ վերցնել:*

ԴԱՐԴ – *1. Վիշտ: 2. Հոգս:*

ԴԵՂՁԱՆԻԿ – *Փոքրիկ երգեցիկ թռչուն:*

ԴԻՎԱՀԱՐ ԼԻՆԵԼ – *Սարսափահար լինել, վախենալ:*

ԴՐԿԻՑ – *Հարևան, դրացի:*

Ե

ԵՂԲԱՅՐԱՅՈՒ – *1. Ընկեր, մտերիմ: 2. Խորթ եղբայր:*



Զ **ԶԱՐԶԱՆԴԵԼ** – *Զարհուրել, սարսափել, երկյուղով լցվել:*
ԶԱՐԹՈՆՔ – *1. Զարթնելը: 2 Բնության՝ ձմռան քնից դուրս գալը:*

Թ **ԹԱԳԱՎՈՐԱԶՆ** – *Թագավորի զավակ:*
ԹԱՎԻՇ – *1. Նորը ու փափուկ խավով պատված կտոր: 2.Փիր. Կանաչ, բուսականություն:*
ԹԻ – *Փայտե գործիք զանազան գործողությունների համար (ձյուն մաքրելու, ցորենը կալում դիզելու և այլն):*
ԹՈԹՎԵԼ – *Թափահարել, թոթափել, թափ տալ:*
ԹՎԱՆՔ – *Հրացան:*

Լ **ԼԱՌ** – *1. Տղա, մանչ: Իբրև կոչ, դիմելաձև (այ տղա):*
ԼՈՒՄՆՈՏ – *Լուսնոտությամբ տառապող՝ հիվանդ:*
ԼՈՒԲԹ – *Բաց կապույտ գույնի, կապտավուն:*

Խ **ԽԱՂՍ ԼԻՆԵԼ** – *1. Խաղալ: 2. Թովռալ, ցատկոտել:*
ԽԱՐԻՍԽ – *Ծովի հատակին կառչող ճանկավոր հարմարանք, որ ապահովում է նավերի կանգառը:*
ԽՈՐՈՄ – *Հնձած խոտի փոքրիկ դեզ, որից մի քանիսը միացնելով՝ խուրձ են կապում:*
ԽՈՐՏԻԿ – *Կերակուր:*
ԽՐՃԻԹ – *Հողաձաձկ կտորով փոքրիկ տուն, հյուղ:*

Ծ **ԾՄԱԿ** – *1. Անտառ: 2. Արևազուրկ, միշտ ստվերոտ:*
ԾՎԵՆ – *Պատառ, քուլա (ամպի, ծխի, մառախուղի):*
ԾՈՒՂԱԿ – *1. Հատուկ սարք վայրի կենդանիներ բռնելու համար, թակարդ: 2. Փիր. Դարան, գաղտնարան (թշնամուն հանկարծակի և անսպասելիորեն հարվածելու համար):*

Կ **ԿԱԹՆԵՂԲԱՅՐ** – *Մեկ մոր կաթով սնված ոչ հարազատ եղբայրներ:*
ԿԱՐԵԿԻՑ – *Օգնող, պաշտպանող, ցավակից:*
ԿԱՐՄԻՐ ԿՏՐԵԼ – *Շիկնել:*
ԿԻՏԵԼ – *1. Կուտակել, դիզել: 2. Մի տեղ հավաքել, ժողովել:*
ԿՆԴՐՈՒԿ – *Արևադարձային ծառերից ստացվող անուշահոտ խեժ (գործածվում է խնկարկման համար)*

Հ **ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ** – *Հաղորդակցվելը (խոսքային, ժեստային):*
ՀԱՆԱՊԱԶՕՐ – *Ամեն օր, օրեցօր:*
ՀԱՆՑ–*Որպես, ինչպես:*
ՀԱՌԱՉԵԼ – *Խոր հոգոց հանել, ախ քաշել:*
ՀԵՏԱԽՈՒՅԶ – *Հետախուզություն կատարող զինվորական:*

ՀՆՁԱՆ – *Այգիներում գետնի մեջ փորված և մաքուր շինված ավազան, որի մեջ լցնում են խաղողն ու ոտքերով ճզմում:*

ՀՈԳԵՊԱՀՈՒՍՏ – *Նեղ օրվա համար պահած բան, խնայողություն:*

ՀՈՐԻԶՈՆ – *Երկնքի և երկրի (ցամաքի կամ ջրի) թվացող միացման՝ շփման գիծը:*

ՀՐԱՇԱԿԵՐՏ – *Հրաշալի արվեստով կերտված, շինված, հոյակապ, փառահեղ:*

Ձ **ՁԻՐՔ** – *Շնորհք, տաղանդ:*

Ղ **ՂՈՉԱՂ ԿԵՆԱԼ** – *Քաջ, անվախ լինել:*

ՂՉՐՂՈՒ – *Աղմուկ, աղաղակ, հայ-հույ:*

ՂՍՄԱԹ – *Բախտ:*

ՂՐԿԵԼ – *Ուղարկել:*

Ճ **ՃԱՐ** – *Հնար:*

ՃԱՐՏԱՐ – *Վարժ, հմուտ:*

ՃԻՐԱՆ – *Կենդանիների և թռչունների սուր և կեռ եղունգ, մագիլ:*

Մ **ՄԱԳԱՂԱԹ** – *Հորթի, գառան կամ այլ կենդանու կաշի, որ հատուկ մշակելով՝ պատրաստել են վրան գրելու համար:*

ՄԱՀԻՃ – *Անկողին:*

ՄԱՍՈՒՆՔ – *1.Քրիստոսի, Աստվածածնի, սրբերի գործունեության հետ կապված տարբեր իրեր, առարկաներ: 2. Շատ թանկագին, սրբազան բան, նշխար:*

ՄԱՐԵ – *Մայր բառի դիմելաձև:*

ՄԱՐԻ – *Էգ թռչուն:*

ՄԻՆՈՒՃԱՐ – *Ծնողների միակ զավակը:*

ՄՏԱՄՈԼՈՐ – *1. Մտքով մոլորված: 2. Մոռացկոտ, ցրված:*

ՄՐՄՈՒՆՋ – *Մեղմ ձայն, շշունջ:*

ՄՈՒՇ-ՄՈՒՇ – *Հանդարտ, ախորժելի, քաղցր:*

ՄՈՒՐԱՋ – *Իղձ, փափագ:*

Յ **ՅՈՒՆԱԿ** – *Խորվաթերեն՝ տղա:*

Ն **ՆԱԽՇՈՒՆ** – *1. Նախշերով զարդարված: 2. Սիրուն, գեղեցիկ:*

Շ **ՇԻԿՆԵԼ** – *Կարմրել, կարմրատակել (քաշվելուց, ամաչելուց, տաքությունից):*

ՇԻՎԱՐ – *Մոլորված, անճար:*

Պ **ՊԱՆԴՈՒԽՏ** – *Հայրենի երկրից հեռացած և օտարության մեջ ապրող մարդ:*

ՊԱՊԱՆՁՎԵԼ– *1. Լեզուն կապ ընկնել, համրանալ: 2. Լուռ մնալ, լռել, ձայնը կտրել:*

ՊԱՏՎԻՐԱՆ – *1. Պատգամ, պատվեր: 2. Կրոնաբարոյական պատվեր:*
ՊԱՐՏԱՊԱՆ – *Որևէ մեկից պարտք վերցրած անձ:*
ՊՋՏԻԿ – *Փոքր, փոքրիկ:*

Ռ **ՌԱՀՎԻՐԱ** – *1. Մի բան սկզբնավորող, հիմնադրող: 2. Առաջնորդ:*
ՌԵԽ – *1. Մարդու բերան (անարգական իմաստով): 2. Անասունների բերան, երախ:*
ՌՈԲԻՆԶՈՆ ԿՐՈՒԶՈ – *1. Դ. Դեֆոյի համանուն վեպի հերոսը: 2. Ռոբինզոն անունը դարձել է թևավոր խոսք այն մարդկանց համար, որոնք անսովոր արկածներ են ունեցել և միայնակ պայքարել դժվարությունների դեմ:*

Ս **ՍԱՐԵԿ** – *Սարյակ:*
ՍԻՐԱՍՈՒՆ – *Սիրով սնված, փայփայված, շատ սիրելի:*
ՄՆԴՈՒԿ – *Զանազան իրեր, դրամ, ոսկեղեն պահելու մեծ արկղ:*
ՍՊԱՌՆԱԿԱՆ – *Սպառնալիք պարունակող, արտահայտող:*

Վ **ՎԻՄԱԳԻՐ** – *Քարի վրա արված արձանագրություն, գիր:*
ՎՃԻՏ – *Պարզ, մաքուր, ջինջ:*

Տ **ՏԱՎԻՂ** – *Լարային նվագարան:*
ՏԵԳ – *Նիզակի ծայրի սուր երկաթը, որով խոցում են:*
ՏՈՒՏ – *Զգեստի ծայր, փեշ, քղանցք:*

Ց **ՑՑԶՈՐ** – *Ցցրից պատրաստված պատ, ցցապատ:*

Ուլ **ՈՒԽՏԱՎՈՐ** – *Որևէ սրբավայր ոտաթ գնացող, ոտաթագնաց:*

Փ **ՓԱՀԼԵՎԱՆ** – *Լարախաղաց:*
ՓԱՅՏԱՀԱՏ – *Անտառափայտ կտրող բանվոր:*
ՓԱՐՉ – *Կավե կամ պղնձե երկարավուն ունկավոր գավաթ:*
ՓԱՐՎԵԼ – *Փաթաթվել մեկին, մի բանի, գրկախառնվել:*

Քի **ՔԱԹԱՆ** – *Կտավատի բույսի թելից գործված կտոր, կտավ:*
ՔԱՆՔԱՐ – *Տաղանդ, շնորհք:*
ՔԱՋՔ – *Առասպելական ոգի՝ չար հատկությամբ, որ ապրում է լեռներում, քարանձավներում:*
ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ – *Բանաստեղծների, գրողների մեջ երևելին՝ ամենանշանավորը:*
ՔԻՍՏ – *1. Մազանման երկար հավելված, որ աճում է ցորենի, գարու, հաճարի հասկերի ամեն մի հատիկի գլխին: 2. Ձկան փուշ:*
ՔԻՎ – *Շենքի տանիքի կամ պատշգամբի դուրս երկարացած մասը:*
ՔՆԱԹԱԹԱԽ – *Քնից դեռ լիովին չարթնացած, կիսարթուն:*

Հավելված 2

ԱՌԱՐԿԱՅԱՅԱՆԿ

Ածանց 71, 73,103, 171
նախածանց 71, 160
վերջածանց 72, 147
այբբենական կարգ 8, 88, 79,163
այբուբեն 7, 8, 158, 160
այլաբանություն 54
անձնանուն 138, 153
առած 19, 59, 99, 143
առակ 7, 56, 59, 80, 85, 131
առոգանության 25
ասացվածք 21, 31, 59, 73, 100, 143
ավարտ 51, 60
արժեքային համակարգ 12
արձակ 12, 54, 57, 133, 144, 165
արմատ 49,50, 74, 84, 123,127, 160
արտասանություն 76, 103, 162
Բազմիմաստություն 108
բաղաձայն 36, 46, 47, 55, 61,126, 133,153, 163
միաշարք բաղաձայն-ներ 47
երկշարք բաղաձայն-ներ 47
եռաշարք բաղաձայն-ներ 47
բայ 116, 120
բանաստեղծ 146
բանաստեղծություն 10, 131, 146,148, 157, 166
բանաստեղծուհի 10, 166
բառ 60
պարզ բառ 67
բարդ բառ 69, 79, 126
ածանցավոր բառ 70,73,75
համածանցավոր բառ 71
հարադրավոր բառ 65
մենիմաստ բառ 108, 109
բազմիմաստ բառ 108
բանալի բառեր 41,51,75, 83, 112, 148, 165
հոմանիշ բառեր 94
հականիշ բառեր 50, 130, 143
համանուն բառեր 104
առարկա ցույց տվող բառեր
գործողություն ցույց տվող բառեր 34
բառազույգ 50, 67, 84, 85
բառակապակցություն 28, 74, 83, 90, 99, 161
բառաշար (ք) 12, 20, 41, 54, 70, 82,90, 100, 124, 134, 143,
բառարան 20, 41, 55, 109, 112, 148
բացատրական բառարան 79,109, 167
հոմանիշների բառա-րան 35
բառիմաստ 108
բառի ուղիղ և փոխա-բերական իմաստներ 113, 114
բարբառային բառեր 12, 29, 93
բեմագիր 36
բնագիր 161
բնանկար 115
բովանդակություն 24, 28, 80, 124
Գիր 9, 80, 170
գլխավոր միտք 20, 63, 88, 90
գործող անձ 21, 112
գրական համարժեք 29, 74, 79, 93
գրություն 118, 119, 152, 162
Դատողություն 25
դիմախաղ 21, 22
դիմելաձև 168
դիպաշար 56
դրդապատճառ 24, 29, 60
Երկխոսություն 21, 88, 70
երկհնչյուն 36, 85, 86, 87, 137
երկհնչյունների արտա-սանություն 137
երկհնչյունների գրու-թյուն 137
երկսյուն աղյուսակ 35
Զրույց 21, 57, 84, 85, 167
Թեմա 146
Ժեստ 21, 56, 88, 148
գլխի և ձեռքի ժեստեր 21
Իմաստ 32, 67
Լեզվական միավոր 36, 67
Խաչբառ 4, 33, 166
խմբային աշխատանք 10, 56, 113, 161
խոսվածք 29
խոսք 48, 65, 112, 166, 168
բանավոր և գրավոր խոսք 22, 56, 65
ուրիշի ուղղակի խոսք 25
անուղղակի խոսք 25
թևավոր խոսք 59, 170
խորհրդանիշ 12, 131, 158
Ծաղրանկար 56

Կանխատեսում 28
կարողություն 4, 12, 54, 90, 146
կերպար 29, 41, 90, 140
կրկնություն 157
Հականիշ 100
տարարմատ հականիշներ 100, 106
հաղորդագրության 52
հաղորդակցական կարողություններ 3
հաղորդակցում 22, 25, 50, 168
խոսքային հաղորդակցում 21, 25
ոչ խոսքային հաղորդակցում 21
համանուն 94, 104, 105
նույնագիր համանուններ 105
նույնահունչ համանուններ 105
բացարձակ համանուններ 104
համեմատել 52, 166
համեմատություն 35, 160, 125, 161
հանելուկ 63
հասցեատեր 124
հատկանիշ 17, 41, 90, 112, 165
հատուկ անուններ 120
հարցազրույց 124
հեղինակ 10, 12, 54, 56, 124, 146,
հերոս 31, 47, 51, 54, 66, 124, 148, 165, 167, 170
հեքիաթ 18, 28, 84, 131, 137
հայկական ժողովրդական հեքիաթ 13
հրաշապատում կամ կախարդական հեքիաթ 12
կենդանական հեքիաթ 12
իրապատում հեքիաթ 12
հնչերանգ 16, 25,
հնչյուն 36, 42, 78
ձայնավոր հնչյուններ 36
բաղաձայն հնչյուններ 47
վանկարար հնչյուն 78
հնչյունաբանություն 36
հնչյունական համակարգ 36
հնչյունակապակցություն 133
հնչյունափոխության 79, 80, 81, 141, 148
հոդակապ 67, 69
հոմանիշ 55, 69, 132,143
հոմանիշների շարք 55, 109, 154
Մակդիր 115
մակդրային կապակցություն 115
մեջբերում 104
միտք 85, 88, 104, 149
մնջախաղ 28, 56, 148
մուլտֆիլմ 36, 51, 75
Նախագծային աշխատանք 149
նախադասություն 30
պատմողական նախադասություն 25
հարցական նախադասություն 25
հրամայական նախադասություն 25
բացականչական նախադասություն 25
պարզ նախադասություն 30
բարդ նախադասություն 30
նամակ 44, 87, 105
նկարագրություն 52, 88, 115, 125
Շարժումների լեզու 21
շեշտ 36, 64, 118, 162,
բառային շեշտ 64
շեշտադրում 103
Ոտանավոր 149, 162
ազատ ոտանավոր 162
Չափազանցություն 12
չափածո 12, 72, 144, 146, 157
Պատմվածք 72, 84, 90
պատմություն 3, 83, 104, 148
պլան 15, 63, 99
Ռիթմ 158, 157,
Սղում 76, 81
սցենար 17
Վանկ 36, 60
բաց վանկ 63
փակ վանկ 63, 76
գաղտնավանկ 61, 76
միավանկ 62, 64
երկվանկ 61, 62
եռավանկ 62
բազմավանկ 83
մեկուկեսվանկանի 61
վենի գծակարգ 51
վերլուծություն 151
բառակազմական վերլուծություն 151, 161
վերնագիր 41
վերջաբան 12, 67
Տառ 36
տող 157
քառատող 146, 161
տուն 149
Օրինանք 14, 15, 16

Հավելված 3

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աղթամար կղզի 126
Ամարասի վանք 7
Ամիդ 5, 7
Աշոտ Երկաթ 164
Առտեր կղզի 126
Ասիա 32, 137, 138
Ասյա 105, 137
Աստված 77, 78, 164
Աստվածաշունչ 7, 15
Ավետիք Իսահակյան 54, 77, 114
Արագած 132, 154
Արածանի 142
Արարատ 9, 119, 164
Արաքս գետ 156
Արեգակ 133, 157
Արտաշես Ղազարյան 150, 155
Արցախ 136
Բելգիա 137
Բուլղարիա 137
Գեղամա լեռներ 164
Գևորգ Էմին 158
Գերմանիա
Գոտհոլդ Լեսինգ 54
Գրենլանդիա 137
Գրիմ եղբայրներ 26
Դանիել եպիսկոպոս 6
Եդեսիա 5, 7
Եզոպոս 54, 55, 56, 57
Եվրասիա 138
Երկիր 157
Զվարթնոց 128, 130, 131, 133,
Էդմոնդո դե Ամիչիս 101, 155
Էդվարդ Միլիտոնյան 5
Ժան դը Լաֆոնտեն 54
«Ինչ է, ով է» հանրագիտարան 99
Իվան Կռիլով 54, 68, 155
Իտալիա 137
Խաչատուր Աբովյան 54
Խաչիկ Դաշտենց 5
Խոսրով թագավոր 6
Կորյուն 7, 8, 54,
Համո Սահյան 116, 155
Հայաստան 5, 6, 72, 116, 136, 148, 150, 157, 161
Հանրի Զարյան 116
Հիսուսի առակներ 85
Հյուսիսային Ամերիկա 138
Հովիկ Վարդումյան 135
Հովհաննես Թումանյան 26, 48, 84, 91, 155
Հովհաննես Ղուկասյան 126
Հովհաննես Շիրազ 54, 62, 125, 146, 155, 161
Հռոփանոս 7
Ձիրավի դաշտավայր 142
Մալաթիա-Սեբաստիա 137
Մանուկների Աստվածաշունչ 15
Մասիս (Մասիսներ) 128, 132
Մատթեոսի Ավետարան 85
Մարո Մարգարյան 147
Մարտակերտ 135
Մարտիրոս Սարյան 150, 152
Մեծ Բրիտանիա 137
Մեսրոպ Մաշտոց 7, 8, 10,
Մխիթար Գոշ 54, 82,
Մկրտիչ Կորյուն 54
Մովսես Խորենացի 8
Նիագարա 138
Նիկոլայ Նոսով 125
Շառլ Պերրո 127
Ոսկեդար 8
Չարլի Չապլին 22
Պարույր Սևակ 131
Պռոշ թագավոր 13
Սահակ Պարթև 6
Սամոսատ 7
Սևան 132, 161, 164
Սիլվա Կապուտիկյան 5, 9, 10
Սյունիք 140, 156
Սողոմոնի առակներ 7
Սոֆիա 137
Սոֆյա 137
Ստեփան Զորյան 96
Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի 7
Սուրեն Մուրադյան 5
Սփյուռք 133
Վահագն Դավթյան 164
Վահան Տերյան 114
Վարդան Այգեկցի 54, 58, 79
«Վարք Մաշտոցի» 8
Վիգեն Խեչումյան 128
Վիկտորիա 137, 138
Վիկտորյա 105, 137
Վոլգա 127
Վռամշապուհ արքա 6
Տարոն գավառ 6
Օշական 7, 126
Օսկար Ուայլդ 128
Օրբելի եղբայրներ 128
Ֆրանսիա 137

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

Մեսրոպ Մաշտոցը և հայերենի տառերի ծնունդը 6

Խոսք իմ որդուն, *Միլվա Կապուտիկյան* 9

ԼԻՆՈՒՄ Է, ՉԻ ԼԻՆՈՒՄ

Ինչ է հեքիաթը 12

Ոսկու արտ *(հայկական ժողովրդական հեքիաթ)* 13

Նախադասություն 16

Հայրը և զավակները *(խորվաթական ժողովրդական հեքիաթ)* 18

Հաղորդակցում, տեսակները 21

Բանավոր և գրավոր խոսք 22

Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության և հնչերանգի 25

Անտառի տնակը, *Գրիմ եղբայրներ* 26

Նախադասության տեսակներն ըստ կազմության 30

Պարզ և բարդ նախադասություններ 30

Համառոտ և ընդարձակ նախադասություններ 30

Նախադասություն–բառ–հնչյուն 32

Հնչյունաբանություն: Հայերենի հնչյունները 36

Հնչյուն և տառ 36

Ձայնավոր հնչյուններ 42

Տառի, հեռախոսի ու համակարգչի վեճը, *Աննա Ադամյան* 42

Բաղաձայն հնչյուններ 47

Անխելք մարդը, *Հովհաննես Թումանյան* 48

Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 52

ԱՌԱԿՍ ԻՆՉ ԿՅՈՒՅԱՆԵ

Ինչ է առակը 54

Եղջերուն և խաղողը, *Եզոպոս* 55

Բարին ու չարը, *Վարդան Այգեկցի* 58

Բառ և վանկ 60

Հավերժական վեճը, *Հովհաննես Շիրազ* 62

Շեշտ. բառային շեշտ 64

Բառի կազմությունը: Պարզ և բարդ բառեր: Հոդակապ 67

Որսորդ առյուծը, *Իվան Կռիլով* 68

Ածանց: Ածանցավոր բառեր: Նախածանցներ և վերջածանցներ 70

Տունը *(հայկական ժողովրդական առակ)* 73

Հնչյունափոխություն 76

Է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը 76

Կաքավն ու աղվեսը, *Ավետիք Իսահակյան* 77

Ի ձայնավորի հնչյունափոխությունը 80

Ճնճղուկներն ու արագիլը, *Միխիթար Գոշ* 82

Ու ձայնավորի հնչյունափոխությունը 83

Երկհնչյունների հնչյունափոխությունը ... 84
Երեք ծառաների առակը, *Հիսուսի առակները* ... 85
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ ... 88

ԱԿԱՆՋ ԴՆԵՆՔ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ինչ է պատմվածքը ... 90
Գելը, *Հովհաննես Թումանյան* ... 91
Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության ... 94
Հոմանիշ բառեր ... 95
Շեկոն, *Ստեփան Զորյան* ... 96
Հականիշ բառեր ... 100
Ջուլիո, *Էդմոնդո դե Ամիչիս* ... 101
Համանուն բառեր ... 104
Մեր բակի պատմությունը, *Արթուր Մանուկյան* ... 106
Բառերի տեսակներն ըստ իմաստի: Մենիմաստություն և բազմիմաստություն ... 108
Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ ... 113
Մակդիր ... 115
Նա, *Հանրի Զարյան* ... 116
Ուղղախոսություն և ուղղագրություն ... 118
Ձայնավորների արտասանությունը և գրությունը ... 119
Է–Ե (119), Օ–Ո (126), Ը (133)
Համեմատություն ... 125
Ձվարթնոց, *Վիգեն Խեչումյան* ... 128
Անձնավորում ... 131
Երգը, *Հովիկ Վարդումյան* ... 135
Երկհնչյունների արտասանությունը և գրությունը ... 137
ՅԱ–ԻԱ– ԵԱ (137), ՈՒՅ–ՅՈՒ (140), ՈՅ, ՅՈ–ԻՈ (142)
Ամփոփիչ առաջադրանքներ ... 143

ԵՎ ԱՅՍՊԵՍ ՀՅՈՒՍՎՈՒՄ Է ԻՄ ԵՐԳԸ

Ինչ է բանաստեղծությունը ... 146
Մագաղաթի սրբությունով..., *Մարո Մարգարյան* ... 147
Տուն ... 149
Հայաստան, *Արտաշես Ղազարյան* ... 150
Բաղաձայն հնչյունների արտասանությունը և գրությունը ... 152
Բ–Պ–Փ (152), Գ–Կ–Ք (162)
Որոտանի կիրճում, *Համո Սահյան* ... 155
Ռիթմ ... 157
Մեր այբուբենը, *Գևորգ Էմին* ... 158
Հանգ ... 161
Մի փոշոտ, փափուկ ճամփա, *Վահագն Դավթյան* ... 164
Բացատրական բառարան ... 167
Առարկայացանկ ... 171
Անվանացանկ ... 173

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 5

5–ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Խմբագիր՝ Գայանե Խալաթյան
Նկարիչներ՝ Քարոլին Ռոստամի, Մարիետա Մարգարյան
Համակարգչային ձևավորումը՝ Աննա Համբարձումյանի
Կազմի ձևավորումը՝ Հայկազ Օհանյանի
Երաժշտությունը՝ Վարդան Գալստյանի
QR ծածկագրերը՝ Անի Պետրոսյանի

EDIT PRINT
43 D.Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am